

Zայ Սիրուն HAI SIRD



AN INTERNATIONAL PERIODICAL OF THE ARMENIAN RELIEF SOCIETY
ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ



The ARS Canada region with its 10 chapters proudly sponsors the 115th anniversary of the ARS “Hai Sird” special edition cover with a generous donation. ARS Canada is proud to be part of this exceptional humanitarian organization providing assistance wherever needed, preserving our cultural identity, promoting health, educating the youth, and empowering women. ARS Canada extends heartfelt wishes to the continued success of our global organization as we achieve our mission together.

ՀՕՍի 115-ամեայ յոբելինականի սեմին, ՀՕՍի Գանատայի միաւորը, իր տասը մասնաճիւղերով, մեծ ուրախութեամբ կը հովանաւորէ այս առթիւ ի լոյս ընծայուած «Հայ Սիրտ» պարբերականի բացառիկ թիւի կողքը, մաղթելով ՀՕՍի մեծ ընտանիքին յարաճուն վերելք եւ նորանոր նուաճումներ:



HAI SIRD ՀԱՅ ՍԻՐՏ

AN INTERNATIONAL PERIODICAL OF THE ARMENIAN RELIEF SOCIETY
ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ

Published By

The Central Executive Board of the Armenian Relief Society

Arousyak Melkonian, Chairperson, Western USA
Talin Daghlian, Vice-Chairperson, Eastern USA
Nayiri Balanian, Secretary, Eastern USA
Annie Kechichian, Treasurer, Western USA
Irma Kassabian, Bookkeeper, Eastern USA
Zoya Kocharyan, Advisor, Armenia
Nora Sevagian, Advisor, Australia
Arminée Karabetian, Advisor, Canada
Lisa Gillibert Tchalikian, Advisor, France
Siran Ambarjian, Advisor, Syria
Zharmen Mirzakhanyan, Advisor, Western USA

Hai Sird Editorial Board

Siran Ambarjian, CEB Liaison (Syria)
Armenian Editors: Suzy Kheshvadjian (Syria), Tamar Kasbarian (Armenia)
English Editors: Rita Hintlian (Western USA), Nairy Shahinian (Canada)

Specialist Support By

Armen Abdalian, CEB office, Watertown, MA, USA
rk Designs, Roubina Keushkerian, Cover Designer, Toronto, Canada
Nanar Avedessian, Graphic Designer, Boston, MA, USA
Marlin Digital Inc., Print Shop, Toronto, Canada
Lusakn Tparan, Print Shop, Yerevan, Armenia

Hai Sird is published by The Armenian Relief Society, Inc.
80 Bigelow Avenue, #300, Watertown, MA 02472-2012, USA
Online: www.ars1910.org

Copyright 2025, Armenian Relief Society, Inc. All rights reserved.
Reproduction in whole or in part, without permission, is prohibited.
The opinions expressed in “Hai Sird” are not necessarily those of the Armenian Relief Society.

Խմբագրական | Editorial 4-6

Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Օրհնութեան Գիր 7

ՀՅԴ Բիրօ 8

Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութիւն | ARS Central Executive Board 9-10

Համազգայինի Կեդրոնական Վարչութիւն 11

ՀՄԸՄի Կեդրոնական Վարչութիւն 12-13

Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդ 14

Նշանակելի Թուականներ Հայ Օգնութեան Միութեան 115 Ամեայ Պատմութեան Հնթացքին 15-23

Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութեան Ծրագիրներ 24-31

Թաթուլ Սոնէնց Փափազեանի Վաստակին 32-33

Honoring Tatul Sonentz-Papazian's Decades of Service to the ARS 34

Հարցազրոյց Օժիկ Գրիգորեանի Հետ, Չորս Տասնամեակներու Ծառայութիւն 35-37

Interview with Ojik Gregorian, ARS CEB's Financial Manager for Four Decades 38-39

Հայ Օգնութեան Միութեան Շրջաններ | ARS Regions (2010-2025)

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Շրջան | ARS of Eastern USA 41-51

Նայիրի Աղանանեան, 115-ամեակ Հայ Օգնութեան Միութեան 52

Alexandra Medina, The ARS Role 53

Lara Bogossian, Tsiran Chapter of Manhattan 53

Lynda Asadourian, ARS Lazarian Scholarship 53

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Շրջան | ARS of Western USA 54-60

Alique Kalachian, Graduates: Keep Your Eyes on Your Goals 61-62

Preny Alaverdian, A Message to High School Graduates 63

Աւստրալիոյ Շրջան | ARS Australia 64-71

Մարալ Շուկայեան Փիլիպոսեան, Ողջոյնի Խօսք ՀՕՄի 115-ամեակին եւ «Հայ Սիրտ»ի վերահրատարակման առիթներով 72-73

Գանատայի Շրջան | ARS Canada 74-81

Lalai Manjikian, 115 Years of Strength and Service: Reflections on the ARS 82-84

Լիբանանահայ Օգնութեան Խաչ | Armenian Relief Cross of Lebanon..... 85-89

ՀՕՄի Կեդրոնական Վարչութեան Ծրագիրներէն Փամանակակից

Յիշատակելի նկարներ | Recent Memorable Photographs of ARS CEB Global Programs 90-91

Նորա Բարսեղեան, Հաւատքով, Սիրով եւ Կամաւորութեամբ Ծնունդ Առած Միութեան Երթը Անկասելի Է 92-93

Հայաստանի Շրջան | ARS Armenia 94-99

Զոյա Քոչարեան, ՀՕՄ՝ Մշտավար Գթութեան Կանթել 100

Հարաւային Ամերիկայի Շրջան | ARS South America 101-103

TABLE OF CONTENTS

Խաչիկ Տէր Ղուկասեան, ՀՕՄի Քաղաքական Առաքելութիւնը. Հայ Կնոջ Հզօրացումը104-106

Մակեդոնիոյ Եւ Թրակիոյ Հայ Գթութեան Խաչ (Յունաստան) | ARS Macedonia & Thrace (Greece) ..107-108

Յովիկ Գասասպեան, Ազգային Դարբնոց Մեր ՀՕՄը 109

Յունաստանի Հայ Կապոյտ Խաչ (Աթէնք) | Armenian Blue Cross of Greece (Athens) 110-112

Նորա Քիրոսողլեան Գոյումճեան, Համահայկական, Բարեսիրական եւ Անքակտելի
Շղթայի Մը Օղակները 113-114

Պուլկարիոյ Շրջան | ARS Bulgaria 115-118

Sona Hangikian, Looking Forward to the Future 119

Սուրիահայ Օգնութեան Խաչ | Armenian Relief Cross of Syria 120-126

Ջարմիկ Պողիկեան, Փորձառութիւն Կուտակելով Նորոգուող Կազմակերպութիւնը 127-128

Ֆրանսայի Հայ Կապոյտ Խաչ | Armenian Blue Cross of France 129-131

Béatrice Ananian, Mon hommage à HOM, Mon respect à l'ARS 132-133

Պիաթրիս Անանեան, Պատիւ Ու Յարգանք Հայ Օգնութեան Միութեան..... 134-135

Հայ Օգնութեան Միութեան Մեկուսի Մասնաճիւղեր | ARS Chapters-at-Large

Արցախ | Artsakh 137-139

Գերմանիա | Germany 140-141

Երուսաղէմ | Jerusalem 142-143

Ջուիցերիա | Switzerland 144-145

Կիպրոսի «Սօսէ» Մեկուսի | «Sosse» Chapter-at-Large of Cyprus 146-148

Հայ Կարիքի Խաչ - Գահիրէ (Եգիպտոս) | Cairo Armenian Women's Society (Egypt) 149-151

Հոլանտայի «Շուշի» Մեկուսի | Netherlands «Shoushi» Chapter-at-Large 152-154

Մեծն Բրիտանիա | Great Britain 155-156

Յորդանան | Jordan 157-159

Պելճիքայի «Արազ» Մեկուսի | Belgium Araz Chapter-At-Large 160-162

Ջաւախք (Վրաստան) | Javakhk (Georgia) 163-165

Ռուսաստանի Հայ Կանանց Միութիւն | Armenian Women's Society of Russia 166-168

Սթոքհոլմի Մեկուսի (Շուէտ) | Stockholm Chapter-at-large (Sweden) 169

Սոտէրթալիոյ «Ախթամար» Մեկուսի (Շուէտ) | Sodertalje Akhtamar Chapter-at-Large (Sweden) ... 170-171

Քուէյթ | Kuwait 172-175

Ի Յիշատակ Կեդրոնական Վարչութեանց Հանգուցեալ Ընկերուհիներուն | A Tribute in Memoriam of ARS Central Executive Board Members 176

Կեդրոնական Վարչութեանց Անդամներու Անուանացանկ (2010-2025) | List of ARS Central Executive Boards (2010-2025) 177

Ալին Մումճեան, ՀՕՄի Լոյսը - ՀՕՄի 115-ամեակին նուիրուած 178

Յարգանք Էտկար Ակնունիի Յիշատակին | Edgar Agnoui Remembered 179

«ՀԱՅ ՍԻՐՏ»Ի ԲԱՑԱՌԻԿ ԹԻԻՆ ԱՌԹԻ... «հայ Սիրտ»-ի բացառիկ թիւին առթիւ...

«Հայ Սիրտ» Պարբերաթերթի Խմբագրակազմ

2023ին ՀՕՄԻ նորընտիր Կեդրոնական Վարչութիւնը յառաջացուց «Հայ Սիրտ» պարբերաթերթի յանձնախումբը, որուն անդամները յանձնառութիւն ստանձնեցին հրատարակելու գրքոյկ մը՝ նուիրուած Հայ Օգնութեան Միութեան 115 ամեայ գոյերթին: Յանձնախումբի անդամները, Հայաստանէն, Միջին Արեւելքէն, Միացեալ Նահանգներէն եւ Գանատայէն, արհամարհելով մղոններու հեռաւորութիւնը, համախմբուեցան ՀՕՄԻ դրօշին ներքեւ եւ մշակեցին յատուկ աշխատելառձ՝ ի լոյս բերելու «Հայ Սիրտ»-ի բացառիկ թիւ մը: Սոյն թիւին մէջ հիմք ունեցանք ՀՕՄԻ աշխարհասփիռ միաւորներէն ու մեկուսիներէն յղուած զեկոյցները, ինչպէս նաեւ ՀՕՄականներու կողմէ առաքուած եւ միութեան 115 ամեակին նուիրուած յօդուածներ:

Տարիներու ընթացքին ՀՕՄԻ հրատարակութեանց պատասխանատուն հանդիսացած է ընկեր Թաթուլ Սոնենց-Փափագեան, որ խմբագրած է նաեւ «Հայ Սիրտ» պարբերաթերթը, նոյնիսկ անոր բովանդակութիւնը ճարտարօրէն երկլեզուի (հայերէն-անգլերէն) վերածած ու հրատարակած: Սակայն ընկերոջ վերջին տարիներուն հանգստեան կոչուելուն պատճառաւ, յանձնախումբիս ուսերուն բարդուեցաւ ծանր մարտահրաւէր մը՝ կեանքի կոչել ՀՕՄԻ 115 ամեակին նուիրուած յուշամատ-

եան գրքոյկը: Եւ սկիզբ առաւ աշխատանք մը, որ լուսարձակ պիտի բանար միութեան յատկապէս վերջին տասնհինգ տարիներու գործունէութեան վրայ:

85 տարիներ ճամբայ կտրած «Հայ Սիրտ»-ի իրաքանջիւր թիւ, երբ կը տրամադրուէր երէց ընկերուհիներուն, կը դարձէր սովորական պարբերաթերթ մը ըլլալէ ու կը դառնար թանկագին մասունք, ուրկէ իրաքանջիւր ՀՕՄուհիի կը ներարկուէր նոր շունչ եւ աւին: Այսօր, այս հրատարակութեամբ, մենք եւս կը միանանք աւագ սերունդին, կը զօդուինք իրարու աներեւոյթ, բայց ամուր ու անքակտելի կապով: Քանզի «Հայ Սիրտ»ը կը շարունակէ մեր մէջ վառ պահել պատկանելիութեան զգացումը եւ աւանդոյթներու պահպանման գիտակցութիւնը:

Պարբերաթերթը, յօդուածներու միջոցաւ, ընթերցողը կը ծանօթացնէ ՀՕՄԻ առաքելութեան ու անոր աշխարհասփիռ միաւորներուն եւ մեկուսիներուն ծաւալած ազգանպաստ գործունէութեան: Եւ աւելին... Հայ Սիրտը այն ոսկեայ օղակն է, որ կը կամրջէ ՀՕՄուհիները, հասնելով նոյնիսկ օտար հարթակներ: Եւ ահաւասիկ ա՛յս գաղափարին կ'ակնարկէ ընկեր Թաթուլ, երբ կ'ըսէ «ՀՕՄը հայկական այն կայսրութիւնն է, ուր արեւը մայր չի մտներ»: Այսօր, մենք եւս, որպէս ՀՕՄականներէ բաղկացած խմբագրակազմ, շարունակող-

ներն ենք այս աւանդին: Ուրախութեամբ կը յայտնենք նաեւ, թէ խմբագրական կազմէն երկու ընկերուհի մեծ հաճոյքով կարգ մը հայերէն գրութիւններ թարգմանեցին անգլերէնի զանոնք հասանելի դարձնելու աւելի լայն շրջանակներու:

Միութեան հիմնադրութեան առաջին դարու ծովածաւալ գործունէութիւնը հանգամանօրէն պատկերուած է ՀՕՄի հարիրամեակին նուիրուած յուշամատենին մէջ, հրատարակուած՝ 2010ին: Միութեան վերջին տասնհինգ տարիները եւս զերծ չէին համազգային աղէտներէ՝ պատերազմներ, երկրաշարժեր, պայթումներ եւ նոյնիսկ տեղահանութիւն: «Հայ Սիրտ»ի այս համարին մէջ ընթերցողը պիտի ծանօթանայ, թէ ինչպէ՛ս ՀՕՄը գթառատ մօր կարեկցանքով, օժանդակութեան ձեռք երկարած է աղէտալի շրջաններուն: Վկայ Լիբանանի, Սուրիոյ եւ Արցախի միաւորներուն միջոցաւ հայ ժողովուրդի զաւակներուն նկատմամբ ՀՕՄի ցուցաբերած անվերապահ աջակցութիւնն ու անուրանալի նեցուկը:

Սիրելի՛ ՀՕՄական ընկերուհի,

Ներկայիս կ'ապրինք ճարտարագիտական զարգացման սրընթաց դարաշրջանի մէջ, ուր օրէ օր տպագիր հրատարակութիւնը նահանջ կ'արձանագրէ իր տեղը զիջելով էլեկտրոնային տարբերակին: Այնուհանդերձ, պարբերաթերթի սոյն համարին տպագիր օրինակները, սահմանափակ թիւով, պիտի տրամադրուին միաւորներուն եւ մեկուսիներուն, մինչ էլեկտրոնային տարբերակը պիտի զետեղուի միութեան կայքէջին, ինչպէս նաեւ ընկերային ցանցերու էջերուն:

ՀՕՄի ապագան լուսաւոր է այսօր աւելի քան երբեք, քանզի երէց սերունդը պատրաստակամ է ջահը փոխանցելու նորահաս սերունդին՝ յանուն միութեան բարգաւաճման ու վերելքին:

Հայ Օգնութեան Միութիւնը պիտի շարունակէ մնալ առաջատար իր դիրքով, համահունչ արդիականութեան, միշտ գործելով ժողովուրդին հետ, ժողովուրդին համար:

Ժողովուրդիս հետ Ժողովուրդիս համար

Message From the Editors

Message From the Editors

“Hai Sird” Editors

Dear Reader,

A year and a half ago, the ARS Central Executive Board (CEB) appointed the Hai Sird Committee to commemorate the 115-year anniversary of the Armenian Relief Society. The appointees were represented from Armenia, Middle East, USA and Canada. These ARS members with limited working knowledge about each other had to develop a new dynamic for creating an ARS Hai Sird issue based on reports submitted from regions and chapters at large, along with selected articles from global members.

Unger Tatul Sonentz-Papazian had spearheaded the publication with informative content and attractive layout of the Hai Sird for decades. The bar was set very high, but we are collectively proud of this issue.

Hence, this committee took on a huge challenge to work globally to bring this commemorative booklet to life. And here it is... a window into the ARS, focusing mostly on the last 15 years.

Looking back 85 years ago, when our grandmothers and mothers, who were proud members of the ARS, had an opportunity to obtain a copy of the Hai Sird, it was a precious booklet to hold, to read and to share.

Collectively, the memories that we share with our older generation, is that the Hai Sird symbolizes a sense of belonging, tradition, compassion and connecting the reader to the ARS mission worldwide through articles representing accomplishments and development of the Diaspora communities.

Today, as third and fourth generation ARS members-turned-editors, proudly continue this heritage by contributing to this publication. We

sincerely enjoyed translating much of the material written primarily in Armenian and we hope that you too will enjoy reading many of the interesting articles and ARS entity stories.

On the pages of this issue, you will see how this exemplary organization has existed, faced its challenges, and continues to thrive 115 years later. During the last 15 years, the ARS suffered but persevered through wars, earthquakes, explosions and the displacement of our Artsakh compatriots. Through it all, you will read about how with each tragedy, the ARS with utmost tenacity extended a compassionate helping hand to all those in need.

Today, we embrace the technological age, where the Hai Sird will arrive in your physical and electronic mailboxes and social media feeds. We've come a long way from the early years of distributing the Hai Sird hand to hand.

We are confident today knowing that the future of the ARS is in good hands, as younger members take on leadership roles and face the challenges of the day; our organization's collective success is inevitable.

The Armenian Relief Society will continue to remain vibrant and progressive by enhancing our traditions and adapting to changes in our mandates, so that future generations can continue to achieve our mission, “With the People, For the People.”

*With the People
For the People*



ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՄԲ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՇՆՈՐՀՔ, ՄԷՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ Ի ՏԵԱՌՆԷ ԵՒ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ՄԷՆՁ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՅԱԶՈՅ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐԶԻՆ

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

ԱՌ-

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՈՐ Ի ՊՈՍԹԸՆ, Ի ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն Հայրապետական օրհնութեամբ, քրիստոնէական ջերմ սիրով ու ազգային վառ ապրումներով կ'ողջունենք Հայ Օգնութեան Միութիւնը, իր հիմնադրութեան 115-ամեակին առիթով:

Արդարեւ, 115 տարիներ շարունակ ՀՕՄ-ը առանցքային ներկայութիւն դարձաւ մեր ժողովուրդի կեանքէն ներս՝ իր ամբողջանուէր ծառայութեամբ: «Ժողովուրդին հետ, Ժողովուրդին համար» նշանաբանը ՀՕՄ-ին համար սոսկ լոգունք չեղաւ, այլ՝ մնայուն տազնապ ու գիտակից յանձնառութիւն: Ժողովուրդի գիրկէն ծնած ու անոր կարիքներուն ընդառաջ ծրագրելու ու ծառայելու կոչուած ՀՕՄ-ը միշտ մնաց հայ կեանքի մայր էջին վրայ՝ բոլոր տազնապները համապատասխան կերպով դիմագրաւելու իր ամուր հաւատքով ու յանձնառութեամբ:

Այսպէ՛ս ճանչցանք ՀՕՄ-ը Հայաստանի ու Սփիւռքի մեր զաղութներէն ներս: Հոն ուր տազնապ կար, հոն էր ՀՕՄ-ը օժանդակելու ու ծառայելու պատրաստ: Իր ժողովուրդին հետ նոյնացած ՀՕՄ-ը առանց խտրութեան ու վարանումի տարիներ շարունակ միայն ծառայեց՝ անմնացորդ ծառայութեան մէջ տեսնելով իր ինքնութիւնը, կոչումը ու հզօրութիւնը:

ՀՕՄ-ի հիմնադրութեան 115-ամեակի նշումը վստահաբար առիթ մը պիտի հանդիսանայ ՀՕՄ-ին համար յատկապէս ապագային նայելու եւ առաւել կազմակերպ ու ազդու կերպով իր ծառայական ուխտը վերանորոգելու: Աստուածահաճոյ գործ է որ կը կատարուի ՀՕՄ-ին կողմէ: Արդարեւ, ահաւոր տազնապներ կը շրջապատեն մեր ժողովուրդի կեանքը Հայաստանի թէ Սփիւռքի մէջ: Հետեւաբար, ատելի քան երբեք հրամայական է ՀՕՄ-ի ծառայութիւնը:

Այս առիթով, Մեր հայրական բարձր գնահատանքը կը յայտնենք ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան եւ բոլոր անդամներուն: Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի զաւակներուն, յատկապէս բարերարներուն, որ միշտ զօրավիզ կանգնին ՀՕՄ-ի ծրագիրներուն ու աշխատանքներուն, որոնք կը հետապնդեն մէկ նպատակ՝ անխտրական ոգիով ծառայել մեր ժողովուրդին:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Իր երկնային օրհնութեամբ պահպանէ ՀՕՄ-ը իր ծառայական առաքելութեան մէջ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուա Օրհնութեան գիրս այս
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 19-ն Յունիսի, 2025 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆՀԳ.*



ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԻՒՐՕ
ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION-DASHNAKTSUTYUN BUREAU

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Սիրելի՛ ընկերուհիներ,

Յոթելեանի ուրախալի առիթով շնորհատրում եմ Հայ Օգնութեան Միութեան աշխարհատարած կառոյցի բոլոր անդամներին: Դարից աւելի ձգուող պատկառելի կենսագրութեամբ ՀՕՄ-ը, որպէս այդպիսին, քչերից մէկն է հայ իրականութեան ծնունդ ազգային-հասարակական կազմակերպութիւնների շարքում:

Այո, այդ կենսագրութիւնը պարզապէս ասրուած ժամանակահատուած չէ, այլ նուիրում, գոհաբերութիւն, անգնահատելի վաստակ: Հայ Օգնութեան Միութիւնը հայ կեանքի օրուայ առաջնորդող ուժի ջանքերով հիմնանդրուեց պատմական դժնդակ պահի՝ ծառայելու ծանր փորձութիւնների բովով անցնող հայ ժողովրդի կենսական կարիքներին: Եւ այսօր, տարիների բարձունքից նայելով միութեան անցած ճանապարհին, հպարտութեամբ կարող ենք արձանագրել, որ ՀՕՄ-ն իր առաքելութիւնը իրականացրել է լիարժէքօրէն՝ եւ անմնացորդ: Նրա այդ անսակարկ ու անկեղծ նուիրումը, արգասաբեր գործունէութիւնը ըստ արժանոյն են գնահատուել ո՛չ միայն հայ ժողովրդի այլեւ օտարների կողմից: Գործով նուաճուած ՀՕՄ-ի հեղինակութիւնն էլ հիմնական աղբիւրն է անվերապահ վստահութեան եւ գրաւականը հետագայ անխափան ընթացքի:

8 |

Հայ Օգնութեան Միութեան առջեւ գործունէութեան նոր եւ ընդարձակ ասպարէզ բացուեց Հայաստանի եւ Արցախի անկախացման եւ պետականութիւնների կայացման հետ: Անցնող գրեթէ 35 տարիները փաստում են, որ այս մարտահրաւերներին եւս հայոց բարեսիրական առաջնային կազմակերպութիւններից մէկը գտնուեց պատրաստ, իր բարոյական ու նիւթական աջակցութեամբ հսկայական ներդրում ունեցաւ եւ նուաճեց հայրենի ժողովրդի անվերապահ վստահութիւնն ու համակրանքը:

Պէտք է արձանագրել, որ 115-ամեայ միութիւնը իր երկրորդ դարը յաղթահարում է նոյնպիսի երիտասարդական աւիւնով ու անընկճելի հաւատով այն նպատակի հանդէպ, որը ծնել, գործի է մղել ու առաջնորդում է նրան:

Կրկին անգամ շնորհատրելով ՀՕՄ-ի յոթելեանի առիթով, ցանկանում ենք, որ երբեք չնուազի ՀՕՄ-ի ընկերների եռանդը կամաւորապէս որդեգրած ծաւալուն ծրագրերը կեանքի կոչելու հարցում, միշտ հաւատալով, որ ազգանպաստ գործը, իւրաքանչիւր կարիքատր հային օգտակար լինելու ձգտումը ճշմարիտ դաւանանքն է մեր հաւաքական իղձերի իրականացման ճանապարհին:

Արմէն Աուստամեան
Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ



«ՀԱՅ ՍԻՐՏ»Ի ՄԻԶՈՑՈՎ՝ ՄԵՐ ՇԱՐՔԵՐՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ

ՀՕՄԻ Կեղրոնական Վարչություն

Օ առայսաիրությունը եւ կարիքատրին օգնութեան ձեռք երկարելը Աստուածային շնորհներ են, որոնք մարդը կ'ազնուացնեն: Բարեսիրությունը եւ կամատր աշխատանքը՝ միաձուլելով կարեկցութեան, մարդը կը մօտեցնեն համամարդկային արժէքային այնպիսի համակարգի մը, ուր անձնականն ու եւր իրենց տեղը կը զիջին հաւաքականին: Այս իմաստով Հայ Օգնութեան Միութիւնը իր կոչումին համարժէք հեղինակութիւն ունի եւ իրաւամբ իր 115 ուղիին վաստակով արժանացած է իր կոչումին:

Մեր կազմակերպությունը ամէն բանէ առաջ Բարեսիրութեան եւ Բարեգործութեան ռահ-վիրայ մըն է: Իր հիմնադրութեան առաջին իսկ օրէն, հաւատարմօրէն եւ անսակարկօրէն ծառայելով հայ ժողովուրդին, շահած է անոր յարգանքն ու սէրը եւ վերածուած է կարիքատրներու խնամատար եւ հոգատար մօր, որ վեհանձնօրէն եւ անձնուիրաբար կը ծառայէ, առանց ակնկալութեան:

Մեր կազմակերպութեան շարքերը՝ հաւատարմօրէն քայլելով ՀՕՄԻ առաքելութեան ուղիէն, իրենց անկարելին կարելիի դարձնելով, ցուցաբերած են այնպիսի տոկոնութիւն եւ կամք, որ շատ յաճախ զարմացուցած են, յատկապէս երբ իրականացուցած են շատերուն համար անիրագործելի թուացող ծրագիրներ: ՀՕՄԻ պատմութեան վրայ հպանցիկ ակնարկ մը իսկ բաւարար է հաստատելու այս իրականութիւնը:

115 ամեակը նաեւ պատասխանատուութիւններու, դերակատարութիւններու եւ առաքելութիւններու հայեցակարգի վերահիմաստաւորման, վերարժեւորման եւ ապագայ ուղեգիծի ճշդման լաւ առիթ մըն է, աշխարհակարգի մը մէջ, ուր նիւթը եւ նիւթականացած մտածողութիւնը կը թուի, թէ յաղթանակներ կ'արձանագրեն:

Այդպէս չէ սակայն իրականութիւնը եւ ասոր վկան Հայ Օգնութեան Միութեան 115 ամեայ վաստակը, ծառայական առաքելութիւնը եւ ապագայի տեսլականն են: Տուեալներ, որոնք մեր միութեան կու տան թեւ ու թռիչք, ծառայելու եւ գործելու նոր ալիւն եւ լիցք: Հայ Օգնութեան Միութիւնը՝ իր հիմնադիրներուն եւ վեթերաններուն տեսիլքը վերածած է ուղեցոյցի, որուն հետեւելով, մեր անդամները գլխաւոր Գործին համար կու տան իրենց առաւելագոյնը, որպէսզի հայ ժողովուրդը եւ մեր հայրենիքը, ինչպէս նաեւ Սփիւռքի մեր գաղութները դիմագրաւեն դժուարութիւնները եւ յաղթահարեն մարտահրաւիրները: Այս բովանդակութեան մէջ առաւել կը շեշտուի ՀՕՄԻ համահայկական պատասխանատուութիւնը:

Ուխտը վերանորոգելու եւ հայավայել թափով ու սլացքով նոր ամեակներ նուաճելու յանձնառութիւնը կը պատկանի մեզմէ իւրաքանչիւրիս: Մանաւանդ ՀՕՄԻ առաքելութեան ջահը ստանձնելու պատրաստ մեր երիտասարդ կամաւորներուն, որոնց ներդրումը եւ մասնակցութիւնը հոգեկան մեծ բաւարարութիւն պիտի տայ վաստակաշատ սերունդին, թէ 115 ամեայ կազմակերպութեան երթը անխափան պիտի շարունակուի: Սերունդներու իրարայաջորդութիւնն է, որ կ'երաշխատուի առաքելութեան շարունակականութիւնը եւ Հայ Օգնութեան Միութեան յաջողութեան գրաւականներէն մին ալ մեր հիանալի երէց սերունդին հոգատարութիւնն է՝ հանդէպ երիտասարդ անդամներուն: Այսպէս է մեր շարքերուն դաստիարակութիւնը եւ կը վստահեցնենք, որ նոյն ձեւով ալ պիտի շարունակուի, ի շահ հայութեան, Հայաստանին, Սփիւռքին եւ վիրատր բայց վերընձիւղման տեսլականը իր սրտին մէջ պահող Արցախին:

Բարի երթ մեր կազմակերպութեան:
Վարձքը կատար բոլորին:



Through ‘Hai Sird’ - To Our Ranks, For the Armenian Nation

Armenian Relief Society Central Executive Board

Acts of service and extending a helping hand to those in need are noble expressions of our shared humanity. When charity and volunteerism are rooted in compassion, they elevate the individual beyond personal interests and connect them to a greater, universal set of values. In this spirit, the Armenian Relief Society has exemplified these ideals for 115 years—earning not only its name but also the deep respect that comes with unwavering dedication to community and humanitarian endeavors.

From its founding day, our organization has been a pioneer in charity and philanthropy. It has served the Armenian people faithfully and unconditionally, earning their enduring love and admiration. To those in need, the ARS has become a nurturing presence—a compassionate, selfless figure who gives with grace and expects nothing in return.

By remaining true to the ARS mission, our members have consistently made the impossible possible. Through remarkable resilience and unwavering determination, they have accomplished initiatives once thought unattainable—often leaving others in awe. Even a brief look at our history affirms this enduring truth.

The 115th anniversary presents a fine opportunity to reflect on our responsibilities, roles, and mission. It is a moment to reevaluate our principles and chart our future path—especially in a world where materialism and self-interest seem increasingly prevalent.

Yet this is not the full picture. The true legacy lies in 115 years of tireless service—a legacy defined by an unwavering mission and a forward-looking vision.

These core values continue to drive our Society, inspiring renewed purpose and sustained action.

The ARS has transformed the dreams of its founders and the dedication of its early members into a beacon that still guides us. Inspired by this light, our members give their all to the greater Cause—so that the Armenian people, our homeland, and our Diaspora communities may overcome challenges with strength and resilience.

In this light, the ARS’s pan-Armenian responsibility is not only evident—it is essential.

It is incumbent upon each of us to reaffirm our commitment: to honor our oath and strive toward future milestones with dignity, purpose, and resolve. In this ongoing mission, the role of our young volunteers is paramount. As they step forward to carry the torch of the Armenian Relief Society, their active engagement offers profound reassurance to our elder generations—affirming the continued vitality of our 115-year-old organization.

The succession of generations is not merely symbolic—it is the cornerstone of our continuity. One of the fundamental pillars of the ARS’s enduring success lies in the mentorship and dedication extended by experienced members to the youth. Through this intergenerational bond, we foster growth, leadership, and a shared sense of purpose.

This is how our mission endures—and how it shall continue: in service to the Armenian people, the Republic of Armenia, the Diaspora, and Artsakh—wounded, yet steadfast in its vision of renewal and hope.

Wishing continued success to our organization.
With sincere gratitude to all.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ
HAMAZKAYIN ARMENIAN EDUCATIONAL AND CULTURAL SOCIETY



ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
CENTRAL COMMITTEE

ՀՕՄ-Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 115-ԱՄԵԱԿ

Սիրելի ընկերուհիներ,

Մեր ուղեկից միութիւններէն աագր՝ Հայ Օգնութեան Միութիւնը 115-ամեայ է:

Հայ ժողովուրդի պատմութեան տարբեր հանգրուաններուն, անոր կողքին եղած ու բազում կարիքները հոգացած Հայ Օգնութեան Միութեան հիմնադրութիւնը բնաւ պատահականութեան արդիւնք չէ, այլ բնական ծնունդը՝ մեր հիմնադիր սերունդի պայծառամտութեան ու զգօնութեան, որ գիտակցելով հայ կնոջ կարեւոր դերին, անոր յանձնեց վեհ պարտականութիւն:

Հայ Օգնութեան Միութիւնը իր «Ժողովուրդիս հետ, ժողովուրդիս համար» կարգախօսով կրցաւ հասնիլ անտէրին, անկարին, այրիին ու որբին: Անցնող 115 տարիներու ընթացքին, ՀՕՄը տարագրուած ու ապա սփիւռք դարձած հայ ժողովուրդին հոգածու մայրը եղաւ, իսկ հայրենիքի վերանկախացումէն առաջ հասաւ Հայաստան, ուր ունեցաւ առանցքային դերակատարութիւն, փորձելով թեթեւցնել հայրենի ժողովուրդին բեռը մութ ու ցուրտ տարիներուն, ապա Արցախի ժողովուրդի բռնի տեղահանման օրերուն եղաւ անոր կողքին եւ մինչեւ այսօր այդ դերին մէջ է:

Իսկ այսօր երբ կարիքները բազմապատկուած են ու մարտահրաւիրները փոխուած՝ Հայաստանէն Միջին Արեւելք, Եւրոպայէն Ամերիկաներ եւ Աստորալիա, ՀՕՄը կոչուած է դարձեալ մնալու պատմէշի վրայ, մշտանորոգ աիշ ներարկելու համայն հայութեան:

Ձեր վարձքը կատար սիրելիներ: Թող Ձեր երթը ըլլայ հարթ ու աշխատանքները հեզասահ, իսկ խոչընդոտները՝ միշտ յաղթահարելի:

Ձերմ բարեւներով՝

Համագայիկի
Կեղրոնական Վարչութիւն
Համազգային
HAMAZKAYINE
Association Arménienne pour l'éducation et la Culture

Լ. Մատուրեան
Բարտուղար

Չ. Քէշիշեան
Առեւապետ

| 11



115 ՏԱՐԻ ՆՈՒՐՈՒՄ, ԶԱՆՔ ԶՈՇՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՍՔ

ՀՄԸՄԻ Կեղրոնական Վարչություն

12 |

Ուրախություն է վկայել ՀՕՄԻ մասին: Ուրախությունը կը ծնի այն բարիքն էլ գուրգուրանքն, զոր մեր ժողովուրդին կու գայ ՀՕՄԻ ճամբով:

Միաժամանակ, պատիւ է վկայել ՀՕՄԻ մասին: Կազմակերպութեան մը մասին, որ 115 տարուան ծառայութիւն ունի հայութեան: 115 տարին քիչ ժամանակ չէ:

115 տարի կ'ըսենք եւ տարիներէն իւրաքանչիւրին մէջ կը տեսնենք հազարաւոր ՀՕՄ-ականներու նուիրումը, ջանքը, զոհողութիւնն ու կամքը:

115 տարի կ'ըսենք եւ տարիներէն իւրաքանչիւրին մէջ խտացուած կը տեսնենք բիւրաւոր կարօտեալներու, դպրոցականներու, որբերու, որբեւայրիներու, ծերունիներու աղօթքն ու օրհնութիւնը:

Ո՛վ չէ վայելած ՀՕՄԻ բարիքները: Ո՛վ ծանօթ չէ հայ իրականութեան կնոջական, բարեսիրական այս մեծագոյն կազմակերպութեան, որ 115 տարիէ կը գործէ անխըտրակա՛ն ոգիով, կրթական, դաստիարակ-

չական, խնամատարական եւ ընկերային իր ծառայութիւններով հասնելով բոլորին:

Սերունդներ կրնան հաստատել, թէ ինչպէ՛ս ՀՕՄը սրբեց հայ որբին արցունքը, հայ մօր տուաւ ինքնաճանաչումի զէնքը, ժպիտ տուաւ հայ ծերունիին, դէղ ու դարման՝ հայ հիւանդին, սպեղանի՝ հայ գաղթականին: Ան հասաւ բոլորի՛ն. սփիւռքահայուն թէ հայրենի հայուն: Ու երբ համազգային պահանջը ներկայացաւ, ան հասաւ նաեւ հայրենի հայուն՝ Հայաստան աշխարհ, Արցախ թէ Զաւախք:

ՀՕՄը տուաւ բոլորին: Ու որքան տուաւ ան՝ այնքան աւելի հարստացաւ իբրեւ կազմակերպութիւն, իբրեւ առաքելութիւն եւ իբրեւ իր սեփական ժողովուրդին հանդէպ հաւատարմութիւն ունեցող կանացի շարժում:

ՀՕՄը տուաւ անսահման սիրով ու հաւատքով, այդ պատճառով ալ անոր տուածը դադրեցաւ միայն նիւթական արժէք ըլլալէ, դարձաւ հոգեւոր բալասան, ազգային բարիք:

ՀՕՄը տուաւ առանց բարոյական նուաստացումի ու առանց կասկածելի պարտադրանքի ենթարկելու իրեն դիմողները: Իրեն կատարուած դիմումներուն ան ընդառաջեց մայրական հոգատարութեամբ, միշտ նախանձախնդիր՝ հայ մարդուն արժանապատուութեան եւ պատիւին պահպանման:

Այսօր, նոր պայմաններու եւ մարտահրաւերներու դէմ յանդիման կը գտնուի ՀՕՄը: Նոր օրերը կը պարտադրեն նոր դժուարութիւններ եւ կը ստիպեն որոնել զանոնք յաղթահարելու նոր միջոցներ:

Բազմացած են մեր կեանքի դժուարութիւնները: Աւելցած են հայ կնոջ դիմագրաւած մարտահրաւերները: Ունինք ընտանեկան սրբութիւնները պահպանելու հարց, ազգային-աւանդական մեր արժէքները պահելու հարց, հայր հա՛յ պահելու հարց, յոռի բարքերու դէմ դնելու հարց, ընկերային-տնտեսական տագնապներու դիմագրաւման լուրջ հարց, եւ տակաւին բազմաթիւ հարցեր ու հարցեր:

Ընդունինք, որ ուժերը պակսած են, սակայն խոստովանինք նաեւ, որ կո-

չումն ու առաքելութիւնը կը մնան միեւնոյնը: Կը մնայ կամքը եւ յաջողութեան պարզ գաղտնիքը. ՀՕՄականներու աշխատանքը, նուիրումը, ծառայութիւնը եւ ԳՈՐԾԸ:

Ուժերու եւ կարելիութիւններու զօրաշարժ պէտք է, ու բոլորս ընելիք ունինք այս իմաստով, կաթիլ-կաթիլ ՀՕՄին մեր նուիրաբերած լուծանքով մասնակցելու մեր ծով կարիքներու բաւարարման, ընդհանրական մեր դրժուարութիւններու լուծման եւ ազգային կեանքի վերելքին:

ՀՕՄի 115 ամեակի տօնակատարութիւնը այս իմաստով պատգամ մը կը թելադրէ մեզի: Պատգամ եւ կոչ՝ ընելու ամէն ինչ, դիմելու ամէն միջոցի, որպէսզի ՀՕՄը, իբրեւ օրհնութիւն, անպակաս ըլլայ մեր տուններէն, դպրոցներէն եւ սկումբներէն: Շարունակէ ծառայել ան իր ժողովուրդին, ինչ որ իր գոյութեան նախապայմանն է: Զօրանայ, երիտասարդանայ, ամրանայ եւ մեծանայ՝ Հաւաքական մեր կեանքին համար, Հայութեան եւ Հայաստանի՛ն համար:

Հաւաքական մեր կեանքին համար,

Հայութեան եւ

Հայաստանի՛ն համար:



ARMENIAN EVANGELICAL WORLD COUNCIL
ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ
CONSEIL MONDIAL EVANGELIQUE ARMENIEN

... that they may be one (John 17:11) ... որպէսզի անոնք մէկ ըլլան (Յովհ. 17.11) ... afin qu'ils soient un (Jean 17:11)

Պատուարժան Կեղրոնական Վարչութիւն ՀՕՄ-ի

Յանուն Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդին, կը շնորհաւորենք Հայ Օգնութեան Միութիւնը (ՀՕՄ)–ը, իր 115-րդ տարեդարձի բարեբաստիկ առիթով

ՀՕՄ-ը մարդասիրական եւ հայանուէր կազմակերպութիւն մըն է, որուն գլխաւոր նպատակը եղած է եւ կը մնայ հայապահպանում Անցնող տասնամեակներուն, ան իր օգնութիւնը բերած է, եւ կը շարունակէ բերել, հայ որբին, այրիին, հիւանդին ու չքաւորին, հայ ուսանողին ու հայ զինուորին ու տարագիրին:

ՀՕՄ-ը լման 115 տարիներ աշխարհի տարբեր ցամաքամասերուն վրայ գործող իր բազմահազար անդամներով, դրապէս եւ գործնականօրէն, պատասխանած է հայ ժողովուրդի հաւաքական գոյութեան համար իրեն ուղղուած կոչերուն լուրջ յանձնառութիւններ եւ պատասխանատուութիւններ ստանձնելով:

ՀՕՄ-ի այս լուսաւոր հանգրուանին, մեր մաղթանքներուն կը միացնենք մեր աղօթքն առ Աստուած, որ Իր շնորհքով բեղմնաւորէ ՀՕՄ-ի Աստուածահաճոյ եւ ազգանուէր առաքելութիւնն ի հայտ

Քրիստոնէական սիրոյ ջերմ ողջունիւ,
 Աղօթարար,

Վեր. Վահան Յ. Թորշիկեան
Գործադիր Տնօրէն՝ Հայ Աւետարանական
Համաշխարհային Խորհուրդի

14 |

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Պարմութիւն եւ Ժամանակագրութիւն

1895ի համիտեան ջարդերէն ետք է, որ գլխաւորաբար կը ձեւաւորուէր ամերիկահայ գաղութը, որուն մէջ, ինչպէս ՀՕՄի արխիւներուն մէջ պահուած վաւերաթուղթեր կը հաստատեն, հայ կիներու խումբեր գործած են՝ օգնութեան ձեռք երկարելու համար Արեւմտահայաստանի տառապեալ ժողովուրդին: Հետեւաբար Ակնունիի Միացեալ Նահանգներ հասնելէն առաջ՝ 10 Սեպտեմբեր 1910ին, հայ կիներու անջատ խումբեր կը գործէին եւ որոնք աւելի ուշ պիտի կազմէին Հայ Օգնութեան Միութեան կորիզը:

Ամենայնդէպս՝ Ակնունիի ճիգերուն շնորհիւ 1910ին Նիւ Եորքի մէջ կը ստեղծուէր Հայ Կարմիր Խաչը, որ հետագային պիտի վերակոչուէր Հայ Օգնութեան Միութիւն:

ԿԱՐԵՒՈՐ ԹՈՒՄԿԱՆՆԵՐ

1910 •

Սեպտեմբերին Ակնունի կը կազմարկերպէ ԱՄՆի մէջ գոյութիւն ունեցող կանանց խումբերը եւ զանոնք միացնելով կը հիմնէ ՀՅԴ Կարմիր Խաչը՝ մերօրեայ Հայ Օգնութեան Միութիւնը:

1918 •

Հալէպի մէջ հիմը կը դրուի Հայ Կարմիր Խաչին (յետագային՝ Հայ Օգնութեան Խաչ):

1919 •

Յունիսին գումարուած Պատգամաւորական Բ. Ժողովը որոշում կը կայացնէ կապուիլ Հայաստանի Հանրապետութեան հռչակումով կազմուած Հայաստանի Կարմիր Խաչին եւ այնուհետեւ կոչուիլ Հայաստանի Կարմիր Խաչ (յետագային՝ Հայ Օգնութեան Խաչ): Հալէպի մէջ հիմը կը դրուի Ազգային Պատսպարանին:

• 1915

Մայիս 30-31ին կը գումարուի հնգամեայ կազմակերպութեան Պատգամաւորական անդրանիկ ժողովը: Կը գործադրուի եւ կը շարունակուի Կովկասի բախումներուն ընթացքին վիրաւորուած կամաւորներու օգնութեան, ինչպէս նաեւ դեղորայքի եւ հանդերձանքի առաքման յատուկ ծրագիրը մինչեւ 1919 թուականը:

Ֆրեզնոյի մէջ կը հիմնուի Հայ Կարմիր Խաչի Արեւմտեան Ամերիկայի Անդրանիկ միաւորը՝ մինչեւ օրս ճանցուած «Մայր» Մասնաճիւղ անունով:

1921 •

Ատրպատականի Հայ Կանանց Ընկերությունը կը միանայ Հայ Կարմիր Խաչին: Հայ Կարմիր Խաչի Կեդրոնական Վարչությունը անմիջական օժանդակություն կը յատկացնէ Փետրուարեան Ապստամբութենէն ետք Ատրպատական ապաստանած 10,000 հայ տարագիրներու:

Մարտ 30ին Ժընևի մէջ Հայ Կարմիր Խաչը կը մասնակցի Միջազգային Կարմիր Խաչի Ժ. համագումարին:

1924 •

Աթէնքի մէջ հիմը կը դրուի Յունաստանի Կապոյտ Խաչին:

Ընդառաջելով Խորհրդային Հայաստանի կառավարութեան ներգաղթի կոչին՝ Հայ Կարմիր Խաչը նիւթական օժանդակութիւն կը յատկացնէ տարագիրներուն՝ Հայաստան փոխադրութեան համար:

1928 •

Կը կազմակերպուի Հայ Կարմիր Խաչի սանսանուհիներու եւ արծուիկներու շարժումը: Մարտիլիոյ մէջ Մայիս 27էն Յունիս 1 կայացած իր Պատգամաւորական Բ. Ժողովին Արեւմտեան Եւրոպայի Հայ Կարմիր Խաչը որոշում կը կայացնէ իր կեդրոնը փոխադրել Փարիզ, որմէ ետք պաշտօնապէս կ'ընդունի Ֆրանսահայ Կապոյտ Խաչ անունը:

• 1922

Հայ Կարմիր Խաչը կը մասնակցի Հայաստանի Սովետոց Օգնութեան Ամերիկայի յանձնախումբին աշխատանքներուն, ապա առանձին տարիներ շարունակ օժանդակութիւն կը հասցնէ Հայաստանի կարօտեալներուն:

• 1926

Կը սկսի թուրքերու, քիւրտերու եւ արաբներու տուներէն որբահաւաքի աշխատանքը՝ «Մէկ Որբ, Մէկ Ոսկի» նշանաբանով:

Հայ Կարմիր Խաչի բոլոր միատրները կը կազմակերպուին եւ օգնութիւն կը հասցնեն Շիրակի երկրաշարժի աղէտեալներուն: Օգնութեան աշխատանքները կը տեւեն երկու տարի:

• 1929

Կը վերակազմուի Հիւսիսային Յունաստանի Կարմիր Խաչը «Հայ Գթութեան Խաչ» անունին տակ:

1930 •

Պաշտօնապէս հիմը կը դրուի Լիբանանահայ Օգնութեան Խաչին, որ մինչ այդ կապուած էր Սուրիոյ միատրին: Իրաքի Ներքին գործոց նախարարութիւնը կը վաւերացնէ Պաղտատի մէջ հիմնադրուած Հայ Գթութեան Խաչը՝ «Հայ Կարօտեալ Խնամակալութիւն» անուան տակ:

Սփիւոքի զանազան գաղութներէն ՀՕՄը օգնութեան կը հասնի Սալմաստի երկրաշարժի աղէտեալներուն:

Եգիպտոսի մէջ 1920էն սկսեալ գոյութիւն ունեցող Հայունեաց Միութիւնը կը վերակազմուի Հայ Կարմիր Խաչ անունով:

Աղէքսանդրիոյ մէջ կը հաստատուի «Պուտ մը Կաթ»-ի ձեռնարկը եւ կը հիմնուի ծովեզերեայ օդափոխութեան կայանը կարիքաւոր ընտանիքներու զաւակներուն կազդորման համար:

1937 •

Կը հիմնուի Հայ Օգնութեան Միութեան Հայֆայի մասնաճիւղը:

1942 •

Կը սկսի «Պնակ մը Կերակուր»-ի ծրագիրը:

1947 •

Կը Հիմնուի Ամմանի Հայ Տիկնանց Աղքատախնամ Միութիւնը, որ երկու տարի ետք կը դառնայ Հայ Օգնութեան Միութեան միաւոր: Այս թուականէն սկսեալ կը հիմնուին ընկերային ծառայութեան գրասենեակներ եւ նոր թափ կ'առնէ ՀՕՄի գործունէութիւնը այդ մարզէն ներս:

• 1932

Կը հիմնուի Հայ Կարմիր Խաչի Երուսաղէմի մասնաճիւղը (այժմ՝ Հայ Օգնութեան Միութիւն):

• 1933

Պուէնոս Այրէսի մէջ (Արժանթին) կը հիմնուի Հարաւային Ամերիկայի Հայ Կարմիր Խաչը (այժմ՝ Հայ Օգնութեան Միութիւն):

• 1935

Կը հաստատուի պատանիներու կազդորման ճամբարի ծրագիրը Ֆրանսայի մէջ:

• 1939

Կը հիմնուի Միութեան սեփական օրկանը (ներկայիս՝ «Հայ Սիրտ» պարբերաբերթ):

• 1946

«Հայ Կարմիր Խաչ» անունը կը փոխուի «Հայ Օգնութեան Միութիւն»-ի:

Ընդառաջելով Էջմիածնի կոչին՝ ՀՕՄը նիւթական օժանդակութիւն կը հասցնէ Գէորգեան Ճեմարանի կահաւորման համար:

Կը հաստատուի պատանիներու կազդորման Խալքիտիքի կայանը Յունաստանի մէջ: Տարիներ շարունակ ՀՕՄը իր գործօն մասնակցութիւնը կը բերէ ԱՆՁԱ-ի միջոցաւ հազարաւոր տարագիրներու Միացեալ Նահանգներ փոխադրութեան:

1948 •

Ամերիկայի Միացեալ Նահանգներու տարածքին ՀՕՄը հանգանակութեան կը ձեռնարկէ Լիբանանի Համազգայինի Ճեմարանին համար եւ կը գոյացնէ \$127,000.00:

1953 •

ՀՕՄը օգնութեան կը փութայ Երուսաղէմի աղէտեալներուն:

1962 •

Յունիս 12ին բացառիկ շուքով տեղի կ'ունենայ Յունաստանի Հայ Կապոյտ Խաչի Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան վարժարանին բացման հանդիսութիւնը:

1968 •

Կը հաստատուի ՀՕՄի Սոֆիա եւ Լեւոն Յակոբեաններու անուան հիմնադրամը՝ բարերարուհիին կտակած մէկ միլիոն տոլարով: Օգոստոս 25ին կը կատարուի Քեսապի մէջ Սուրիահայ Օգնութեան Խաչի կազմութեան կայանի բացումը:

1975 •

Պուէնոս Այրէսի մէջ (Արժանթին) կը հիմնուի ՀՕՄի «Օննիկ Պոստութեան- Օհաննէս Տիարպէքիբեան» Հանգստեան Տունը:

• 1950

Բ. Համաշխարհային պատերազմի աղէտեալներուն եւ տարագիրներուն օգնութեան համար Միացեալ Նահանգներուն մէջ ՀՕՄը կը հանգանակէ \$278,000.00:

• 1954

Միացեալ Նահանգներուն մէջ ՀՕՄը դարձեալ հանգանակութեան կը ձեռնարկէ Լիբանանի Համազգայինի Ճեմարանին համար եւ այս անգամ կը գոյացնէ \$140,000.00: Ֆրանսահայ Կապոյտ Խաչը կ'ունենայ իր սեփական ճամբարը Պելֆոնթէնի մէջ:

• 1965

Աւստրալիոյ Սիտնի քաղաքին մէջ կը հիմնուի ՀՕՄի Աւստրալիոյ շրջանի առաջին մասնաճիւղը:

• 1970

Կեդրոնական Վարչութեան պատասխանատուութեան տակ ՀՕՄը կը սկսի իր գործակցութիւնը Միացեալ Ազգերու Կազմակերպութեան հետ:

• 1976

ՀՕՄի Ամմանի մասնաճիւղը կը բանայ «Հայ Ծերանոց»ը, որ ութ տարի ետք կը փակուի անտէր տարեցներու չգոյութեան պատճառով:

Կը բացուի Լիբանանահայ Օգնութեան Խաչի հայկական ձեռագործներու աշխատանոցը: Չորս տարի ետք՝ 1980ին՝ ձեռարուեստի կեդրոնը:

1978 •

Կը հիմնուի Պուէնոս Այրէսի (Արժանթին) ՀՕՄի «Նայիրի» պարախումբը, որ կը շարունակէ ելոյթներ ունենալ առ այսօր:

1980 •

Արեւմտեան ԱՄՆ-ի մէջ կը հիմնուի ՀՕՄի ընկերային ծառայութեան գրասենեակը Կլենտէյլի մէջ:

1982 •

Կը ստեղծուի Աստրալիոյ շրջանային միաւորը 3 մասնաճիւղերու միացումով: Կը վերականգնուի Եաֆայի ՀՕՄի մեկուսի մասնաճիւղը: Ապրիլ 2ին Լոնտոնի մէջ կեանքի կը կոչուի ՀՕՄի Անգլիոյ մեկուսի մասնաճիւղը:

1985 •

Կը հիմնուի ՀՕՄի Յոպպէյի մասնաճիւղը:

1987 •

Կը գործադրուի ՀՕՄի Պատանիներու Փոխանակման ծրագիրը: Աստրալիոյ մէջ կը հիմնուի ARS Happy Kids Kindergarten մանկամասը՝ իր յատուկ շէնքով ու սարքաւորումով:

• 1979

Յուլիսին կայացած Համահայկական Պատգամաւորական Ժողովին Միութիւնը, վերամշակելով իր Կանոնագիրը, կը ստեղծէ կեդրոնական վարչական մարմին մը՝ վարելու համար համասփիւղքեան իր կառոյցին աշխատանքները: Կը ստեղծուի Հիւսիսային Ամերիկայի շրջանը:

• 1981

Կը հիմնուի ՀՕՄի ընկերային ծառայութեան գրասենեակը Ուաթըրթաունի մէջ: (Մասաչուսէց ԱՄՆ): Կը հիմնուի Լիբանանահայ Օգնութեան Խաչի «Արաքսի Պուլլուրճեան» Ընկերաբժշկական կեդրոնը Պուրճ Համուտի մէջ:

• 1984

Կը ստեղծուի Միացեալ Նահանգներու Արեւմտեան ափի ՀՕՄի շրջանային միաւորը: Հալէպի մէջ հիմը կը դրուի Սուրիահայ Օգնութեան Խաչի Ընկերաբժշկական Կեդրոնին, որուն պաշտօնական բացումը կը կատարուի 1987ին, ներկայութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսին:

• 1988

Ապրիլ ամսուն կը վերակազմուի ՀՕՄի Կիպրոսի մասնաճիւղը: Նոյեմբերին, առաջին անգամ ըլլալով, ՀՕՄը \$50,000-ի անմիջական օգնութիւն կը յատկացնէ Ղարաբաղին: ՀՕՄը զօրաշարժի կ'ենթարկէ իր աշխարհասփիւռ միաւորները՝ օգնութեան հասնելու Հայաստանի 7 Դեկտեմբերի երկրաշարժի աղէտեալներուն:

1989 •

Յունուար 25ին ՀՕՄԻ անդրանիկ պատուիրակությունը Խորհրդային Միության իշխանություններու հրաւերով կը մեկնի Հայաստան:

Մարտ ամսուն կը բացուի ՀՕՄԻ Կեդրոնական Վարչության Washington, D.C., գրասենեակը՝ Հայաստանի վերաշինության աշխատանքներուն նուիրում:

1991 •

Հայաստանի վերանկախացման տարին ՀՕՄԻ Կեդրոնական Վարչությունը կը բանայ իր գրասենեակը Երևանի մէջ:

Օգոստոսին տեղի կ'ունենայ Հայաստանի Օգնության Խաչի անդրանիկ Պատգամաւորական ժողովը:

Կը հիմնուի Ախուրեանի ՀՕՄԻ «Նիկոլ Աղբալեան» վարժարանը:

ԱՄՆ Արեւմտեան ափի ՀՕՄԻ միաւորին նախաձեռնութեամբ կը հիմնուին Գիւմրիի եւ Սպիտակի հոգեբանական կեդրոնները:

Հիւնը կը դրուի ՀՕՄԻ Որբախնամ Ծրագրին:

1997 •

ՀՕՄԻ ԱՄՆ Արեւելեան ափի միաւորին նախաձեռնութեամբ կը հիմնուի Ախուրեանի «Մօր ու Մանկան» Առողջութեան Կեդրոնը:

2000 •

Սեպտեմբեր 26-27ին ՀՕՄԻ 90 ամեակին առթիւ Երևանի մէջ տեղի կ'ունենայ «Հայ Ընտանիքը ԻԱ Դարուն» երկօրեայ գիտաժողովը:

Սեպտեմբեր 17-Նոյեմբեր 3, տեղի կ'ունենայ ՀՕՄԻ կազմակերպած շրջազայութիւնը Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւններու տարածքէն ներս:

• 1990

Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու ՀՕՄԻ կառոյցները պաշտօնապէս կը դառնան ՀՕՄԻ առանձին շրջանային միաւորներ:

Կը վերակազմուի Պուկարիոյ Հայ Օգնության Միութիւնը Սոֆիայի, Փլովտիի, Վառնայի եւ Պուրկազի ընկերուհիներուն միացեալ ճիւղերով:

• 1992

Կը հիմնուի ՀՕՄԻ Արցախի միաւորը:

• 1993

Կը հիմնուի Հայ Օգնության Միութեան Շուէտի միաւորը Սթոքհոլմի եւ Ուպսալայի զոյգ մասնաճիւղերով:

• 1995

Ապրիլ 27ին կը հիմնուի ՀՕՄԻ Քուէյթի միաւորը:

Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաք Երևանի, ինչպէս նաեւ Թալինի եւ Վանաձորի մէջ կը բացուին ՀՕՄԻ ակնաբուժական կեդրոնները:

• 1998

Ֆրանսֆուրթի մօտ գտնուող Մայնց քաղաքին մէջ Մայիս 9ին տեղի կ'ունենայ Հայ Օգնության Միութեան Գերմանիոյ նոր միաւորին հիմնադիր ժողովը:

Մայիս 29-30ին, Երևանի մէջ տեղի կ'ունենայ ՀՕՄԻ կազմակերպած «Հայրենիք եւ Սփիւրք 21-րդ Դարու Շեմին» համահայկական գիտաժողովը:

Կը սկսի ՀՕՄԻ «Սօսէ Մայրիկ» մանկապարտէզներու ծրագրին իրագործումը Արցախի մէջ:

2001 •

Հայ Օգնութեան Միութեան նախաձեռնող խումբեր կը կազմուին Ախալքալաքի, Ախալցխայի եւ Բոկտանովկայի մէջ եւ նոյն տարուան Յունիսին, կու տան իրենց ուխտը՝ դառնալով Վրաստանի ՀՕՄի մեկուսի մասնաճիւղ:

2004 •

ՀՕՄի Հարաւային Ամերիկայի միաւորը կը պարգևատրուի ՄԱԿի «Messenger of Peace» («Խաղաղութեան Աւետարեր») մրցանակով:

2006 •

Սեպտեմբեր 18-20ին Երեւանի մէջ ՀՕՄը կը մասնակցի Հայաստան-Սփիւոք Գ. Խորհրդաժողովին:
Կը վերականգնի Ռուսաստանի ՀՕՄի միաւորը՝ պաշտօնապէս գրանցուած իբրեւ ՀՕՄ Ռուսաստանի Հայ Կանանց Միութիւն:
Սեպտեմբեր 2ին կը հիմնուի Զուիցերիոյ ՀՕՄի միաւորը:
Իտալիոյ Միլանօ քաղաքի բնակիչ երկու հայունհիներ միանալով ՀՕՄի շարքերուն, հիմը կը դնեն միութեան «հեռակայ անդամ» հասկացութեան:

• 2003

Մարտ 28ին Մոնթրէալի մէջ կայացած ճաշկերոյթի ընթացքին Կեդրոնական Վարչութիւնը իր նորահաստատ «Արարատ» մրցանակը կը յանձնէ անոր առաջին մրցանակիրին՝ շարժանկարի հանրաժանօթ անձնաւորութեան, բեմադրիչ Աթոմ Եկոյեանին՝ առ ի գնահատանք իր պատրաստած նոյնանուն՝ «Արարատ» ժապաւէնին:

• 2005

ՀՕՄի Ախուրեանի «Մօր ու Մանկան» Առողջութեան Կեդրոնին կից կը հիմնուի ծննդատան մասնաբաժինը:

| 21

• 2008

Տեղի կ'ունենայ ՀՕՄի հարիւրամեակի միջերկրականեան ծովագնացութիւնը:

• 2009

Ապրիլ ամսուն՝ Ս. Զատկուայ առաւօտուն, Սուրիոյ Հանրապետութեան Նախագահն ու Առաջին Տիկինը կ'այցելեն Հայէպի Ազգային Պատասպարանը եւ կը հիւրասիրուին Սուրիահայ Օգնութեան Խաչի Խնամակալ յանձնախումբին կողմէ:
Նոյեմբեր 12ին ՀՕՄի Կլէնտէյլի կեդրոնին մէջ տեղի կ'ունենայ Հայ Օգնութեան Միութեան 100-ամեակի խորհրդանիշի բացալայտման հանդիսութիւնը:

2010 •

Մարտ 10ին սկիզբ կ'առնէ ՀՕՄԻ Հարիւրամեակի համաշխարհային հանդիսութիւնները Նիւ Եորքի Գառնըկի Հիմնարկի հանդիսասրահին մէջ Կեդրոնական Վարչութեան ձեռնարկով:

Հոկտեմբերին Կեդրոնական վարչութիւնը կը կազմակերպէ 100 ամեակի եզրափակիչ հանդիսութիւնները Սուրիոյ եւ Հայաստանի մէջ հանդիսութիւններու եւ միջոցառումներու շարքով մը:

Հալիպի մէջ Սեմինար եւ Տէր Զօր այցելութիւն:

ՀՀ նախագահի մօտ ընդունելութիւն:

Պաշտօնական հանդիսութիւն՝ Երեւանի Օփերայի սրահէն ներս:

2014 •

Քեսապի հայրենակիցներուն անմիջական օժանդակութիւն կը հասնի:

Կը կազմուի ՀՕՄԻ մասնաճիւղ՝ Պելճիքայի մէջ:

2016 •

Արցախի անմիջական օժանդակութեան ծրագիրներ կ'իրագործուին ի հետեւումն Ապրիլի քառօրեայ պատերազմին:

2017 •

Զինուորի Տուն վերականգնողական կեդրոնի աջակցութիւնը ընթացք կ'առնէ:

Սեպտեմբեր 6ին տեղի կ'ունենայ Ստեփանակերտի «Սօսէ» մանկապարտէզի վերականգնուած շէնքի բացում:

• 2012

Սեպտեմբեր 29ին, Երեւանի մէջ ՀՕՄը կը կազմակերպէ խորհրդաժողով՝ «Երեխաներու պաշտպանութեան համակարգը եւ Հայաստանի ու Սփիոքի դերը՝ համակարգի ձեւաւորման գործընթացին մէջ»:

Սեպտեմբեր 30ին կը կատարուի ՀՕՄԻ Որբախնամ ծրագրի քսանամեակի պաշտօնական նշումը Երեւանի Գ. Սունդուկեանի անուան թատերասրահէն ներս:

Կը հիմնադրուի «Սուրիահայ վարժարաններու օժանդակութեան ֆոնտ»:

• 2013

Սուրիահայութեան օժանդակութեան ծրագիրներ կ'իրականանան տեղի ունեցած պատերազմի հետեւանքով, «Տաք ճաշ», «Տաքուկ Բնակարան» եւ «Երաշխատրէ Հայ Ընտանիք մը»:

• 2015

Մարտ 5էն -7ը կ'ոգեկոչուի Հայոց Ցեղասպանութեան հարիւր ամեակը Նիւ Եորքի մէջ, Հայկական ձեռագործներու ցուցահանդէս ՄԱԿի կեդրոնին մէջ, ինչպէս նաեւ երկօրեայ խորհրդաժողով «Հայ Կիներու Մէկ Դարու Դիմադրութիւնն ու Հզօրացումը» խորագրով:

Մօր ու Մանկան բժշկական կեդրոնին համար կը տրամադրուին տարրալուծարանի սարքեր եւ Սոնոկրաֆիա սարք:

2018 •

Մայիս 24ին, Երեւանի մէջ, տեղը կ'ունենայ Հայաստանի Առաջին հանրապետութեան հարիւր ամեակին առիթով խորհրդաժողով «Զարթօնքէն Հանրապետութիւն՝ Հայ Կանանց Դերը» խորագրով:

Կը հիմնուին Հոլանտայի եւ Շուէտ-Սոտէրթէյի մէջ նոր մեկուսի մասնաճիւղեր:

2020 •

Ի հետեւում «Քորոնա» ժահրին Համաշխարհային Շտապ Օժանդակութեան նպատակով կը ստեղծուի յատուկ ֆոնտ մը բժշկական իրեր ապահովելու համար Արցախի եւ Հայաստանի, ինչպէս նաեւ նիւթապէս նպաստելու կարիքաւորներուն:

«Լիբանանի Կողքին» առցանց դրամահաւաք տեղի կ'ունենայ:

Սեպտեմբեր 27ին Արցախի 2-րդ (44օրեայ) պատերազմի սկիզբ: Արցախի Շտապ Օժանդակութեան դրամահաւաք կ'իրագործուի:

2023 •

Սուրիոյ երկրաշարժի յետ աղէտի օժանդակութիւն կ'ուղարկուի:

Շրջափակուած Արցախի օժանդակութեան ծրագիրներ կ'իրականանան:

Կը տրամադրուի Արեւային Համակարգ՝ Սուրիահայ Օգնութեան Խաչի Դարմանատան:

Սեպտեմբեր 19էն սկսեալ բռնի տեղահանուած Արցախահայութեան Շտապ Օժանդակութեան աշխատանքներ կը տարուին:

• 2019

Նոյեմբեր 15ին Մօր ու Մանկան կեդրոնը կ'օժտուի բարձրորակ սարքերով ակնաբուժական ծառայութիւն տրամադրող «Ալեսիա» ակնաբուժական կեդրոնով մը:

• 2021

ՀՕՄը կը վերամշակէ իր Որբախնամ ծրագիրը անուանելով զայն «Զոհուած Հերոսներու Զաւակներ» ծրագիր:

• 2022

ՀՕՄը կը կատարէ Արցախի շտապ օժանդակութեան ընդհանուր յատկացում \$4,947,745:

Սկիզբ կ'առնէ «Արեւային Արցախ» ծրագիրը եւ 101 տուններ կ'օժտուին արեւային ջեռուցման սարքերով:

• 2024

Արցախահայութեան Օժանդակութեան Շարունակական Ծրագիրներու ծիրէն ներս կ'որդեգրուի «Յոյսի օճախներ» ծրագիրը:

• 2025

Մայիսին Կիպրոսի մէջ կը կազմակերպուի շրջանային խորհրդաժողով մը՝ Հայ Օգնութեան Միութեան մասին:

Հոկտեմբեր 15-25ին, Հայաստանի մէջ տեղի կ'ունենայ ՀՕՄի 115 ամեակին առթիւ համահայկական տօնակատարութիւն:

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Կեդրոնական Վարչություն Ծրագիրներ

ՄՆԱՅՈՒՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

1- ՀՕՄԻ Կրթաթոշակ

ՀՕՄԻ Սամուէլ եւ Աղանի Երեմեան Կրթաթոշակի ծրագիրը սկսած է 1983ին: Ծրագրին նպատակն է երիտասարդ մասնագետներ պատրաստել, որոնք իրենց գիտութիւնը, համալսարանը աստիճանով ետք, ի սպաս կը դնեն մեր գաղութային ու հայրենիքի կարիքներուն: Յետագային, Երեմեան Կրթաթոշակի Ֆոնտին գումարին վրայ աւելցան «Ճիզմաճեան», «Պաղտոյեան», «Պալունեան», «Գալայճեան», «Վարդան Գրիգորեան» եւ «Ժանէթ Մարգարեան» ֆոնտերը: Առ այդ, ՀՕՄԻ 71-րդ Համահայկական Պատգամաւորական Ժողովին, ՀՕՄԻ Սամուէլ եւ Աղանի Երեմեան կրթաթոշակը կը վերանուանուի «ՀՕՄԻ Կրթաթոշակ»:

2- ՀՕՄԻ «Երկրորդական Աւարտող Լաւագոյն Աշակերտ» Ծրագիր

1995ին սկիզբ առած այս ծրագրին ընդմէջէն, Հայաստանի, Արցախի եւ Ջաւախքի մէջ բնակող յառաջադէմ եւ լաւագոյն արդիւնքները արձանագրող ուսանողները կը ստանան կրթանպաստ (\$100) հարիւր ամերիկեան տոլար: Գումարները կը տրամադրուին ՀՕՄԻ միաւորներու եւ Կեդրոնական վարչութեան կողմէ:

Հաւատարմով «Լաւագոյն Ուսանող» ծրագրի յարատեւութեան անհրաժեշտութեան, ՀՕՄԻ 73-րդ Համահայկական Ժողովը որոշում առաւ այս ծրագրէն օգտւող ուսանողներու թիւը բարձրացնել 65էն

100ի, տրամադրելով 55-ը Հայաստանի միաւորին, 25-ը Արցախի միաւորին եւ 20-ը Ջաւախքի միաւորին:

3- ՀՕՄԻ «Սօսէ» Մանկապարտէզներ Արցախ

ՀՕՄԻ «Սօսէ» Մանկապարտէզներու ցանցը կը սկսի 1998թուականին, երբ Արցախի Հանրապետութեան Կրթութեան/Գիտութեան Նախարարութիւնը ՀՕՄԻ կը նուիրէ կիսաքանդ շէնք մը Ստեփանակերտի մէջ: Շէնքը կը նորոգուի եւ Ապրիլին դռները կը բանայ 3-6 տարեկան 87 երեխաներու: Սօս երկու տասնամեակներ ետք, Արցախի տարածքին ՀՕՄԻ «Սօսէ» Մանկապարտէզներու ցանցը կը հասնի 12ի: 2010ին 4 մանկապարտէզներ կը յանձնուին Արցախի Հանրապետութեան Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան: Նոյեմբեր 10, 2020ի եռակողմանի յայտարարութեան հետեւանքով, Արցախի Սօսէ մանկապարտէզներէն չորսը (Մեծ Թաղեր, Տող, Շուշի, Քարեգահ) անցան Ատրպէյճանի գերիշխանութեան տակ:

Սեպտեմբեր 19ին Ատրպէյճանի լայնածաւալ յարձակման հետեւանքով արցախահայերը իրենց հազարամեայ հայրենիքը թողելով բռնի տեղահանման ենթարկուցան եւ Արցախը անցաւ Ատրպէյճանի գերիշխանութեան տակ:

Այս բոլոր իրադարձութիւնները շատ մեծ ցաւ պատճառեցին ՀՕՄԻ մեծ ընտանիքին, սակայն պէտք է յիշել թէ այս մանկապարտէզները յաճախած են աւելի քան 9,000 երեխաներ, որոնք հայեցի դաստիարակութեամբ

եան կողքին նաեւ սորված են հայերէն երգեր, բանաստեղծութիւններ եւ պարեր:

Պուկարիա

Պուկարիոյ մէջ կը գործեն ՀՕՄի միօրեայ հինգ «Սօսէ» մանկապարտէզներ:

- Փլովտի- Արեւիկ
- Պուրկաս- Զանգակներ
- Ռուսէ- Գարուն
- Սոֆիա- Թիթեռնիկ
- Վառնա- Հայ Մանուկներ

4- ՀՕՄի Նաւապտոյտ

ՀՕՄի Միջազգային Նաւապտոյտը ԿՎ-եան միակ հասութեաբեր ձեռնարկն է, որ տեղի կ'ունենայ պարբերաբար 2 տարին անգամ մը: Սոյն Նաւապտոյտը ՀՕՄի իրաւյատուկ նախաձեռնութիւններէն մէկն է, որուն միջոցաւ ներկաները կը ծանօթանան ՀՕՄի տարած մարդասիրական աշխատանքներուն եւ ծրագիրներուն:

Այսպիսով ՀՕՄի դրօշին ներքոյ կը հաւաքուին տարբեր երկիրներէ ժամանած հայորդիներ իրենց աջակցութիւնը ցուցաբերելով ՀՕՄի մարդասիրական նպատակներուն:

Մինչեւ օրս ՀՕՄի Կեդրոնական վարչութիւնը իրականացուցած է 8 նաւապտոյտներ:

5- Միացեալ Ազգերու Կազմակերպութիւն (ՄԱԿ)

Հայ Օգնութեան Միութիւնը 1970էն ի վեր սերտօրէն կը գործակցի Միացեալ Ազգերու Կազմակերպութեան: Իբրեւ ՄԱԿի Տնտեսական եւ Ընկերային Յանձնախումբի (ECOSOC) անդամ եւ միջազգային կարգավիճակով ոչ կառավարական գործունէայ կազմակերպութիւն (NGO), ՀՕՄ կը շարունակէ ըլլալ ջատագովը մարդկային իրաւանց, ընկերային արդարութեան եւ համաշխարհային քաղաքակիրթ հասարակութեան մը ստեղծման, առաջին իսկ օրէն իր ուղղութիւնը ճշդելով՝ հիմնուելով պատմական իրողութիւններու եւ անոնցմէ

բխող սկզբունքներու վրայ:

Իբրեւ Ոչ Կառավարական կազմակերպութիւն մը, Հայ Օգնութեան Միութիւնը ECOSOCի անդամ կ'ընտրուէր Մայիս 28, 1998ին: ՀՕՄ իր աշխատանքները ՄԱԿէն ներս յառաջ կը տանի մարդկային իրաւանց եւ ինքնավարութեան իրաւունքի ապահովման առաջադրանքներով՝ զուգահեռաբար գլուխ հանելով իր բարեսիրական աշխարհասփիւռ աշխատանքները:

Հայ Օգնութեան Միութեան ներկայացուցիչներու խումբը իր ներկայութիւնը կը շարունակէ ՄԱԿէն ներս, առաջադրուած ծրագիրներու գործադրութեան աշխատանքներուն մէջ իր աշխարհատարած միատրոններու գործնական մասնակցութեամբ:

6- ՀՕՄի Ախորեանի Մօր ու Մանկան Առողջապահութեան կեդրոն եւ Ծննդատուն

ՀՕՄի Ախորեանի Մօր ու Մանկան առողջապահութեան կեդրոնը հիմնուած է Մայիս 1997ին: Ապրիլ 24, 2005ին կեդրոնին կից հիմնուած է նաեւ ծննդատունը: ՀՕՄի ջանքերով կառուցուած բժշկական այս հիմնարկը կը հանդիսանայ Հայաստանի Շիրակի մարզի լաւագոյն հիւանդանոցներէն մին, ուր բժշկական բարձրորակ ծառայութիւններ կը մատուցուին մարզի բնակիչներուն: Տեղին է նշել, որ կեդրոնին մէջ տարեկան աւելի քան 1200 ծնունդ կ'արձանագրուի: Կեդրոնը Ախորեանի բնակիչներուն կը տրամադրէ կնաբուժութեան, մանկաբուժութեան եւ մանկաբարձութեան բարձրորակ ծառայութիւն: Կեդրոնէն ներս երիտասարդ կանայք կը ստանան ծնողական եւ առողջապահական գիտութիւններու մասին դաստիարակութիւն եւ ցուցմունքներ, որոնք շատ կարեւոր են հանրային առողջապահութեան համար:

Որպէս յարատեւ յառաջդիմութեան

ձգտող արդիական հաստատություն, «Մօր ու Մանկան» կեդրոնը, համասփիռքեան ՀՕՄԻ միաւորներու գործունեայ մասնակցութեամբ, 2008ին, Կեդրոնի նորահաստատ ատամնաբուժարանը սկսաւ հիւանդներ ընդունիլ՝ սատարելով մայրերու ընդհանուր առողջական վիճակին կայունացման, մասնաւորաբար անոնց յղութեան շրջանին: Իսկ Նոյեմբեր 2019ին «Մօր ու Մանկան» Առողջապահական Կեդրոնը օժտուեցաւ բարձրորակ սարքերով ակնաբուժական ծառայութիւն տրամադրող «Ալեյա Ակնաբուժական Կեդրոն»-ով մը:

Աւելի քան տասնհինգ տարի գործելէ ետք, 2023ին ընթացք առաւ կեդրոնին վերանորոգման եւ արդիականացման աշխատանքները, որոնք թելադրուած եւ պահանջուած էին Հայաստանի առողջապահութեան նախարարութեան կողմէ: Այս աշխատանքներուն նպատակն էր հիւանդանոցին բոլոր սենեակները հիմնովին նորոգել եւ արդիականացնել, ինչպէս նաեւ՝ խոհանոցը վերածել արդիական սարքերով գործող տարրալուծարանի մը:

Ախտաբանի Մօր ու Մանկան առողջապահութեան կեդրոնը եւ ծննդատունը օժտուեցաւ նոր Մամկրամ սարքով մը, որուն արժէքը կը կազմէ \$320 ամերիկեան տոլար:

7- «Զոհուած Հերոսներու Զաւակներ» (Նախապէս Որբախնամ Ծրագիր)

ՀՕՄԻ «Որբախնամ Ծրագիր»ը հաստատուած է 1992ին Սպիտակի երկրաշարժին եւ Արցախեան պատերազմին հետեւանքով որբացած մանուկներու խնամատարութեան համար: Նիւթական դժուարութիւնները նուազեցնելու նպատակով, երեխաները կը ստանան տարեկան յատկացում:

2020ի Արցախեան 2-րդ պատերազմի աւարտին, Կեդրոնական վարչութիւնը

վերաքննեց ծրագիրը եւ զայն վերանուանեց «Զոհուած Հերոսներու Զաւակներ»՝ տարեկան \$330 ամերիկեան տոլար ճշդելով իւրաքանչիւր երեխայի հովանաւորութեան համար:

Սեպտեմբեր 19, 2023ի իրադարձութիւններու հետեւանքով, նոր մանուկներ աւելցան ԶՀԶ ցանկին: Կեդրոնական վարչութիւնը որոշեց Սեպտեմբեր 25ին Ստեփանակերտի մէջ տեղի ունեցած պայթումի հետեւանքով զոհուածներու երեխաները ներառել սոյն ծրագրին մէջ:

Յիշեցնենք թէ, 1992 թուականէն մինչ օրս հովանաւորուած են 9202 երեխաներ, իսկ 1062 երեխաներ տակաւին կարիքը ունին հովանաւորման:

8- Որբերու Ուսման Ծրագիր

ՀՕՄԻ	Որբերու	Ուսման
	ծրագիրը	հաստատուած է 2008ին:

Ծրագիրը կը հոգայ 18 տարիքը լրացուցած եւ երկրորդական վարժարան աւարտած որբերու համալսարանական ուսման ծախսերէն բաժին մը:

Յիշեցնենք, թէ 2008 թուականէն մինչ օրս հովանաւորուած են աւելի քան 1250 ուսանողներ:

9- Ամանոր Ծրագիր

Ամանոր ծրագրի հիմը դրուած է 2000 թրւականին: Այս ծրագրին ընդմէջէն, իւրաքանչիւր տարի, Ամանորի առթիւ կը կազմակերպուին տօնական համախմբումներ եւ տեղի կ'ունենայ նուէրներու բաշխում՝ երէցներու եւ կարիքաւոր երեխաներու համար:

10- ՀՕՄԻ Պատանիներու Փոխանակման Ծրագիր

1987ին սկիզբ առած այս ծրագիրը առիթը կու տայ պատանիներու մասնակցիլ տարբեր շրջաններու ճամբարներուն եւ

նախապէս մնալ ՀՕՄական ընտանիքի մը մօտ ծանօթանալու այդ շրջանին ու գաղութին:

2015էն ետք ծրագիրը չշարունակուեցաւ, սակայն ՀՕՄի Կեդրոնական վարչութիւնը կը շարունակէ սատար կանգնիլ հայ երիտասարդութեան:

ԲԱՑԱՌԻԿ ԾՐԱԳԻՐՆԵՐ

1- Ջաւախքի օժանդակութեան ծրագիրներ

Ջաւախքի մէջ ՀՕՄի ծրագիրները կը շարունակուին բնականոն կերպով: Կեդրոնական վարչութիւնը եւ ՀՕՄի միաւորները կը քաջալերեն ջաւախքահայութեան աշխատանքները նիւթական օժանդակութեամբ:

Կը շարունակուին Հայոց Պատմութեան եւ Շարադրութեան մրցոյթները եւ բազմազան ընտանիքներուն օժանդակութիւնը:

2- Յոյսի Օճախներ

Արցախահայութիւնը հայրենի հողերուն վրայ պահելու նպատակով, Կեդրոնական վարչութիւնը որդեգրեց «Յոյսի Օճախներ» ծրագիրը, որուն նախնական շրջանին՝ Հայաստանի գիւղերուն մէջ, երկյարկանի հինգ բնակարաններ պիտի վերանորոգուին եւ յատկացուին գիւղատնտեսութեամբ զբաղելու պատրաստակամ արցախահայ 10 ընտանիքներու: Ծրագրի համար ընտրուած է Շիրակի մարզի Ախուրիկ գիւղը:

Այսպիսով Արցախի իրենց տունները բռնի լքած ընտանիքները նոր յոյս կը գտնեն հայրենիքի մէջ «Յոյսի Օճախներ» ծրագրով, որ մեծ աջակցութիւն կը համարուի վստահութիւն ներշնչելով մեր հայրենակիցներուն՝ թէ իրենք առանձին չեն դժուարութիւններու դէմ:

Այս տունները 10 տարի անժամկէտ ան-

հատոյց պիտի տրամադրուին Արցախէն բռնի տեղահանուած ընտանիքներու:

Մինչ օրս ՀՕՄը \$400,000 ամերիկեան տոլար յատկացուցած է այս ծրագրին:

3- «Զինվորի Տուն»

«Զինվորի Տուն» բարեգործական-հասարակական կազմակերպութիւն է, որ կ'օգնէ զինուորական ծառայութեան ժամանակ կամ հայրենիքի պաշտպանութեան ընթացքին խեղում, վնասուածք ստացած կամ հաշմանդամութիւն ձեռք բերած անձերուն:

ՀՕՄը 2017էն սկսեալ, կ'աջակցի «Զինվորի Տուն» վերականգնողական կեդրոնին: Իր Միաւորներու եւ նուիրատուներու հովանաւորութեամբ, տարիներու ընթացքին մասնակցած է Կեդրոնի վերանորոգման, կահոյքի, դեղորայքի ու յատուկ սարքերու ապահովման աշխատանքներուն իրականացնելով զանազան ծրագիրներ:

| 27

4- Արեւային Արցախ

2022 Մարտին Հայ Օգնութեան Միութեան նախաձեռնութեամբ սկիզբ առաւ «Արեւային Արցախ» ծրագիրը, որպէս պատասխան Ատրպէյճանի հակահայ քաղաքականութեան, որը անջատելով Հայաստանէն Արցախ հասնող ջեռուցման կազմի խողովակները, կասեցուց Արցախի բնակչութեան բնականոն կեանքի ընթացքը երկրին հայաբնակ տարածքներէն ներս: Ծրագրի նպատակն է Արցախի մէջ մեր հայրենակիցներուն կենցաղային պէտքերը հոգալ հայրենի հողի վրայ:

Յիշեցնենք թէ ՀՕՄը Արեւային սարքեր տեղադրեց Արցախի մէջ 101 բնակարաններու վրայ:

5- Տար Գաջ Ծրագիր

Լիբանանահայ Օգնութեան Խաչն ու

Սուրիահայ Օգնության Խաչը տարիներ է ի վեր կ'իրականացնեն «Տաք Ճաշ»ի ծրագիրները Կեդրոնական Վարչության, ՀՕՄի մեծ ընտանիքին եւ բարերարներուն հովանաւորութեամբ, նպատակ ունենալով տնտեսական սուր տագնապին պատճառով կարիքաւոր ազգայիններու շաբաթական դրութեամբ տաք ճաշի ապահովումը, որ կենսական օժանդակութիւն մըն է նիւթական միջոցներէ զուրկ հայորդիներու համար:

6- Կիւմրի Յոյս Ծրագիր

Սոյն ծրագիրը սկիզբ առաւ Մարտ 2015ին: Այս ծրագրին նպատակն է յառաջիկայ տասնամեակին զարգացնել Կիւմրի քաղաքը արտագաղթող բնակչութեան թիւը նուազագոյնի իջեցնելու հեռանկարով:

Ծրագիրը աւարտեցաւ 2017ին:

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԻԱ

Տարուկ Բնակարան

«Տարուկ Բնակարան» ծրագրին ընդմէջէն կարիքաւոր ընտանիքներ կը ստանան նիւթական օժանդակութիւն, ձմրան ընթացքին ջեռուցման անհրաժեշտ վառելանիւթ ապահովելու համար:

Երաշխաւորէ Հայ Ընտանիք մը

«Երաշխաւորէ Հայ Ընտանիք մը» ծրագրին ծիրէն ներս, 2016ի Նոր Տարուան առիթով ՀՕՄի ԱՄՆ Արեւելեան շրջանի միաւորի ներդրումով Սուրիոյ տարածքին (Հալէպ, Լաթաքիա, Բեսապ, Դամասկոս, Գամիշլի) եւ Լիբանան ու Հայաստան հաստատուած սուրիահայ ընտանիքներու յատկացուցան գումարներ:

«Քորոնա» Ժահրին դէմ սուրիահայութեան աջակցութիւն

Օգոստոս 14, 2020ին, ԿՎ-ը թիւ 22 շրջաբերականով դիմեց ՀՕՄի բոլոր միաւորներուն աջակցելու սուրիահայութեան «Քորոնա» Ժահրի պայքարին դէմ: Համաճարակը տարածուած ըլլալով Սուրիոյ հայ համայնքէն ներս, մեր հայրենակիցները գտնուեցան տագնապալի կացութեան մէջ: Դեղորայքի եւ բժշկական անհրաժեշտ միջոցներու սահմանափակումը պատճառ դարձաւ ժահրի պարագաներու թիւի աճման եւ անոր հետեւանքով համայնքի զաւակներուն մահուան: Այս նպատակով, նիւթական օժանդակութիւն կատարուեցաւ Սուրիահայ Օգնության Խաչին, նաեւ Աւստրալիոյ միաւորը դրամահաւաք մը կազմակերպեց եւ իր մասնակցութիւնը բերաւ այս ծրագրին:

Սուրիահայութեան երկրաշարժի անմիջական օժանդակութիւն

Փետրուար 6, 2023ին ահեղ երկրաշարժ տեղի ունեցաւ Սուրիոյ Հիւսիսային շրջանները, մեծ վնասներ պատճառելով հայաշատ Հալէպ քաղաքին:

ՀՕՄը իր աշխարհասփիռ մասնաճիւղերով, նոյնիսկ աղէտի առաջին վայրկեաններէն փութաց իր նիւթական օժանդակութիւնը հասցնել Սուրիահայ Օգնության Խաչին, իրականացնելու բարեսիրական եւ մարդասիրական անհրաժեշտ ծրագիրները:

ԿՎ-ը դրամահաւաք յայտարարեց եւ խնդրեց բոլոր միաւորներէն մասնակցիլ եւ օգնութեան ձեռք մեկնել սուրիահայութեան, այս հաւաքուած գումարներուն շնորհիւ Սուրիահայ Օգնության Խաչը իրականացուց հետեւեալ ծրագիրները:

1) ՍՕԽաչը երկրաշարժի յաջորդող ժամերէն սկսեալ լայն բացաւ Դարմանատան դռները, հիւանդներուն անվճար քննու-

թիւններ եւ անհրաժեշտ դեղորայք տրամադրելով:

2) ՍՕԽաչի Խնամատարական յանձնախումբը իր «Պնակ Մը Տաք Ճաշ» ծրագիրը գործադրեց, 140 անձի ճաշ մատակարարելով:

Հայկական կեդրոններէն ներս տեղակայուած հայորդիներուն երեկոյեան ՍՕԽաչին կողմէ տրամադրուեցան մօտաւոր 2,000 հոգիի կարկանդակի տեսականի, փոքրիկներուն թուով 350 հատ կաթ, նաեւ «Շիրակ» պաշարի տան արտադրանքներէն, որպէս հիւրասիրութիւն:

3) Փետրուար 9, 2023էն սկսեալ Դարմանատան մնայուն բժիշկն ու բուժքոյրերը այցելեցին կեդրոնները անհրաժեշտ բժշկական ծառայութիւն մատուցելու գծով:

4) Յաջորդող օրերուն Շրջ. Վարչութիւնը յառաջացուց Երկրաշարժի Շտապ Յանձնախումբ մը, որոնք աղետէն տուժած բնակարաններու եւ առողջապահական հարցեր ունեցող անհասներու ցանկեր պատրաստեցին, որպէսզի միութեանս տրամադրութեան տակ գտնուող դեղորայքը հասնի բոլորին անխտիր: Յանձնախումբը եւս ըստ կարիքի բաժնեց փոքրիկներու 40 քիլօ կաթ եւ 50 տոպրակ շոր նորածիններու եւ տարեցներու համար:

5) Նկատի ունենալով ցուրտ եղանակը, Սուրիահայ Օգնութեան Խաչի Աշխատանոցէն ներս անյապաղ սկիզբ առաւ բուրդէ ծածկոյթներու պատրաստութիւնը փոքրերու եւ մեծերու համար, որոնք տրամադրուեցան երկրաշարժի հետեւանքով տնագուրկ դարձած եւ վրաններու տակ ապաստանած ժողովուրդին:

6) Փետրուար 17, 2023ին Շրջ. Վարչութիւնը նիւթական օժանդակութիւն յատկացուց կարիքաւոր աւելի քան 500 ընտանիքի, իւրաքանչիւրին՝ 200.000 սուրիական ոսկի:

7) Շրջ. Վարչութիւնը իր անդամուհիներուն կարիքները հոգալու միտումով պիտու՛ճէ մը յատկացուց եւ ապահովեց քրոնիկ հիւանդութիւններու դեղորայք:

ԼԻԲԱՆԱՆ

Հոկտեմբեր 2019ին սկիզբ առած Լիբանանի տնտեսական տագնապն ու քաղաքական անկայուն իրավիճակը մեծապէս ազդեցին լիբանանահայութեան բնականոն կեանքին վրայ: Կեդրոնական Վարչութիւնը, լրջօրէն հետեւելով իրադարձութիւններուն, Նոյեմբեր 2019ին նիւթական օժանդակութիւն տրամադրեց Լիբանանահայ Օգնութեան Խաչին տեղական ծրագիրներու հետեւողական եւ անընդմէջ ընթացքը ապահովելու համար:

Գոյատեւման Պիտոյքներ

Սոյն ծրագրին ընդմէջէն, կարիքաւորներու՝ (որոնք արդէն ԼՕԽին կ'ապաւինին իրենց օրական դեղորայքին եւ ուտելիքին համար) կը յատկացուի մէկ ամսուայ ուտեստեղէն, դեղորայք եւ բարեկեցիկ կեանք ապահովելու հիմնական պիտոյքներ:

Յոյսի Արկղ

Սոյն ծրագրին ընդմէջէն ընտանիքներու կը յատկացուի 1 ամսուայ ուտեստեղէն:

«Լիբանանի Կողքին»

Օգոստոս 4, 2020ին Պէյրութի նաւահանգիստին մէջ տեղի ունեցած ահաւոր պայթումի հետեւանքով, երկրի տնտեսական եւ ընկերային տագնապները բազմապատկուեցան: Տասնեակ հայ ընտանիքներ մնացին անօթեւան եւ կորսնցուցին իրենց օրուան ապրուստը: ՀՕՄի ԿՎ-ը, պայթումէն մի քանի ժամ ետք արդէն կոչ ուղելով համայն հայութեան ու ՀՕՄի միաւորնե-

րուն, սկսաւ լիբանանահայութեան անմիջական օժանդակութեան դրամահաւաքի արշաւը <http://www.ars1910.org/standwith-lebanon>: Օգոստոս 15, 2020ին տեղի ունեցաւ «Լիբանանի Կողքին» առցանց դրամահաւաքը, որուն ընդհանուր գումարը հասաւ \$600,000 ամերիկեան տոլարի:

Առցանց համերգ մը կազմակերպուեցաւ Երկիր Մեդիա հեռուստարձկերութեան համագործակցութեամբ եւ Հայրենի թէ սփիւռքեան հայ արուեստագէտներու սիրայօժար մասնակցութեամբ:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

1975էն ի վեր Պուէնոս Այրէսի մէջ գործող ՀՕՄի «Օննիկ Պոտուրեան- Օհաննէս Տիարպէքիրեան» հանգստեան տունը հիմնական ծրագիր մըն է, որ միշտ գտնուած է ՀՕՄի Հարաւային Ամերիկայի Շրջանային վարչութեան ուշադրութեան կեդրոնը: Այս հանգստեան տան մէջ ներկայիս ապաստան գտած են 49 մամիկներ եւ պապիկներ՝ չորս յարկերու մէջ, ուր կը գործեն 38 պաշտօնեաներ:

Պէտք է նշել, որ Սան Փաօլոյի մէջ եւս 1990էն ի վեր կը գործէ ՀՕՄի Արփի մասնաճիւղի հանգստեան տունը:

ԱՐՑԱԽ

Սեպտեմբեր 27, 2020ին սկիզբ առած Արցախի պատերազմին առաջին իսկ օրէն, Կեդրոնական վարչութեան յայտարարած «Արցախին հետ, Արցախին համար» կոչին ընդառաջելով, ՀՕՄի բոլոր միաւորները գործի լծուեցան:

Գործադրուեցան Հետեւեալ աշխատանքները

- Հայաստանի ՀՕՄի կողմէ հիւանդանոցային յաճախակի այցելութիւններ:
- Տաք հագուստեղէն, սննդեղէն, ծածկոցներ եւ այլ անհրաժեշտ իրեր տրամադ-

րուեցան Հայաստանի մէջ ապաստան գտած մեր հայրենակիցներուն:

- ՀՕՄը մէկ ամսուայ համար Զուարթնոցի շրջանին մէջ 165 ապաստանեալներու սնունդը հոգաց:
- ՀՕՄի ճիգերով երկու շտապ օգնութեան ինքնաշարժներ ապահովուեցան:
- Յաճախակի դրութեամբ դեղորայք, յատուկ վիրակապեր եւ շտապ օգնութեան իրեր ղրկուեցան առաջնագիծ:
- ՀՕՄի Կեդրոնական վարչութիւնը մէկ հանգրուանով \$300 ամերիկեան տոլար յատկացուց Արցախի «Սօսէ» մանկապարտէզներու բոլոր ուսուցչուհիներուն, տնօրէններուն եւ մնացեալ պաշտօնէութեան:

«Թիկունք Կանգնիւք Արցախահայ Ընտանիքին»

Հիմնուելով ՀՕՄի միաւորներու անվերապահ աջակցութեան, Կեդրոնական վարչութիւնը որդեգրեց «Թիկունք Կանգնիւք Արցախահայ Ընտանիքին» անմիջական օժանդակութեան ծրագիրը, որ կը մտի 4 ամսուան տեւողութեամբ, ամսական դրութեամբ \$250 ամերիկեան տոլար նիւթական օժանդակութիւն տրամադրել տեղահան եղած արցախահայ աւելի քան 1000 ընտանիքներու՝ հոգալու համար սննդեղէնի, հագուստեղէնի եւ կենցաղային ծախսերը Հայաստանի եւ Արցախի մէջ:

Ընդհանուր յատկացում՝ \$1,200,000 (մէկ միլիոն երկու հարիւր հազար) ամերիկեան տոլար:

- \$1,000 ամերիկեան տոլար նիւթական աջակցութիւն տրամադրուեցաւ զոհուած ազատամարտիկներու ընտանիքներուն եւ \$500 ամերիկեան տոլար վիրաւոր զինուորներուն ընտանիքներուն:

Ընդհանուր յատկացում՝ \$54,500 ամերիկեան տոլար:

- Դատապարտելով Ատրպէյճանի եւ Թուրքի անմարդկային արարքները Ար-

ցախի անմեղ քաղաքացիներուն դէմ, ՀՕՄը բողոքի նամակներ յղեց Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Ընդհանուր Քարտուղար՝ Անթոնիօ Կութէրէսին, Մարդկային Իրաւանց ներկայացուցչութեանց եւ ՄԱԿ-ի մէջ տասնեակ երկիրներու ներկայացուցչութիւններուն:

• ՀՕՄի Գանատայի, ԱՄՆ Արեւմտեան եւ Արեւելեան Շրջաններու, Ֆրանսայի, Պելճիքայի, Յունաստանի հայ համայնքներուն եւ ՀՕՄի միաւորներուն համագործակցութեամբ, շուրջ \$3,500,000 ամերիկեան տոլարի արժողութեամբ բեռներ դրկուեցան դէպի Հայաստան եւ Արցախ:

• Օգոստոս 2022ին Բերձորի եւ Աղավնոյ գիւղերու խաղաղ բնակիչները տեղահանուեցան եւ այս տարածքները յանձնուեցան Ատրպէյճանին: Ստեփանակերտ տեղափոխուած գաղթականներուն յատկացուեցաւ \$10,000 ամերիկեան տոլար որպէս վերահաստատման օժանդակութիւն:

• Դեկտեմբեր 16, 2022ին մինչեւ Սեպտեմբեր 19, 2023 Արցախ կը գտնուէր շրջափակման մէջ: Այս ընթացքին Հայ Օգնութեան Միութեան Հայաստանի միաւորը կարողացաւ 10 թոն սնունդ մատակարարել Արցախի մեր հայրենակիցներուն:

Սեպտեմբեր 19, 2023 թուականի իրադարձութիւններէն ետք, ՀՕՄի Կեդրոնական վարչութիւնը իր բոլոր միաւորները զօրաշարժի ենթարկելով՝ անցաւ աշխատանքի: ՀՕՄի միաւորներուն եւ համակիրներուն աջակցութեան եւ յատկացումներուն շնորհիւ կարելի եղաւ իրականացնել հետեւեալ շտապ օժանդակութեան աշխատանքները:-

• Ապահովուեցան սննդեղէն, դեղորայք, հագուստեղէն, տնային առարկաներ, անկողիններ եւ բնակարաններ:

• Հաստատուեցան թէ՛ զիծեր եւ Հայաստանի ՀՕՄի գրասենեակը գրանցեց հա-

զարաւոր օժանդակութեան դիմումներ:

• Դիլիջանի ճամբարի մէկ շէնքը բնակելի դարձնելէ ետք տրամադրուեցաւ Արցախէն տեղահանուած 5 ընտանիքներու:

• Համազգայինի միջոցաւ տեղի ունեցան գեղարուեստական եւ հոգեբանական ծրագիրներ:

• Աւելի քան 7,500 արկղ սննդեղէն եւ մաքրութեան իրեր պատրաստուեցան եւ բաժնուեցան Հայաստանի զանազան մարզերու մէջ արցախահայ ընտանիքներու:

• Աւելի քան 445 արցախահայ ընտանիքներ ստացան նիւթական օժանդակութիւն, որոնց կարգին էին Արցախի ՀՕՄի գրասենեակի բոլոր պաշտօնեաները, ինչպէս նաեւ «Սօսէ» մանկապարտէզներու աշխատակազմը եւ երեխաներու ընտանիքները:

• Սեպտեմբեր 25ի Ստեփանակերտի մէջ տեղի ունեցած պայթումին պատճառով զոհուածներու երեխաները ընդգրկուեցան «Զոհուած Հերոսներու Զուակներ» ծրագրին մէջ:

• 974 ընտանիքներ ստացան դրամական օժանդակութիւն 40.000 դրամ (\$100 ամերիկեան տոլար) արժողութեամբ «Երեւան Սիթի» սննդամթերքի գնման կտրոններ: Այս ընտանիքներուն շարքին էին Արցախի պատերազմէն եւ պայթումէն զոհուածներուն եւ անհետ կորածներուն հարազատներն ու ընտանիքները:

• Նիւթական օժանդակութիւն տրամադրուեցաւ Գորիս քաղաքի եւ մօտակայ գիւղերու մէջ բնակութիւն հաստատած 53 արցախահայ ընտանիքներու:

• Աւելի քան \$155,000 ամերիկեան տոլար կրթաթոշակ յատկացուեցաւ արցախահայ ուսանողներուն:

Վերջին տարիներու ընթացքին ՀՕՄի Կեդրոնական վարչութիւնը այս ծրագիրներուն համար հանգանակած է \$6,522,712 ամերիկեան տոլար:

ԹԱԹՈՒԼ ՍՈՆԵՆՑ ՓԱՓԱԶԵԱՆԻ

Թաթուլի Սոնենցի Փափազեանի

ՎԱՍՏԱԿԻՆ



այ Սիրտ պարբերաթերթի տասնամեակներու վաստակաշատ խմբագիր, մտաւորական, բանաստեղծ, հրապարակագիր եւ ազգային գործիչ Թաթուլ Սոնենց-Փափազեան 2024ին պարբերաթերթին խմբագրութեան ջահը յանձնեց ՀՕՄուհիներէ բաղկացած նորակազմ խմբագրակազմին: Ան սակայն մնաց այդ կազմին խորհրդականը, որ իր խորհուրդներով եւ թելադրանքներով օգտակար հանդիսացաւ մեր աշխատանքներուն:

Թաթուլ Սոնենց-Փափազեան՝ հաւատարիմ մնալով ՀՕՄի առաքելութեան, նաեւ խմբագրեց եւ հրատարակութեան յանձնեց ՀՕՄի հրատարակութիւնները: Ան մասնակցեցաւ «Հայ Սիրտ»ի խմբագրական կազմին ժողովներուն, որոնց ընթացքին խօսեցաւ իր փորձառութեան մասին՝ դրուագներ ներկայացնելով: Ընկեր Թաթուլ ողջունեց յանձնախումբին անդամները եւ իր գոհունակութիւնը յայտնեց, որ անդամները մեծ եռանդ եւ կորով կը ցուցաբերեն իրենց աշխատանքին մէջ:

Ընկեր Թաթուլ իր խորհուրդներով եւ շինիչ թելադրանքներով ուղղութիւն տուաւ ընդհանուր աշխատանքին: Ան մանաւանդ շեշտեց ՄԱԿի մէջ դերակատարութիւն ունենալու ՀՕՄի կարելիութիւնը եւ ընդգծեց «Հայ Սիրտ»ի ելեկտրոնային տարբերակին տարածումը, միաժամանակ համոզում յայտնելով, որ տպագիր օրինակներուն ցրումը ՄԱԿի ծիրին մէջ գործող մարմիններուն եւ յանձնախումբերուն, իր կարելուր նպաստը կը բերէ ՀՕՄի ձայնը միջազգային շրջանակներու մէջ լսելի դարձնելու կարելուր գործին:

ՀՕՄի Կեդրոնական վարչութիւնը ընկեր Թաթուլի հանգստեան կոչուելուն առիթով հրապարակեց պաշտօնական հաղորդագրութիւն մը, որ լուսարձակի տակ կը բերէ մեր սիրելի ընկերոջ վաստակն ու գործունէութեան տարբեր հանգրուանները:

Ստորեւ՝ հաղորդագրութիւնը:

«Ընկեր Թաթուլ Սոնենց-Փափազեան՝ շուրջ երեսուն տարի Հայ Օգնութեան Միութեան Հրատարակութեան բաժանմունքը տնօրինելէ ետք, հանգստեան կոչուեցաւ յունուար 2024ին:

Մեծ է վաստակը ընկեր Թաթուլին հայութեան հաւաքական կեանքին եւ մասնաւորաբար Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ Հայ Օգնութեան Միութեան հասարակական, կազմակերպական եւ միութենական կեանքերուն մէջ:

Ան ծնած է Գահիրէ, Եգիպտոս: Համալսարանական իր ուսումը աւարտելէ ետք, ընկեր Թաթուլ աշխատակցած է տարբեր օրաթերթերու, շաբաթաթերթերու եւ ամսաթերթերու, ձեւաւորելով անոնց կողքերը: 1951էն 1957 գործած է Ամերիկեան Տեղեկատուութեան Գործակալութեան մէջ՝ իբրեւ հրատարակչական բաժնի վարիչ-գծագրիչ: Տեղին է յիշատակել ընկերոջ գծանկարիչի տաղանդը՝ ստեղծագործելով որմագրներ եւ նշանապատկերներ տարբեր միութիւններու եւ կազմակերպութիւններու համար:

Ընկեր Թաթուլ Սոնենց-Փափազեան 1957ին փոխադրուած է Միացեալ Նահանգներ: 1961էն 1972 վարած է University Press of

Cambridgeի վարիչ տնօրէնի պաշտօնը: 1972էն 1978 ունեցած է իր անձնական հրատարակչական ընկերութիւնը՝ գործակցութեամբ Հարվըրտ համալսարանի հրատարակչական գրասենեակի մասնագիտական հրատարակութիւններու բաժանմունքին: 1978էն սկսեալ գործած է իբրեւ ազատ մասնագէտ՝ հրատարակչական, խմբագրական եւ տպագրական մարզերու մէջ:

Ընկեր Թաթուլ ունի նաեւ թարգմանական բեղուն աշխատանք: Ան Անգլերէնի թարգմանած է բազմաթիւ բանաստեղծութիւններ եւ յօդուածներ, ինչպէս օրինակ՝ Անդրանիկ Ծառուկեանի «Թուղթ Առ Երեւան»ը՝ գործակցաբար Ռուբէն Ծանապազեանի եւ Դանիէլ Վարուժանի «Հացին Երգը»՝ գործակցաբար Վիգէն Թիֆէնքճեանի: Պէտք չէ մոռնալ ընկերոջ մեծ ներդրումը՝ Համագգայիի թատերական կեանքին, որուն իր մասնակցութիւնը բերած է երկար տարիներ:

Ընկեր Թաթուլը արժանացած է զանազան պատուագրերու, մրցանակներու եւ շքանշաններու, ինչպէս՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Մեսրոպ Մաշտոց շքանշանին, ԱՄՆ Արեւելեան շրջանի Հայ Դատի յանձնախումբի «Վահան Քարտաշեան» շքանշանին եւ Հայ Օգնութեան Միութեան Արեւելեան Ամերիկայի Շրջանային վարչութեան «Է. Ակնունի» մրցանակին:

Ընկեր Թաթուլ մեծ պատասխանատուութեամբ վարած է ՀՅԴ եւ Հայաստանի առաջին հանրապետութեան արխիւներու պատասխանատուի պաշտօնը՝ անձնուիրաբար եւ հաւատարմօրէն կատարելով իրեն տրուած բոլոր պարտականութիւնները: Զուգահեռաբար այս պաշտօնին, ընկեր Թաթուլ նաեւ վարած է «Արմինիըն Ռիվիու»-ի խմբագրի պաշտօնը:

Ինչ կը վերաբերի Հայ Օգնութեան Միութեան, ապա **ընկեր Թաթուլ** շուրջ երեսուն տարի անընդմէջօրէն կատարած է միութեան հրատարակութիւններու բաժանմունքի տնօրինումը, յատուկ ուշադրութեան առարկայ



դարձնելով ՀՕՄի «Հայ Սիրտ» պարբերականը: Ան նաեւ վարած է միութեան կեդրոնական գրասենեակի վարիչ տնօրէնի պաշտօնը:

Ընկեր Թաթուլ կը հանդիսանայ մէկ անձնուէր գործիչը այն սերունդին, որ գործեց խոր գիտակցութեամբ՝ իր գիտելիքը եւ փորձառութիւնը ի սպաս դնելով Հայ Դատին եւ առհասարակ հայ հասարակական եւ միութենական կեանքերուն, իբրեւ ղեկավար, խմբագիր, հրատարակութիւններու վարիչ, թարգմանիչ եւ մտաւորական:

Հայ Օգնութեան Միութիւնը երախտապարտութեան եւ երախտագիտութեան զգացումներով պիտի յիշէ **ընկեր Թաթուլ Սոնենց-Փափազեանի** վաստակը՝ երկար եւ առողջ կեանք մաղթելով սիրելի ընկերոջ:»

HONORING TATUL SONENTZ-PAPAZIAN'S *Tatul Sonentz-Papazian* DECADES OF SERVICE TO THE ARS

The Archives and Publications Director of the Armenian Relief Society (ARS), Tatul Sonentz-Papazian, retired in January 2024 after three decades of dedicated service.

Unger Tatul has made significant contributions to the Armenian community, culture and art, particularly through his involvement with the Armenian Revolutionary Federation (ARF) and the ARS.

Born in Cairo, Egypt, Sonentz-Papazian pursued a university degree before starting a career as a graphic designer for various newspapers. In 1951, he joined the U.S. Foreign Service, serving as the art and publications director for the U.S. Information Agency. After six years, in 1957, he moved to the United States and became the executive director at the University Press of Cambridge. From 1972

to 1978, he collaborated with the Harvard University Publications Office to establish a publishing company. Following this venture, he worked as a freelancer in publishing, editing and printing. Sonentz-Papazian also utilized his excellent painting and graphic design skills to create posters and logos for many Armenian organizations.

Unger Tatul is passionate about translation, and his work shows his dedication. He has translated numerous books, poems and articles. His most recent project is an English translation of Antranig Tzarukian's "Letter to Yerevan," which he completed in collaboration with Rupen Janbazian. He also translated Daniel Varouzhan's "Song of the Bread," edited by Viken Tufenkjian. In addition to his translation work, he has made significant contributions to the activities of the Hamazkayin Theatre over many years.

His outstanding contributions have been recognized through several prestigious awards, including the Mesrob Mashtots Medal from the Cilicia Catholics, the Armenian National Committee of America (ANCA) Eastern Region Vahan Cardashian Award and the E. Agnoui Award from the ARS Eastern Region.



Photo by MUSHEGHYAN

ՀԱՐՑԱԳՐՈՅՑ ՕԺԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ՀԵՏ, ԳՈՐՍ ՏԱՍՆԱՄԵԱԿՆԵՐՈՒ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Օժիկ Գրիգորեան

Հայ Սիրտ պարբերաթերթը հարազատ գրոյց մը ունեցաւ ՀՕՄԻ Կեդրոնական վարչութեան գրասենեակի ընդհ. հաշուապահ ընկհ. Օժիկ Գրիգորեանի հետ:

Հնկհ. Օժիկ տասնամեակներ աշխատելով ՀՕՄԻ գրասենեակի մէջ իր ներդրումը ունեցած է միութեան գործունէութեան եւ առաքելութեան մէջ:



- Հնկհ. Օժիկ, ե՞րբ սկսած էք ձեր աշխատանքը ՀՕՄԻ Կեդրոնական Վարչութեան գրասենեակէն ներս, եւ ինչպէ՞ս ծաւալած է ձեր գործը տարիներու ընթացքին:

1983ին, նախքան ՀՕՄԻ Համահայկական ժողովը, որ տեղի պիտի ունենար Ֆրանսա, իբրեւ կամաւոր սկսայ օժանդակել օրին վարիչ տնօրէնուհի՝ ընկերուհի Արփի Պալեանին ժողովի նախապատրաստական աշխատանքներուն:

Իսկ որպէս պաշտօնայ սկսայ աշխատիլ նախ քարտուղարուհիի օգնական, աւելի ուշ ստանձնեցի քարտուղարուհիի, ապա գրասենեակի տնօրէնուհիի պաշտօնները: 2005 էն սկսեայ, ստանձնեցի գրասենեակի հաշուապահի պաշտօնը (financial manager):

- Ձեր աշխատանքի առաջին օրէն ականատես եղած էք Հայ Օգնութեան Միութեան զարգացման: Կրնա՞ք նկարագրել ձեր անձնական փորձառութիւնը՝ ի տես միութեան կրած բոլոր փոփոխութիւններուն, արձանագրած յաջողութիւններուն ու դիմագրաւած մարտահրաւիրներուն:

Բոլոր աշխատանքները հեզասահ կ'ընթանային մինչեւ որ 1988ի երկրաշարժը տեղի ունեցաւ եւ Արցախի ազատագրական պայքարը սկսաւ: Այս երկու դէպքերը փոխեցին ՀՕՄԻ գործունէութեան ընթացքը եւ դիմագրաւեցինք նոր մարտահրաւիրներ: Հայաստանի Հանրապետութեան վերանկախացումէն ետք, ստեղծուեցաւ ՀՕՄԻ Հայաստանի կառոյցը եւ ՀՕՄԻ աշխատանքը աւելի մեծ ծաւալ ստացաւ: Աւելի վերջ, 1993ին, կազմուեցաւ Արցախի մեկուսի մասնաճիւղը, որուն հետեւանքով գործերու ծաւալումը կրկնապատկուեցաւ: Ապա ընթացք առին աշխատանքները՝ ՀՕՄԻ Որբախրանամ ծրագիրը, մեծ քաղաքներու մէջ հիմը դրուեցաւ ՀՕՄԻ կեդրոններու՝ ինչպէս Վանաձորի, Կիւմրիի, Զանգեզուրի շրջանի: Ապա սկսաւ ՀՕՄԻ Օր ծրագիրը, որ Հայաս-

տանի մէջ գործող մանկատուներու միօրեայ ճաշ կը հայթայթէր: Այժմ ծրագիրը ջնջուած է: 1998ին բացումը կատարուեցաւ ՀՕՄի առաջին մանկապարտէզին՝ Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ եւ աւելի ուշ Ջալալաբի տարածքին մէջ երիտասարդական կեդրոններուն եւ նախաձեռնուեցան այլ ծրագիրներ: Այս բոլորը անշուշտ իրականութիւն դարձան ՀՕՄի բոլոր միաւորներուն եւ նուիրատուներուն ներդրումներով:

Մարտահրաւէրները շատ էին, օրինակ՝ գումարներու փոխանցում, ծրագիրներու հետեւողականութիւն, նամանաւանդ Միջին Արեւելքի քաղաքական իրավիճակին մէջ՝ Սուրիոյ երկրաշարժը, Լիբանանի նաւահանգիստի պայթումը, պատերազամը եւ ընկերային ու տնտեսական ճգնաժամը ստեղծեցին տագնապային այնպիսի իրավիճակ մը, որ կարելի եղաւ յաղթահարել շնորհիւ մեր կազմակերպութեան անդամներուն եւ պատասխանատու մարմիններուն շրջահայեաց գործունէութեան:

- Տարիներու ընթացքին, առիթունեցած էք մեկնելու Հայաստան եւ Արցախ: Կրնա՞ք նկարագրել, թէ ՀՕՄը ինչպիսի՞ փոփոխութիւն կրցած էր մուծել երեխաներուն, կանանց եւ ընդհանրապէս բնակչութեան կեանքին մէջ՝ կազմակերպելով զանազան ձեռնարկներ Արցախի եւ Հայաստանի մէջ:

1991 թուականէն ի վեր Հայաստան այցելած եմ 32 անգամ, իսկ Արցախ՝ 12, որոնցմէ Հայաստան 12 անգամ, իսկ Արցախ 5 անգամ այցելութիւններուն գործուղողուած եղած եմ տարբեր նախաձեռնութիւններու ծիրին մէջ:

Որբախնամ ծրագիրները, լրագոյն ուսանող ծրագիրը, ՀՕՄի Ամանոր ծրագիրը (նեցուկ կանգնելով նաեւ տարեցներու տան),

Մօր ու Մանկան կեդրոնը, բազմազանական ընտանիքներու ծրագիրը, 44-օրեայ պատերազմէն եւ Արցախի յանձնումէն ետք Արցախէն բռնի տեղահանուած մեծ թիւով համալսարանական ուսանողներու եւ ընտանիքներու օժանդակութիւնն ու նիւթական աջակցութիւնը եւ ներկայիս Յոյսի Օճախ ծրագիրները կրցած են փոփոխութիւն մուծել շատերու կեանքին մէջ: Բարձր գնահատելի է ՀՕՄի ինչպէս նաեւ Սփիւռքի հայ վարժարաններուն դերակատարութիւնը եւ ներդրումը այս ծրագիրներուն մէջ:

Այսօր եւս ՀՕՄը կը շարունակէ իր ծրագիրները Հայաստան ապաստանած մեր արցախցի եղբայրներուն եւ քոյրերուն օժանդակութեան ձեռք երկարելով:

- Ընկն. Օժիկ, դուք կեանք մը ամբողջ անցուցած էք ՀՕՄի գրասենեակէն ներս, որուն համար միութիւնը միշտ ալ երախտապարտ պիտի մնայ ձեր երկարամեայ ծառայութեան: Ինչպիսի զգացումներ ունիք ներկայիս գիտնալով, որ շուտով պիտի հեռանաք ձեր պաշտօնէն եւ յատկաապէս անձնակազմէն ու իրերայաջորդ վարչութեանց անդամներէն, որոնց հետ աշխատած էք տարիներ: Յիշեցէք իւրաքանչիւր իրադարձութիւններ, երբ պէտք եղած է գոյացնել կարելորորոշումներ, որոնք, ի վերջոյ, պիտի ազդէին հայրենիքի եւ ՀՕՄի վրայ:

1992էն ետք, յաճախ մինչեւ ուշ գիշեր մնացած եմ գրասենեակ, ընկերուհի Անահիտ Մեսրոպեանին հետ աշխատելով Որբախնամ Ծրագրին վրայ: Սիրտս պիտի ձգեմ ՀՕՄի գրասենեակը, բայց միեւնոյն ժամանակ պիտի վայելեմ ժամանակա ընտանիքիս եւ թոռներուս հետ:

ՀՕՄի իրարայաջորդ Կեդրոնական վար-

չութիւններուն բոլոր անդամներուն հետ ունեցած եւ սերտ յարաբերութիւն եւ շատ լաւ գործակցած եւ բոլորին հետ: Տարիներու ընթացքին, իրաքանչիւր վարչութեան կազմէ շատ բան սորված եմ: Ինծի համար յատկանշական են Ընկեր Թաթուլին (Սոնենց Փափագեան) հետ աշխատակցած տարիներս: Շատ բան սորված եմ իրմէ եւ երախտապարտ եմ իրեն, մանաւանդ արեւմրտահայերէնով գրութիւններս զարգացնելու համար: Առանց ռելէ մէկուն գործն ու աշխատանքը, ինչպէս նաեւ ներդրումը թերագնահատելու, կ'ուզեմ նշել, թէ ընկերուհի Արփի Պալեան մեծ դերակատարութիւն ունեցած է իմ մէջս զարգացնելու ՀՕՄի նկատմամբ սէրս եւ նուիրումս:

Յատուկ դէպքերէն կրնամ յիշել օրինակ՝ երբ 1990 թուականի սկիզբը, Washington Kennedy Center-ին մէջ Հայաստանի երկրաշարժին նուիրուած ձեռնարկ մը կազմակերպուեցաւ, որուն ներկայ էին բոլոր երկիրներու հիւպատոսները եւ դեսպանները: Նոյնպէս յիշատակելի իրադարձութիւն մը եղաւ 90-ամեակի առթիւ հայրենի նկարիչներու կողմէ ՀՕՄին նուիրուած 23 գեղանկարները: Մայիս 28, 1998ին Սօսէ Մայրիկի աճիւնի փոխադրութիւնը Եգիպտոսէն Հայաստան, եւ անոնց ամփոփումը Եռաբլուրի մէջ: ՀՕՄի բացառիկ իրագործումներէն մին եղաւ «Սօր ու Մանկան» կից ծննդատունը, որուն բացումը կատարուեցաւ Ապրիլ 2005ին: Ծննդատան մէջ կատարուած առաջին ծնունդը մանչուկ մըն էր, զոր կոչուեցաւ «Վրէժ», իսկ այդ օրուան Կեդրոնական վարչութեան անդամ ընկի. Յասմիկ Տէրտէրեան եղաւ իր կնքամայրը:

- Որպէս տարիներու փորձառու ՀՕՄուհի, ինչպիսի՞ խրատներ կ'ուզէք փոխանցել նորագիր երիտասարդներուն, որոնք նոր մուտք պիտի գործեն ՀՕՄի շարքերէն ներս:

Խրատս հետեւեալն է՝ ՀՕՄի ուղին շատ երկար է, նուաճումներով եւ խոչընդոտներով լեցուն: Երբեք պէտք չէ յուսահատիլ եւ հիասթափիլ: Այս աշխատանքը նուիրումի, համբերութեան եւ երկար շունչի կը կարօտի: Ձեր սխալներէն սորվեցէք եւ փորձառութիւն շահելով դուք ալ ձեր ներդրումը ունեցէք ՀՕՄի գործունէութեան մէջ: Կը խորհիմ, որ անխուսափելի է ՀՕՄի շարքերուն երիտասարդացումը, որպէսզի մեր կազմակերպութիւնը իր առաքելութիւնը շարունակէ եւ սերնդափոխութեան բնական պայմաններու մէջ կարենայ իր ներդրումը արձանագրել: Մեր երէց եւ փորձառու ընկերուհիներուն կ'առաջարկեմ իրենց խրատներով եւ իմաստուն գաղափարներով թեւ եւ թիկունք կանգնին մեր երիտասարդ ՀՕՄականներուն, զանոնք համարելով ՀՕՄի գլխագիր առաքելութեան շարունակականութիւնը ապահովող ջահակիրները, եւ այսպիսով բոլորս պիտի յաջողինք մեր կազմակերպութեան յարատեւութիւնը երաշխաւորել:

- Ի՞նչ միտքեր կրնաք փոխանցել ՀՕՄի ապագային առնչութեամբ:

115 տարիներու ընթացքին, ՀՕՄը իր վերելքներով եւ նուաճումներով կը շարունակէ գոյատեւել: Անկասկած, որ այս հսկայ կազմակերպութիւնը, իր ամբողջ կառոյցով պիտի շարունակէ տոկալ եւ դիմագրաւել ներկայ եւ ապագայ համահայկական եւ համաշխարհային մարտահրաւերները: Մեր միութիւնը իր 115 ամեայ փորձառութեամբ եւ պատմութեամբ, տասնամեակներու ընթացքին իր գործունէութեան ոճը յարմարեցուցած է օրուան փոփոխութիւններուն, բայց միշտ մնալով իր հիմնական ուղիին վրայ, շարունակելով իր առաքելութիւնը՝ ի նպաստ հայ ժողովուրդին:

Interview with Ungh. Ojik Gregorian,

Ungh. Ojik Gregorian,

ARS CEB's Financial Manager

Q: When did you start your work at the ARS CEB office and how has your role evolved?

A: Prior to the ARS International Convention being held in France in 1983, I volunteered to assist the Executive Director, Ungh. Arpy Balian, with the necessary preparation for the upcoming convention. Over the years my role evolved from Office Assistant, to Secretary, to Executive Director, and finally as Financial Manager since 2005.



Q: Can you describe what your personal experience has been seeing all the changes... successes, challenges?

A: Two pivotal events, the 1988 earthquake and the liberation struggle for Artsakh, upended the office environment bringing on various challenges with the initiation of new ARS programs. I witnessed the establishment of the new Armenia region and the Artsakh chapter. The Sponsor-A-Child program was implemented to assist orphaned children, along with the sponsorship of the "ARS Day" meal program for orphanages. The first Soseh Kindergarten was renovated and officially opened in 1988 in Stepanakert, Artsakh, and later youth centers were established in Javakhk (Georgia).

Challenges continued with the ongoing conflicts in the Middle East, the earthquake in Syria, and the explosion at the port in Lebanon – all contributing to financial calamities in the region. Thanks to the combined efforts of our global membership and leadership, these challenges were resolved.

Q: Can you describe how the ARS was making a difference in the lives of children, women and the general population through the various initiatives that were being organized in Artsakh and Armenia?

A: Since 1991, I have traveled to Armenia 32 times; I also traveled to Artsakh a dozen times, mostly on ARS assignments. Over the years, all

the Armenia and Artsakh programs have played a vital role in the lives of so many women and children, and I have personally witnessed the contributions of our leadership, membership and even Diasporan schools to these programs. Following the displacement of our Artsakh brothers and sisters, the “Hearths of Hope” (Hooysee Ojakhner) program provides housing to multigenerational families.

Q: How do you feel about retiring from your position?

A: Since I started working on the Sponsor-A-Child program in 1992 with Ungh. Anahid [Mesrobian in Armenia], I remember spending late nights at the office. Now that I am contemplating retirement, I am looking forward to spending more time with my family, especially my grandchildren.

I enjoyed working with many of the elected board members from all over the world and learned a lot from them. I am especially grateful for my working relationship with Ung. Tatul [Sonentz Papazian] as well as with Ungh. Arpy Balian, who influenced me greatly in developing my love and appreciation for the ARS.

I have fond memories of the special earthquake benefit event held at the Washington Kennedy Center in 1990 with the attendance of diplomats from all over the world. The ARS 90th anniversary was special since 23 artists

provided their paintings dedicated to the ARS. The transfer of Soseh Mayrig’s remains from Egypt to Yeraploor on May 28, 1998, was also very memorable. The addition of the birthing center building to the Akhouryan Mother and Child Health Center was also a great accomplishment in April 2005, where Ungh. Hasmig Derderian was godmother to the first-born child named “Vrej”.

Q: What advice would you give to the younger generation of ARS Members?

A: The ARS path is a long and challenging road, my advice to the young generation is to never give up and remain steadfast. Our success depends on being patient, dedicated and perseverance. We all learn from our mistakes. As you gain more experience, your input into the organization will be invaluable. It’s always appreciated when the experienced and older generation provides guidance and encouragement to the younger generation, supporting their new ideas and initiatives.

Q: Any thoughts about the future of the ARS?

A: I am confident that this 115-year-old organization with a solid foundation, will persevere and continue to prosper globally to serve the Armenian people.

.....

I am confident that this 115-year-old organization with a solid foundation, will persevere and continue to prosper globally to serve the Armenian people.

.....

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ



ARS REGIONS (2010-2025)

ՀՕՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆՁՆԵՐՈՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՐՋԱՆ

Պատմական ակնարկ

Հայ Օգնութեան Միութեան (ՀՕՄ) պատմութիւնը սկիզբ առած է 1 Յունուար 1910ին, Նիւ Եորք քաղաքէն՝ Խաչատուր Մալումեանի (Ակնունի) առաջնորդութեամբ եւ հիմնադրութեամբ: Ի տես մօտալուտ վտանգներուն՝ խումբ մը մտահոգուած հայ կանայք նպատակ դրած էր համախմբել հայ կանանց մեծ եւ անշահագործ կարողութիւնները՝ կարիքի ժամուն իրենց ցիրուցան ժողովուրդին ծառայելու նպատակով:

Հիմնադրութեան ժամանակ միութիւնը կոչուեցաւ Հայկական Կարմիր Խաչ եւ այդ անունով ճանչցուեցաւ Միջազգային Կարմիր Խաչի կողմէ: 1921ին միութիւնը հրաւիրուեցաւ՝ մասնակցելու Միջազգային Կարմիր Խաչի 10րդ Միջազգային Համագումարին, որ կայացաւ Ժընեւ, Զուիցերիա: Սակայն, 1918ին Հայաստանի Առաջին Հանրապետութեան անկումէն

ետք, միութիւնը այլեւս ի զօրու չէր պահելու իր ճանաչումը, ուստի վերածուեցաւ սփիւռքահայ օժանդակ կազմակերպութեան, որ տարբեր երկիրներու մէջ աշխատեցաւ զանազան անուններով, բայց միշտ ընդունելով հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներու կեդրոնէն եկող առաջնորդութիւնը:

1979ին միութեան Ամերիկայի Միացեալ Նահանգներ կեդրոն ունեցող Շրջանային վարչութիւնը կատարեց կրկնակի դեր՝ շրջանային եւ միջազգային գետնի վրայ: Միութիւնը միջազգային մակարդակով կը մեծնար եւ ի վերջոյ դարձաւ աշխարհի ամէնէն մեծ հայ կանանց կազմակերպութիւնը: Յուլիս 1979ին կայացած Համահայկական Պատգամաւորական ժողովի ընթացքին վերատեսութեան ենթարկուեցաւ կանոնագիրը եւ հիմնուեցաւ Կեդրոնական վարչութիւն՝ Հայ Օգնութեան Միութիւն (ARS Inc.) անուան տակ, որ դարձաւ կազմակերպութեան բարձրագոյն մարմինը: Միացեալ Նահանգներու շրջանային կառոյ-

| 41



Բ. ՊԱՏԳԱՄ. ԺՈՂՈՎ (Փոստալական Փոստան, 1919, Յուլիս 2-5)

ARS 2nd Convention 1919

ցը վերանուանուեցաւ Հիւսիսային Ամերիկայի Հայ Օգնութեան Միութիւն՝ ներառելով ամբողջ Միացեալ Նահանգներն ու Քանատան:

1984ին, նկատի ունենալով Արեւմտեան Միացեալ Նահանգներու հայ համայնքի արագ աճը, ստեղծուեցաւ նոր շրջանային մարմին՝ Հայ Օգնութեան Միութիւն Արեւմտեան ԱՄՆ, ներառելով Միսիսիպի գետէն արեւմուտք գտնուող բոլոր նահանգները: Միացեալ Նահանգներու Արեւելեան ափն ու Քանատան շարունակեցին գործել Հիւսիսային Ամերիկայի Հայ Օգնութեան Միութիւն անունով մինչեւ 1990, երբ Քանատան պաշտօնապէս դարձաւ առանձին շրջան: Այսպէս, 1990ին սկիզբ դրուեցաւ Արեւելեան Ամերիկայի Հայ Օգնութեան Միութեան (ARSEUSA), որ ունէր 33 մասնաճիւղ՝ Միսիսիպի գետէն արեւելք:

Այսօր, Արեւելեան շրջանը ունի 35 մասնաճիւղ՝ 14 նահանգներու եւ մայրաքաղաքին մէջ եւ աւելի քան 1120 անդամներ:

1990էն ի վեր, Արեւելեան Ամերիկայի Հայ Օգնութեան Միութիւնը, որուն արմատները ուղղակի կապուած են Հայ Օգնութեան Միութեան (ARS) մեծ ընտանիքի հիմքին եւ ծննդեան հետ, եղած է ՀՕՄԻ ամէնէն հզօր սիւներէն մէկը եւ ներգրաւուած է ՀՕՄԻ մարդասիրական տարբեր ծրագիրներուն, որոնք կ'իրականացունին տարածաշրջանի եւ հայրենիքի դաստիարակչական, առողջապահութեան եւ ընկերային ծառայութիւններու մարզերուն մէջ:

Ծրագիրներ եւ գործունէութիւն

ՀՕՄԻ Արեւելեան Շրջանի ՆՈՐԵԱՆ Երիտասարդական Ծրագիր

Նորեան Երիտասարդական ծրագիրը ծնունդ առած է Հայ Օգնութեան Միութեան Ամառնային Դասընթացք Ծրագիրէն, որ սկիզբ առած է 1971ին: Այս ծրագիրը բարձրագոյն ուսումնական մակարդակի ուսանողներուն կարելիութիւն կու տայ ծանօթանալ հայոց

պատմութեան, գրականութեան եւ մշակոյթին՝ իր բոլոր առումներով. ծրագիրը կը կազմակերպուի Հիւսիսարեւելեան տարբեր համալսարաններու մէջ: Ծրագիրը կը տեսէ երկու շաբաթ եւ բանախօսները պատմութեան, լեզուի, երաժշտութեան եւ շարժանկարի մասնագէտներ են: Այս ծրագիրը դարձաւ ամառնային հաւաքատեղի հայ ուսանողներուն համար, որոնք փափաքը ունին քննարկելու, ուսումնասիրելու եւ գնահատելու իրենց ազգային ժառանգութիւնները: Ծրագիրը կը շարունակուի մինչեւ այսօր՝ աշնան մէկ շաբաթավերջի համար, հիմնական վայր ընտրելով Նիւ Եորքի Քոլումպիա Համալսարանը: Ամէն տարի 60է աւելի ուսանողներ կը մասնակցին այս ծրագիրին, որ կը ֆինանսատրուի Նորեան կտակին շահարկումներէն գոյացած գումարով եւ կոչուած է իր նուիրատուի անունով՝ ՀՕՄԻ Նորեան Երիտասարդական Ծրագիրը:

ՀՕՄԻ Արեւելեան Շրջանի

Կրթաթոշակներ

Արեւելեան Ամերիկայի Հայ Օգնութեան Միութիւնը՝ 1980ականներու սկիզբէն, կը տրամադրէ կրթաթոշակներ ամերիկահայ ուսանողներուն պսակաւոր (Bachelor) եւ մագիստրոսի (Master) մակարդակով: Մագիստրոսի կրթաթոշակային հիմնադրամը՝ «**Լազարեան Մագիստրոսի Կրթաթոշակ**» նախատեսուած է այն ուսանողներուն համար, որոնք աւարտած են Միացեալ Նահանգներու մէջ գործող համալսարաններու քառամեայ ծրագիրը՝ ստանալով (Bachelor) վկայական: Անոնք կրնան դիմել Լազարեան կրթաթոշակին՝ Միացեալ Նահանգներու մէջ գործող համալսարաններու մագիստրոսական ուսումնական ծրագիրներու համար:

Նախաաւարտական Կրթաթոշակներ. նախատեսուած են այն ուսանողներուն համար, որոնք ուսում կը ստանան ԱՄՆ-ի քառամեայ ծրագիր ունեցող համալսարաններու մէջ:

Յակոբ եւ Փրլլ Մուրատեան Կրթա-



ARS EUSA 100th Regional Convention

թոշակ: Այս կրթաթոշակը հիմնադրուած է 2018ին՝ աջակցելու ԱՄՆ-ի հայ այն ուսանողներուն, որոնք կը փափաքին բարձրագոյն կրթութիւն ստանալ Հայաստանի մէջ:

Ալաճաճեան Հնտանիքի Կրթաթոշակ: Այս կրթաթոշակին կրնան դիմել Միջին Արեւելքի այն ուսանողները, որոնք կ'ուսանին Միացեալ Նահանգներու մէջ գործող եւ ուսումնական քառամեայ ամբողջական ծրագիր ունեցող համալսարանի մը մէջ:

Արին Արմէնեան կրթաթոշակ.- Վաղամեռիկ Արին Արմէնեանի ընտանիքին կողմէ հաստատուած կրթաթոշակ է, որ կը յատկացուի ամէն տարի այն կարօտեալ ուսանողին, որ Լիբանանի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարանին մէջ գերազանց է բանաստեղծութեան կամ այլ ստեղծագործական արուեստին մէջ:

Սէֆէրեան կրթաթոշակ,- Այս կրթաթոշակին կրնան դիմել այն աշակերտները, որոնք պիտի մասնագիտանան Գիտութեան մարզին մէջ:

Ազգային Ուսումնական Խորհուրդ (ANEC)

Արեւելեան Ամերիկայի Հայ Օգնութեան Միութիւնը գործօն կերպով աջակցած է տա-

րածաշրջանի հայկական ամէնօրեայ եւ միօրեայ դպրոցներուն ու կը շարունակէ աջակցիլ միանալով Ազգային Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդին (ANEC)

Արեւելեան Ամերիկայի Հայ Օգնութեան Միութիւնը ամառային ըրած է տարեկան նուէրներ յատկացնել Միամանթօ վարժարանի շրջանաւարտներուն: Միամանթօն առցանց կրթական ծրագիր է, 13-18 տարեկան աշակերտներու համար եւ հասանելի է Արեւելեան տարածաշրջանի բոլոր ուսանողներուն:

Արեւելեան Ամերիկայի Հայ Օգնութեան Միութիւնը Սուրբ Ծնունդի առթիւ նուէրներ կը բաշխէ Ազգային Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդին (ANEC)ի հովանիին տակ գտնուող դպրոցներու աշակերտութեան: 2023ին Սուրբ Ծնունդին 83 ուսուցիչներ ստացան \$50 Amazon-ի պարգեւագրեր իբր երախտագիտութիւն անոնց աշխատանքին եւ նուիրումին՝ հայ լեզուն նորահաս սերունդներուն ուսուցանելու գործին մէջ:

ՀՕՄի Մրցանք

ՀՕՄի Արեւելեան Շրջանի շարադրութեան մրցանքը արդէն երկար տարիներէ ի վեր կը կազմակերպուի Արեւելեան Ամերիկայի հայկական ամէնօրեայ եւ միօրեայ դպրոցներու



Regional Convention 1989-1990

մասնակցութեամբ: Այս մրցանքին նպատակն է քաջալերել հայ աշակերտները, որպէսզի մտածեն հայկական նիւթերու մասին, ընդարձակեն իրենց ընդհանուր գիտելիքները, զարգացնեն գրելու կարողութիւնները եւ կարելիութիւն ունենան քննարկելու շարադրութեան նիւթերը՝ ուսուցիչներու եւ դասընկերներու հետ:

Վերջին քանի մը տարիներուն, շարադրութեան կողքին աւելցուած են նաեւ արուեստի եւ տեսերիզի մրցանքները, որոնք մեծ յաջողութիւն արձանագրած են: Ամէն տարի շարադրական մրցանքին լաւագոյն աշխատանքները կը յայտարարուին եւ կը հրատարակուին «Armenian Weekly»-«Հայրենիք» շաբաթերթերուն մէջ:

Հայերէնի Դասընթացքներ

Արեւելեան շրջանը 2023ին սկսաւ կազմակերպել չափահասներու համար նախատեսուած առցանց հայերէնի դասընթացքներ: Ծրագիրը կազմուած է Ազգային Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդին «Եկէք Խօսինք» գրոյցի գիրքերուն եւ ուսուցիչներու մշակած առցանց այլ ծրագիրներու հիման վրայ: Ծրագիրը մեծ յաջողութիւն ունեցաւ: Դասերը կը կազմակերպուին աշնան եւ գարնան՝ տասը դասի շարքով: 2024-ի աշնան, սկսնականներու համար ընթերցանութեան դասեր եւս աւելցուեցան:

Ուսուցողական Անկիւն

ՀՕՄԻ Արեւելեան Շրջանի Ուսուցողական Անկիւնը առցանց կրթական եւ զուարճալի հարթակ մըն է, ուր աշակերտներուն կարելիութիւն կու տայ իրենց տուներէն ներս նստած դիտել եւ ունկնդրել Ուսուցողական տեսանիւթեր: Արեւելեան շրջանը կը շարունակէ հովանաւորել «Armlands» կրթական տեսանիւթերը, որոնք կը ներառեն «Մեր Լեզուն» հայերէնի դասագիրքը, որ կ'օգտագործուի Արեւելեան եւ Արեւմտեան շրջաններու միօրեայ եւ ամէնօրեայ դպրոցներուն, ինչպէս նաեւ Գանատայի մէջ:

Ուսուցողական Անկիւնը կը ներառէ բազմաթիւ տեսանիւթեր՝ արեւմտահայերէնով, որոնք կ'օգնեն բոլոր տարիքի ուսանողներուն ծանօթանալու մեր հարուստ պատմութեան եւ ասանդոյթներուն: Տեսանիւթերը կարելի է դիտել հետեւեալ յղումով (<https://arseastusa.org/education-corner/>):

«Արցախը Մե՛րն է...»

Մանկապատանեկան Գիրք

Արեւելեան ԱՄՆի ՀՕՄԻ Շրջանային վարչութիւնը՝ համագործակցելով ՀԱՅԿԱՇԽԱՐՀի հետ, հրատարակեց «Արցախը Մե՛րն է...» մանկապատանեկան նկարազարդ գիրքը, որ կը խօսի Արցախի պատմութեան, բնութեան, եկեղեցիներու, զինանշանի, նահանգներու եւ

կարելու վայրերուն մասին:

Յոյսով ենք, որ նորաճ, նկարագրող եւ տեղեկութիւններով հարուստ այս գիրքը կը գրաւէ մեր երեխաները, կը նպաստէ ինքնութեան պահպանման եւ մեծ տարածում կը գտնէ:

ՀՕՄ Արեւելեան Շրջանի Սեմինարներ

Սեմինարները կը ներառեն դաստիարակչական եւ կազմակերպական նիւթեր: Անոնց նպատակն է անդամները վերապատրաստել ՀՕՄի ծրագիրներուն եւ գործունէութիւններուն, նաեւ ներգրաւել նոր անդամներ:

Շրջանային սեմինարներու մուտքը ազատ է ՀՕՄի անդամներուն եւ գաղութի անդամներուն համար: Սեմինարներուն աւարտին կը կազմակերպուին ընկերական հաւաքներ:

2024ին սեմինարը առաջին անգամ ըլլալով տեղի ունեցաւ «Royal Caribbean Freedom of the Seas» նաւով Պահամաս կղզիներ ճամբորդութեան ընթացքին: 2025 ի սեմինարը տեղի ունեցաւ Նիւ Եորքի մէջ՝ ՀՕՄի 115 ամեակի եւ Կանանց Միջազգային Օրուան առիթով՝ 8 Մարտ 2025ին:

ՀՕՄի Ընկերային Ծառայութիւններ

Մասնաճիւղերու ՀՕՄի ընկերային ծառայութեան յանձնախումբերը կը տրամադրեն համապարփակ ընկերային ծառայութիւններ կարիքաւոր անհատներու եւ ընտանիքներու: Անոնք կը կազմակերպեն Սուրբ Ծննդեան խնճոյքներ, Մայրերու օրուան ճաշկերոյթներ, խնճորահաւաքի պտոյտներ եւ այլն:

ՀՕՄի 100 ամեակի Հանդիսութիւնները՝ 28 Մարտ 2009 ին Նիւ Եորքի մէջ

Արեւելեան ԱՄՆի Հայ Օգնութեան Միութիւնը ոգեկոչեց իր 100 ամեակը Նիւ Եորքի մէջ, տրուած ըլլալով որ ՀՕՄը հիմնուած է Նիւ

Եորքի մէջ 1910ին: Հիմնական պատգամախօսն էր քոնկրէսական Աննա Գ. Իշու, որուն կարելու առաջնահերթութիւններուն մէջ միշտ եղած է երեխաներու, կիներու եւ ընտանիքներու աջակցութիւնը:

ՀՕՄը 100ամեակի յոբելեանը նուիրեց այն անհատներուն, որոնք ամենադժուարին պայմաններու մէջ անխոնջ աշխատանք ծաւալած են կազմակերպութեան նպատակներուն իրագործման համար:

ՀԵՒ Հայաստան Ճամբար

ՀՕՄի Արեւելեան Ամերիկայի շրջանը մշտապէս կ'աջակցի Մասաչուսեց նահանգի Ֆրանքլին քաղաքին մէջ գտնուող ՀԵՒ Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան Ճամբարին՝ իբրեւ հայկական ինքնութիւնը պահպանելու կարելու վայր հայ երիտասարդութեան համար: Վերջին քանի մը տարիներուն, ՀՕՄ Միացեալ Նահանգներու Արեւելեան շրջանը տրամադրած է գործնական կրթութեան պիտոյք, զիրքեր, համակարգիչներ եւ այլ դաստիարակչական արդի գործիքներ:

2023ին Արեւելեան Ամերիկայի Շրջանի մասնաճիւղերու աջակցութեամբ, գումար յատկացուեցաւ՝ բանակավայրի խոհանոցին նորոգութեան համար իսկ 2025-ի ճամբարին համար նոր անկողիներ գնուեցան:

Ճամբարի մասնակիցները իրենց յուշերն ու յիշատակները միշտ վառ կը պահեն իրենց յիշողութեան մէջ:

Մարդասիրական Օգնութիւն

Շարունակելով ՀՕՄի աւանդոյթը՝ ձեռք մեկնել կարիքաւորներուն, ՀՕՄ Միացեալ Նահանգներու Արեւելեան շրջանը նուիրատրութիւններ կատարած է՝ աջակցելու սովահար փախստականներու, երկրաշարժներու եւ փոթորիկներէն տուժած համայնքներուն:

«1915-ի Կանայք» Վաերագրական ժապաւէն

Կիները ընկերութեան ողնաշարն են: Հայոց Ցեղասպանութեան ընթացքին հայ եւ ոչ հայ կիներ անխոնջ նուիրումով կարեւոր դեր ունեցան կեանքեր փրկելու գործին մէջ: ՀՕՄ Արեւելեան Ամերիկայի շրջանը հովանաւորեց բեմադրիչ Պարետ Մարոնեանի «1915-ի Կանայք» վաերագրական ժապաւէնը, որ ցուցադրուեցաւ 2015-ի Ապրիլին՝ Հայոց Ցեղասպանութեան 100 ամեակին առիթով:

«Ակնունի» Մրցանակ

«Ակնունի» մրցանակը ՀՕՄ Միացեալ Նահանգներու Արեւելեան շրջանի ամենաբարձր պատուին արժանացնող մրցանակն է, որ կ'ընծայուի այն անհատներուն կամ կազմակերպութիւններուն, որոնք հայ ժողովուրդի անունով ծառայութեան եւ բարեսիրութեան աշխատանքներով գործած են, խթանելու եւ պահպանելու մեր ազգը, ինքնութիւնը եւ մշակոյթը:

Քսանհինգամեայ Ծառայութիւն ՀՕՄ Արեւելեան շրջանին Կողմէ՝ Վերմոնտի մէջ ՀՕՄի Արեւելեան շրջանի 103րդ Պատգամաւորական Ժողովը

ՀՕՄ Արեւելեան Ամերիկայի Շրջանային վարչութիւնը եւ պատգամաւորները Վերմոնտի մէջ կայացած 103րդ Ընդհանուր Ժողովի ընթացքին պատուեցին ընկերուհի Վարդուհի Չիլոյեանը՝ ՀՕՄ Արեւելեան շրջանի գործադիր տնօրէնի պաշտօնին մէջ 25ամեայ անխոնջ ծառայութեան համար: Շրջանային վարչութիւնը շնորհակալութիւն յայտնեց ընկերուհի Չիլոյեանին վերջին քառորդ դարու ընթացքին կազմակերպութեան նկատմամբ

ունեցած իր յարատեւ նուիրումին եւ յատկանշական ազդեցութեան համար:

ՀՕՄ 115 ամեակի Տօնախմբութիւններ՝ 8 Մարտ 2025

ՀՕՄի 115 ամեակի տօնախմբութիւնները տեղի ունեցան 8 Մարտ 2025ին՝ անմոռանալի ձեռնարկներով, Կանանց Միջազգային Օրը: Երեկոյեան տօնակատարութիւնը յաջորդեց սեմինարին, որուն խորագիրն էր «Հայ կանանց եւ մեր կազմակերպութեան հզօրացումը»:

ՀՕՄի Միացեալ Նահանգներու Արեւելեան շրջանի անդամները կը շարունակեն կրել ջահը եւ յաղթահարել մարտահրաւիրները, միշտ հաւատարիմ մնալով ՀՕՄի առաքելութեան: Այս նշանակալի ձեռքբերումները եղած են ոգեշնչման աղբիւր բոլորին՝ միանալու եւ շարունակելու այս ճանապարհը: «Ժողովուրդիս Հետ, Ժողովուրդիս Համար» - 115 տարի անխոնջ նուիրում:



Armenian Relief Society of *Armenian Relief Society of Eastern United States* Eastern United States

The history of the Armenian Relief Society began in New York City, on January 1, 1910, under the leadership and founder, Khachatur Malumian (Agnouni). Foreseeing the coming storm and determined to serve the scattered nation in its hour of need, the untapped potential of Armenian women was mobilized by establishing the ARS.

At its founding, the society was known as the Armenian Red Cross, and as such, it was recognized by the International Red Cross. In 1921, the society was invited to attend the 10th International Convention of the Red Cross held in Geneva, Switzerland. After the fall of the 1st Republic of Armenia in 1918 the Society could no longer retain recognition and became strictly a Diasporan relief organization, working under various names in different countries yet recognizing the leadership of the North America US-based headquarters.

In 1979, the US based administration played dual roles as regional and international levels. The society continued to grow internationally and eventually became the largest Armenian women's organization worldwide. During the convention, held in July of 1979, the Constitution and Bylaws were amended, and the Central Executive Board was assigned to run the international organization. The regional entity was renamed Armenian Relief Society of North America, encompassing the entire United States and Canada.

In 1984, in view of the rapid growth of the Armenian community on the West Coast, a new regional entity was initiated, the Armenian Relief Society of Western USA, encompassing all the states west of the Mississippi River, the remaining region, including the US East Coast and Canada,

retained the name Armenian Relief Society of North America until 1990, when Canada officially assumed regional status. Since that date marked the beginning of the present entity, the Armenian Relief Society of Eastern USA, with chapters located east of the Mississippi River.

Today, the Eastern Region has 35 active chapters in 14 states and DC, with a total membership of 1,120.

Since 1990, the eastern region, whose roots go directly to the very conception and birth of the great ARS family, has been one of the solid pillars of the ARS and was involved in all aspects of the humanitarian mission of the ARS, on both regional and international levels providing support to various ARS programs, implemented across the region and in the Homeland, in education, health, and social services. The following are programs in the Eastern United States:

ARS Social Services:

Local Chapters' ARS Social Services provide comprehensive social services to individuals and families in need.

The ARS Social Services Program supports the elderly population, by hosting Christmas parties, Mother's Day luncheon, apple picking trips, etc.

ARS Eastern Region Youth Connect Program:

The Norian Youth Connect Program derived from ARS Summer Studies Project. Starting in 1971, this program gave college students the opportunity to get acquainted with Armenian history, literature, and culture in all its aspects.

Held on various North-Eastern campuses, the two-week program, presented by experts in the fields of history, language, liberal arts, music,

| 47



ARS Norian 1st YCP 2010 & ARS Norian YCP 2024

and cinema, has become the summer gathering place for Armenian students eager to discuss, study, and appreciate their heritage in both its past and modern aspects.

ԼՕՄը կը գոյատեւէ՝ շնորհիւ իր առաքելութեան հաւատացող ժողովուրդին եւ նուիրատուներուն: Ամէն տարի մեծ յաջողութիւն կ'արձանագրէ ԼՕՄի հանգանակութեան օրը: Այս յաջողութեան մէջ անփոխարինելի դերակատարութիւն ունին մեր բոլոր մասնաճիւղերուն հազարաւոր ընկերուհիները, որոնք ճիգ չեն խնայեր ԼՕՄի տարեկան հանգանակութիւնը յաջողութեամբ պսակելու համար:

ԼՕՄի օրացոյցը մինչեւ օրս կը հրատարակ-

86 |



ԼՕՄի «Վ. Տէկիրմէնճեան» խոհանոցի «Տաք Ծառ» ծրագիրը կը շարունակուի շնորհիւ ԼՕՄի Կեդրոնական Վարչութեան եւ բարերարներու աջակցութեան



ԼՕՄի «Ա. եւ Ա. Գլայաշեան» Կազմուրման Կայանին մէջ - Այնճար իրենց մասնակցութիւնը բերին 6էն 12 տարեկան 50 փոքրիկներ

ուի, զանազան թեմաներով: ԼՕԽը նաև ունեցաւ իր կայքէջը, ինչպէս նաև դիմատետրի էջը, որոնք լուսարձակի տակ կ'առնեն ԼՕԽի ընդհանուր գործունէութիւնը (lokh-arcl.org եւ Armenian Relief Cross of Lebanon):

Տարիներու ընթացքին նշուեցան «Մանուկներու եւ Կամաւորներու Օր»ը:

Սուրիահայութեան դիմագրաւած տագնապի տարիներուն, Շրջանային վարչութիւնը ամէն ճիգ ի գործ դրաւ օժանդակելու՝ սուրիահայ մեր ազգայիններուն:

«Ա. Պուլլուրճեան» ընկերաբժշկական կեդրոնը գործակցած է եւ կը շարունակէ գործակցի առողջապահութեան եւ ընկերային հարցերու նախարարութիւններուն հետ, օրական դրութեամբ կ'ընդունի պարագաներ, անոնց հարկ եղած սպասարկութիւնները տրամադրելու համար (դեղորայք, շտապի, բժշկական, ընկերային, հիւանդանոցի, տարրալուծարանի քննութիւններ):

Covid 19ի անվճար քննութիւններ կատարուեցան հարիւրաւոր պարագաներու, որոնց տրուեցան հարկ եղած ցուցմունքները:

ՀՕՄի Կեդրոնական վարչութեան նուիրատուութեամբ, կարիքաւոր ընտանիքներու բաշխուեցան սննդեղէններու տուփեր, մաքրութեան իրեր, ծածկոցներ, իսկ հայկական վարժարաններու նախակրթարանի աշակերտներուն՝ վզկապեր, ձեռնոցներ, վերարկուներ եւ կօշիկներ:

ԼՕԽի կարեւորագոյն աշխատանքներէն մին կը հանդիսանայ կրթանպաստը, որմէ կ'օգտուին հայկական վարժարաններ յաճախող աշակերտներ: Կրթանպաստի յանձնախումբը տարիներ շարունակ, նիւթական եւ բարոյական զօրակցութեամբ սատարեց հայ դպրոցի կարիքներուն, սակայն երկրին ընկերատնտեսական եւ քաղաքական վատ պայմաններուն բերումով, վերջին 5-6 տարիներուն դժբախտաբար չկարողացաւ աշակերտներու եւ համալսարանականներու օժանդակել:

Օտար շրջանակներու մէջ ԼՕԽի ծանօ-

թացումը կատարելու եւ նիւթական հասոյթ ապահովելու նպատակով՝ յարաբերական յանձնախումբը կազմակերպեց ձեռնարկներ: Միւս կողմէ, նշանակալից եղաւ Հայոց Ցեղասպանութեան 100 ամեակի առիթով կազմակերպուած ուխտագնացութիւնը՝ դէպի Հայաստան, 22 Ապրիլ 2015ին:

ԼՕԽի հանգուցեալ բարերարներու եւ ԼՕԽական ընկերուհիներու հոգւոյն, ամէն տարի կը կատարուի հոգեհանգստեան պաշտօն՝ յարգելու համար անոնց յիշատակը:

Ամսական հերթականութեամբ, «Վանայ Չայն» ռատիոկայանէն կը սփռուի «ԼՕԽի ձայնը» յայտագիրը, իսկ «Ազդակ» օրաթերթը «ԼՕԽի էջ»ով կ'անդրադառնայ ԼՕԽի բազմաբնոյթ գործունէութեան:

ՀՕՄի Կեդրոնական վարչութեան ծրագիրներու մասնակցութիւն

ԼՕԽի «Վ. Տէկիրմէնճեան» խոհանոցը, ՀՕՄի Կեդրոնական վարչութեան, բարերարներու եւ նախապէս Պուրճ Համուտի քաղաքապետութեան եւ տիար Պերճ Կիլպէնկեանի ամսական նիւթական յատկացումին շնորհիւ, մինչեւ օրս, «Տաք ճաշ» ծրագրով շաբաթական դրութեամբ 650-700 պնակ տաք ճաշ կը մատակարարէ կարիքաւոր հայորդիներու:

Շրջանային վարչութիւնը ամէն տարի իր նիւթական մասնակցութիւնը կը բերէ ՀՕՄի «Ամանոր» ծրագրին:

ԼՕԽի Շրջանային վարչութիւնը՝ իր շարքերուն անունով, խորին երախտագիտութիւն կը յայտնէ ՀՕՄի Կեդրոնական վարչութեան, բոլոր միաւորներուն, բարերարներուն, նուիրատուներուն եւ ԼՕԽի կամաւոր բանակին, որոնց մնայուն եւ սերտ գործակցութեամբ կը յաղթահարենք բոլոր դժուարութիւնները, միշտ հաւատալով «Ժողովուրդիս Հետ, Ժողովուրդիս Համար» նշանաբանին:

Armenian Relief Cross Region

Armenian Relief Cross Region of Lebanon of Lebanon

The ARS in Lebanon was established as the Armenian Relief Cross of Lebanon in 1938. The region has 3,250 members in 25 chapters, as well as 13 regional committees.

The region supports the “Zvartnotz” special education center, the “CAHL” home for the aged, and “Bird’s Nest” (Trchnotz Pooy) orphanage. During New year’s festivities, elderly and needy residents are served hot meals from Tenjou-gian Hall.

The ARS, in coordination with the “GAMK” Emergency Assistance committee, distributed financial assistance and household appliances to the victims of the Beirut port explosion.

The ARS has supported the Armenia and Artsakh Funds, and recently held a ‘radiothon’, to raise funds for displaced Armenians from Artsakh.

Donations and free medical services were provided by the medical delegation from Fresno, California, led by the Honorary Consul of Armenia Berj Abcarian. This initiative provided free medical assistance through the ARS Boulghourj-ian Medical Center in Beirut and the Filhanessian Center in Ainjar, Lebanon.

The Boulghourj-ian Medical Center has experienced an increased number of needy individuals seeking free medical care. The center partners with local NGO’s such as AMEL, WHO, YMCA, PU, AFD, in organizing preventative health seminars and workshops through the Health and Educational committees.

The Regional Executive organizes annual traditional street fairs (Dohmig Or), with the participation of the Bourj Hamoud municipality and chapters, marketing homemade delicacies and handmade crafts and needlework. This event has been a source of financial assistance to support social and medical programs.

The organizing committee conducts a two-step program for orientation of new members, followed by the ARS oath ceremony.

The Aleksan & Araxy Kelbashian Center provides annual camping experiences for up to 50 low-income and special needs children in Ainjar.

The Ardahlj-ian Library, in memory of Ani and Narod, since its establishment, has been providing books and educating the youth to promote the Armenian culture and language. During the summer, library teachers and counselors engage the youth in arts and crafts, games, and educational

88 |



Երրորդ տարին ըլլալով Ֆրեզնոյի Հայ բժշկական առաքելութիւնը Անվճար սպասարկութիւններ մատուցեց ԼՕԽ դիմող հայորդիներու:



ԼՕԽ «Ն. Արտալճեան» Պարտէզ-Գրադարանի 6էն 12 տարեկան, 33 աշակերտներ, 17 Յունիսէն-12 Յուլիս, ամմոռանալի ամառ մը անցուցին

PAGE SPONSORED BY UNGH CARINE, RAFFI, AND TSOLINE NISSANIAN



ԼՕԽԻ 62-րդ Պատգամատրական Բացառիկ Ժողովի շարունակություն

trips. The center also holds Christmas programs for needy children.

The chapters participate by raising funds for many of the regional programs.

The ARS calendar is a fundraising mechanism which gets published annually with various themes.

Throughout the years, the region has provided financial assistance to displaced Syrian Armenians.

The Boulghourjian Medical Center, in collaboration with the Health Ministry of Lebanon, provides medical services for doctor visits, medicine, emergency services, and laboratory services. During the Covid-19 pandemic, the center provided testing and treatment advice.

Through the financial assistance provided by the ARS Central Executive Board, prepackaged food, sanitary supplies, and blankets were distributed. In addition, scarves, mittens, winter clothing, and shoes were provided by ARS global assistance and distributed to Armenian school students.

One of the vital initiatives is the tuition assistance program for Armenian Schools. However, due to the dire financial situation, it has not been possible to provide financial assistance to all applicants.

The region supports the ARS Norsigian Kindergarten, which was established in 1986.

Every month, the “Voice of Van” radio program provides one hour to “Voice of LOKh” program, and the local “Aztag” newspaper provides space for “The LOKh Page”, providing media access.

The “Vartouhi Degirmenjian Kitchen” supported by local and international entities, including the ARS Central Executive Board, the Bourj Hamoud Municipality, Berj Gulbengian, and Ainjar farmers, provides 650-700 weekly “Hot Meals” (Dak Jash) to needy individuals.

The region appreciates the support of ARS Central Executive Board, all its members, sponsors, and donors who have made it possible to overcome challenges by staying true to the ARS mission “With the People, for the People”.

For more information, check out the regional website at www.lokh-arcl.org and the Facebook page at <https://www.facebook.com/ArmenianReliefCross>.

189



Նորագիրներու երդման արարողություն՝ 15 Ապրիլ 2023ին, «Թնճուկեան» սրահին մէջ, կնքամայրութեամբ՝ ընկի. Յասմիկ Մկրտեանի



ՀՕՄԻ ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐԷՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ՆԿԱՐՆԵՐ



ԸՆԿՀ. ԱՏԷԼ ԳՐԱՃԵԱՆ ԵՒ ԶԱՒԱԿՈՒՆՔ ԿԸ ՀՈՎԱՆԱԻՐԵՆ ԱՅՍ ԷԶԵՐԸ ԵՒ ԿԸ ՇՆՈՐՀԱԻՐԵՆ ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ 115 ԱՄԵԱԿԸ ՄԱՂԹԵԼՈՎ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐԱՆՈՐ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐ:





RECENT MEMORABLE PHOTOGRAPHS OF ARS CEB GLOBAL PROGRAMS



UNGH ADEL KRADJIAN AND FAMILY EXTEND THEIR HEARTFELT CONGRATULATIONS TO THE ARMENIAN RELIEF SOCIETY ON ITS 115TH ANNIVERSARY, WITH BEST WISHES FOR CONTINUED SUCCESS IN ALL FUTURE ENDEAVORS.



ՀԱՒԱՏՔՈՎ, ՍԻՐՈՎ ԵՒ ԿԱՍԱՒՈՐՈՒԹԵԱՍԲ ԾՆՈՒՆԴ ԱՌԱԾ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԹԸ ԱՆԿԱՍԵԼԻ Է

Նորա Բարսեղեան

Սախակրթարանի առաջին տարիներու աշակերտ էի հաւանաբար, խաղի ու անմեղութեան աշխարհիս փոքր պատուհանէն սկսած էի դիտել կեանքի իրական աշխարհը, ուր երեւոյթները բաւական տարբեր էին իմ ընկալմանս կարելիութենէն: Այդ օրերու յիշատակները բազմաթիւ են թէւ, սակայն յատկանշականները՝ սակաւաթիւ:

Լիբանանեան քաղաքացիական պատերազմի ծանր օրեր էին, բոլորին ալ ընկերային-տնտեսական կացութիւնը այդքան ալ բարւոք վիճակի մէջ չէր, բայց կային գոյատեւելու կամքն ու պայքարով ապրուստ ապահովելու վճռականութիւնը:

Լաւ կը յիշեմ, որ ամէն օր հայրս իր առօրեայ ունեւիքներուն կողքին, մօրս կողմէ գուրգուրանքով պատրաստուած փոքրիկ տոպրակ մը ձեռքին՝ կ'ուղղուէր Տորայի իր կօշկակարի խանութը: Այս «արարողութեան» այդքան ալ հաշտ աչքով չէի նայեր երբեմն, մանաւանդ երբ շատ սիրած մէկ ճաշիս տեղաւորուիլը

տեսնէի այդ տոպրակին մէջ զետեղուելու կոչուած ամաններուն մէջ: Իմ ամէնէն սիրած տուրմով պատուած կարկանդակիս վերջին շերտին ուղարկուիլը բաւարար եղաւ, որ ես բողոքող սրտէս բխած հարցումը ուղղէի հօրս.

– Պապա՛, մենք շատ ճաշ չունինք արդէն, ինչո՞ւ ամէն օր մեր ճաշէն եւ անուշեղէնէն կը տանիս Վիքթորիա մամիկին...

Անակնկալի եկած հայրս, որմէ կ'ակնկալէի բարկանալ եւ խրատել, որ մեծերուն գործերուն միջամուխ չըլլամ, մեղմ ժպիտով նայեցաւ աչքերուս, առաւ զիս իր տաքուկ եւ լայն թեւերուն մէջ, համբուրեց, ապա գիրկը նստեցրնելով՝ ըսաւ.

– Մենք շա՛տ ճաշ ունինք, աղջի՛կս, անուշեղէնն ու կարկանդակը անպակաս են մեր տունէն, թերեւս ձեզի յաճախ նոր հագուստ ու կօշիկ, խաղալիք չենք կրնար բերել, բայց, փա՛ռք Աստուծոյ, մենք ունինք այնքան, որ կրնանք մեզմէ նուազ ունեցողին կամ ընդհանրապէս չունեցողին տալ: Լա՛ւ գիտցիր եւ մի՛շտ յիշէ, որ մեր քոյր-եղբայրներուն օգտակար դառնալը, մեր շատ կամ քիչ ունեցածէն ուրիշին բաժին հանելը միայն անոնց ուրախութիւն չի պատճառեր, այլ նաեւ ինձի, քեզի, տուողին սրտիկը կ'ուրախացնէ:

Իբրեւ օրինակ՝ հայրս վկայակոչեց ԼՕԽական մայրս եւ ընդհանրապէս միութեան նուիրեալ անդամները, որոնք իրենց կարելին կ'ընեն մանուկին, ծերին, հիւանդին, գուրգուրանքի եւ ուշադրութեան կարօտեալին կողքին կանգնելու յիշեցնելով, որ ես ալ մասնակից կը դառնայի այդ աշխատանքին, երբ ԼՕԽի հանգանակութեան համար փոքր գումար մը կը զետեղէիմ դպրոցը տեղադրուած սնտուկին մէջ:

Փափկասիրտ հայրս նաեւ պատմեց, թէ ինչ-



ԼՕԽի ննջեցեալ անդամուհիներու եւ բարերարներու յիշատակին, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Կիրակի, 15 Մայիս 2024ին, Պուրճ Համուտի Սրբոց Վարդանանց եկեղեցոյ մէջ

պէ՛ս ԼՕԽականները պատերազմական այդ օրերուն կը հասնէին իրենց տուներէն ելլելու անկարող երէցներուն, ուտելիք կ'ապահովէին իրենց կեանքին գնով հայկական թաղամասերուն պաշտպանութեան լծուած պահակ տղոց, կրթաթոշակ կը տրամադրէին աշակերտներուն ու ուսանողներուն, կը բժշկէին հիանդներն ու առողջական հարցեր ունեցողները...

Օրին գլուխ օրօրեցի ու միացայ խաղալիքներուս, բայց հօրս պատասխանն ու բացատրութիւնները դրոշմուած մնացին մտքիս մէջ (հաւանաբար նաեւ՝ սրտիս), որ օրին լուսապէս չընկալեց իրեն փոխանցուած պատգամը, բայց պահպանեց զայն թանկագին մատուցի նման:

Այդ օրէն ետք այլեւս տարօրինակ չէր թուեր այդ միայնակ ծերունի մամիկին գացած ճաշերուն «տողանցքը», նոյնիսկ մայրս երբեմն կը մղէր, որ ես պատրաստէի անոր ճաշամանը եւ յանձնէի հօրս: Այդ օրերուն էր, որ ես գիտցայ՝ ի՛նչ կարեւոր գործ կ'ընեն ԼՕԽն ու ԼՕԽականները:

Տարիներ թաւալեցան, հայրս առյաւէտ հեռացաւ մեզմէ, սակայն մնաց անոր պատգամը: Արդարեւ, հազիւ գիտակցական տարիքի հասած, հետաքրքրուեցայ՝ ինչպէ՞ս պէտք է անդամակցիլ ԼՕԽին եւ զօրագրուեցայ այս միութեան, որ փոքր տարիքէս իսկ ծառայութեան, բաժնեկցութեան, գուրգուրանքի եւ նուիրումութեան խորհրդանիշը եղած է ինծի համար:

Հայոց պատմութիւնը կը վկայէ, որ դիւրին չէ եղած հայութեան կեանքը: Սփիւռքահայութեան պատմութեան մէջ յատկապէս հայ ժողովուրդը վերապրիլ ու գոյատեւել բառերուն մարմնացումը հանդիսացած է, յատկապէս՝ Հայոց ցեղասպանութեան պատճառով, երբ ամէնէն դաժան ու ահաւոր անմարդկային արարքները իր մորթին վրայ կրած հայութիւնը իր մէջ ուժն ու զօրութիւնը ամբարեց՝ թօթափելու անմարդկայինը եւ կառչելու մարդկայինին ո՛չ միայն վերապրելով, այլ՝ կազմակերպուելով եւ գոյատեւման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելով: Հայոց պատմութեան բոլոր ժամանակներուն, ամէ-

նուրեք եւ տարբեր պայմաններու մէջ, արհաւիրքի ու վերապրումի դաժան կամ լուսաւոր ուղիներուն վրայ ՀՕՄին անունը ոսկեայ տառերով արձանագրուած է անպայման, որովհետեւ հայուն մնայուն նեցուկն ու ապաւէնը եղաւ այս անփոխարինելի միութիւնը՝ իր մեծաթիւ կամաւորներով, որոնց համար ոչինչ խոչընդոտ կրցաւ հանդիսանալ՝ հասնելու բոլորին, բարձր պահելու հիմնադիրներուն ծառայութեան դրօշն ու նուիրումութեան մշտաւառ ջահը՝ զանոնք փոխանցելով սերունդէ սերունդ:

Հայաստանի, Արցախի թէ՛ Սփիւռքի տարբեր գաղութներու մէջ արձանագրուած որեւէ տագնապի, ուղղուած որեւէ զօրակոչի, օգնութեան հասնելու որեւէ հրաւերի առաջին արձագանգողը եղաւ ՀՕՄը, որ իսկապէս հանդիսացաւ «Լոյսի բանակ եւ գթութեան խաչուհի», ճշմարտացիօրէն «շունչ տուաւ հայ օճախի կրակին», մնաց ու է՝ «արի պահակն անցեալի»-ն ու ուխտած է եւ յաճախ կը վերանորոգէ իր ուխտը՝ շարունակելու երթը «Մինչեւ հասնինք սէգ սարերուն հայրենի»:

Ժամանակները, պայմանները, կացութիւնները, վայրերն ու մարդիկ կրնան փոխուիլ, սակայն չի՛ փոխուիր ՀՕՄին առաքելութիւնը, անսասան կը մնան ՀՕՄականին յատուկ կամքն ու մեր ազգի գերագոյն երազներու իրականացման նկատմամբ անոր հաւատքը՝ միշտ հանդիսանալով, Մուշեղ Իշխանի խօսքով՝ «Իսկական մխիթարանքի եւ սիրոյ յուսատու շող...»:

.....
*հայ ժողովուրդը վերապրիլ
ու գոյատեւել բառերուն
մարմնացումը հանդիսացած է*
.....

115 տարիներ շարունակ ժողովուրդի չարչարանքներուն խաչակիրը, միասնականութեան ու հաւաքական աշխատանքէն ծնած զօրութեան մարմնացումը, հայ ժողովուրդին բարախող սիրտն ու յոյս-լոյսի փարոսը հանդիսացած այս միութիւնը պիտի շարունակէ իր երթը անկասկած՝ նոր տարեդարձներ ու դարադարձներ նուիրելով համայն հայութեան:

ՀՕՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆ

Պատմական ակնարկ

ՀՕՄի Հայաստանի շրջանը հիմնադրվել է 1991ին: Այն եւս յաղթականորէն տօնախմբեց ՀՕՄի 100 ամեակը եւ նորանոր նուաճումներու պատրաստականութեամբ դիմաւորեց նորը:

Վարչական կազմակերպչական

ՀՕՄի Հայաստանի շրջանը ունի 46 մասնաճիւղ եւ 728 անդամ (ներառեալ ՀՕՄի Արցախի մասնաճիւղը): Շրջանը իր ծրագիրները կ'իրականացնէ ընկերային, կրթական, առողջապահական, համայնքային զարգացման, ազգային արժէքներու պահպանման ոլորտներուն մէջ:

Հպարտութեամբ պէտք է ընդգծել, թէ ՀՕՄը Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեանց անկախացումէն ի վեր իր աշխատանքները գլխաւորաբար կեդրոնացուցած է հայրենիքի հզօրացման յատկապէս արցախահատկութեան բարօրութեան վրայ: Այս իմաստով ՀՕՄի Հայաստանի յաջորդական Շրջանային վարչութիւնները, շրջանային յանձնախումբերն ու մասնաճիւղերը մօտէն գործակցած են եւ կը շարունակեն գործակցիլ (նոյնիսկ բռնազաղթուած իր վիճակով) ՀՕՄի Արցախի մեկուսի միաւորին հետ:

Ներկայիս ՀՕՄի Արցախի միաւորը կը գործէ ՀՕՄի Հայաստանի շրջանի հովանիին տակ եւ իր յատուկ անկիւնը ունի ՀՕՄի Հայաստանի կեդրոնէն ներս:

Ծրագիրներ եւ գործունէութիւն

ՀՕՄի Հայաստանի շրջանը յատուկ բժականորութեամբ կ'իրականացնէ «ՀՕՄ Արուեստ» ընկերային իր ձեռնարկութիւնը, որ կը միտի պահպանել մեր մշակոյթը, յատկապէս կեդրոնանալով հայկական հին ձեռագործներու եւ հայկական մեր մշակոյթը կենդանացնող դասընթացքներու վրայ: Ձեռնարկութիւնը նաեւ կը զբաղի առք ու վաճառքով:

Ամէն տարի Փետրուար ամսուան վերջին Շաբաթ օրը, շրջանի մեծ ընտանիքը հոգեհանգստեան պաշտօն կը կատարէ իր ննջեցեալներուն եւ հայրենիքի պաշտպանական մարտերուն զոհուած մեր նահատակներու յիշատակին: Մարզերու մասնաճիւղերը կարեւոր այս հոգեհանգստեան պաշտօնը կը կատարեն իրենց բնակավայրերու եկեղեցիներէն ներս, իսկ Երեւանի մասնաճիւղերը՝ Եռաբլուրի Վարդանանց Սրբոց նահատակաց մատուռին մէջ: Այնուհետեւ ծաղկեպսակներ կը զետեղեն Անյայտ զինուորի եւ հայոց պատմութեան մէջ հայ կին ֆետայիին տիպար Սօսէ Մայրիկի շիրիմին: ՀՕՄուհիները նաեւ ծաղիկներ կը զետեղեն Եռաբլուրի մէջ թաղուած մեր անմահ նահատակներու շիրիմներուն վրայ:

94 |



Armenia 30th Regional Convention

PAGE SPONSORED BY UNGH VICKY MARASHLIAN

Հագիւ ՀՕՄի աշխատանքները յուսադրող հունի մէջ մտած էին, երբ տեղի ունեցաւ 2016ի քառօրեայ պատերազմը: Ունեցանք կորուստներ: Արցախի ժողովուրդը ապրեցաւ ահ ու սարսափի մէջ: ՀՕՄի մեծ ընտանիքը դարձեալ փութաց արցախահայութեան օգնութեան: ՀՕՄի Կեդրոնական վարչութեան տնօրինութեամբ եւ ՀՕՄի Հայաստանի շրջանի գործադրութեամբ, ՀՕՄը դարձեալ պատնէշի վրայ էր եւ օգնութեան իր ձեռքը երկարեց քաջարի արցախահայութեան:

COVID-19ի օրերուն եւ յատկապէս 2020 թուականի Մարտ-Յուլիս ամիսներուն, ՀՕՄի Հայաստանի օրուան Շրջանային վարչութիւնը օգնութիւն ցուցաբերեց ընկերային խիստ խոցելի ընտանիքներու: Ան նաեւ նիւթական աջակցութիւն տրամադրեց ՀՀ Առողջապահութեան նախարարութեան, Հայրենիքի Պաշտպանի Կերականգնողական կեդրոնին, Գիւմրիի եւ Ախուրեանի հիւանդանոցներուն:

Շրջանը աջակցութիւն ցուցաբերեց նաեւ Լիբանանի մայրաքաղաք՝ Պէյրութի նաւահանգստին մէջ 4 Օգոստոս, 2020ի պայթումէն տուժած բնակիչներուն: Նաեւ դրամական իր մասնակցութիւնը բերաւ նոյն նպատակով ստեղծուած «ՄԻԱՅԷՔ ՀՕՄԻՆ, ՓՐԿԷՔ ԿԵԱՆՔԵՐ» դրամահաւաքին:

Որբացած երեխաներուն դէմքին ժպիտ պարզելելու հեռանկարով, 17 Օգոստոս 2021ին, ՀՕՄի Հայաստանի Շրջանային վարչութիւնը, գործակցութեամբ ՀՄԸՄ-ՀԱՍԿին, կազմակերպեց հնգօրեայ ճամբարային ծրագիր մը, վերջինիս Բիւրականի բանակավայրին մէջ:

27 Սեպտեմբեր 2022ին սկսած եւ 9 Նոյեմբեր 2022ին, Արցախի հողատուութեան համաձայնագրով աւարտած, Արցախի մէջ տեղի ունեցած պատերազմը, նոր ու ահաւոր իրադրութեան առաջ դրաւ համայն հայութիւնը: ՀՕՄի Հայաստանի շրջանը, հակառակ տիրող ահաւոր դժուարութիւններուն, կարողացաւ տասը թոն սնունդ դրկել արցախահայութեան: Աւելի՛ն, պատերազմի ընթացքին եւ անոր աւարտէն ետք, Արցախէն բռնի տեղահանուած ընտանիքներուն համար, ՀՕՄը յատուկ ծրագիրներ իրականացուց:

Արցախի Հանրապետութեան կորուստն ու արցախահայութեան բռնազաղթը ցնցեց համայն հայութիւնը: Ինը ամիսներ սովի մատնուած մեր հայրենակիցները, քաջաբար դիմանալէ ետք, բռնի տեղահանուեցան եւ խուճապահար հասան Հայաստան, ետին թողելով իրենց տունն ու տեղը, հարազատներու գերեզմանները, անմոռանալի յիշատակները, մէկ խօսքով արեան գնով պաշտպանած հայրենիքը:

Բնական է, որ իրաքանջիւր հայու պարտականութիւնն էր գրկաբաց ընդունիլ իր հայրենակիցները, հակառակ Հայաստանի քաղաքական եւ տնտեսական ոչ նախանձելի իրավիճակին: Այսուհանդերձ համայն հայութիւնը օգնութեան ձեռք երկարեց բռնազաղթուած արցախահայութեան, որոնց գլխաւորներէն մին հանդիսացաւ Հայ Օգնութեան Միութիւնը՝ ՀՕՄը:

ՀՕՄի Կեդրոնական վարչութիւնը անմիջապէս գործի լծեց աշխարհացրիւ ՀՕՄի մեծ ընտանիքը: Օգնութեան առաջին արձագանգը ստացանք ՀՕՄի Աւստրալիոյ միաւորէն, որ տեղական պետական մարմիններու եւ տեղոյն Հայ Դատի յանձնախումբի համագործակցութեամբ հանգանակեց կոկիկ գումար մը, որ ՀՕՄի Հայաստանի միաւորի տնօրինութեամբ, 440 տուփ սննդամթերքով եւ մաքրութեան առնչուող ապրանքներով յանձնուեցաւ Արցախի ներկայացուցչութեան:

Օգնութեան առաջին այս փորձէն ետք, ՀՕՄի Հայաստանի միաւորը, գործակցութեամբ ՀՄԸՄ-ՀԱՍԿի Կեդրոնական վարչութեան, աւելի քան հարիւր արկղ սննդամթերք, հագուատ, երեխաներու ուտելիք եւ մաքրութեան առնչուող ապրանքներ բաժնեց Գորիս հանգրուանած արցախահայերուն:

Հաւատարիմ մնալով «Ժողովուրդիս հետ, Ժողովուրդիս համար» կարգախօսին, ՀՕՄի Հայաստանի շրջանը ընդարձակեց օգնութեան իր շրջագիծը եւ համագործակցութեամբ շրջանի ուղեկից կազմակերպութիւններուն եւ արտասահմանեան զանազան երկիրներէ կամաւոր հայորդիներուն, մեղուի փեթակի վերածելով Արամ Մանուկեան կեդրոնը, աւելի քան հազար արկղ սնունդ եւ մաքրութեան

առնչուող ապրանքներ պատրաստեց եւ բաժնեց Հայաստանի զանազան մարզերու մէջ կայք հաստատած բռնագաղթուած արցախահայերուն:

Այս աշխատանքներուն առընթեր, ամէնօրեայ դրութեամբ ՀՕՄի կեդրոն այցելեցին հարիւրաւոր բռնագաղթուած արցախահայեր, որոնց ՀՕՄ Հայաստանի շրջանը օգտակար հանդիսացաւ նիւթապէս, ուտելիքով, հագուստներով, անկողնային եւ խոհանոցային իրեր տրամադրելով:

16-21 Հոկտեմբեր 2023ին, Հայաստանի մէջ գումարուած ՀՕՄի Համահայկական 73րդ Պատգամաւորական ժողովի մասնակից պատգամաւորները եւս մեծապէս օգտակար հանդիսացան արցախահայութեան: Անոնք անձնապէս այցելեցին եւ իրենց օգնութեան ձեռքը երկարեցին բռնագաղթուած իրենց հայրենակիցներուն:

Օգնութեան պահանջքը զոհացնելու հեռանկարով, ունեցանք երկու թէժ գիծեր, որոնց միջոցաւ արձանագրուեցան օգնութեան կարօտ աւելի քան 7000 ընտանիքներ, որոնց նոյնպէս տրամադրուեցան սնունդ եւ մաքրութեան առնչուող ապրանքներ: Այս ծրագրին համար «Մենք ենք մեր Սարերը» հասարակական կազմակերպութիւնը քսան հազար թոն (20,000) մաքարոնեղէն նուիրեց:

40,000 դրամ արժողութեամբ դրամական կտրոններ (միայն սնունդի համար օգտագործելի) տրամադրուեցան 1056 կարօտեալ ընտանիքներու:

Պէտք է ընդգծել, թէ ՀՕՄի մարդասիրական այս ծրագիրներու իրականացման մէջ իրենց մեծ ներդրումը ունեցան ՀԵՄի երիտասարդութիւնը, ՀՕՄի Հայաստանի Շրջանային վարչութեան գրասենեակն ու մասնաճիւղերը, որոնք Շրջանային վարչութեան ընդհանրական աշխատանքներուն մասնակցութեան առընթեր, առանձին օգնութեան ծրագիրներ նախաձեռնեցին եւ տրամադրեցին իրենց շրջապատի բռնագաղթուած արցախահայերուն:

Պէտք է արձանագրել նաեւ, թէ 29 Սեպտեմբեր 2020էն մինչեւ օրս ՀՕՄի Հայաստանի Շրջանային վարչութիւնը մարդասիրական

օժանդակութիւն հագուստ, մանկական ուտելիք, անասուններ, անձնական աշխատանքի իրեր, ուսումնական ծախսեր, կրթաթոշակ, բժշկական օգնութիւն եւ առողջապահական պարագաներ տրամադրած է աւելի քան 10,000 արցախահայ ընտանիքներու, որոնց անուանացանկերը բժախնդրութեամբ պահպանուած են: Ասոնցմէ անկախ ՀՕՄի գրասենեակը դրական կ'արձագանգէ նաեւ իրեն դիմող հայաստանցի կարիքաւոր ընտանիքներու:

ՀՕՄի Կեդրոնական վարչութեան առընթեր, ՀՕՄի Հայաստանի շրջանի միջոցաւ բռնի տեղահանուած արցախահայութեան օժանդակած են.-

- Իրանի հայկական համայնքը՝ երեք բեռներով:
- Աւստրալիոյ հայկական եւ տեղական համայնքները:
- Զանազան երկիրներու հայկական համայնքներէն ստացած ենք նիւթական եւ հանդերձանք:
- ՀՄՀՄի Պըրպէնքի «Սիփան» մասնաճիւղը (Արեւմտեան ԱՄՆ):
- ՀՄՀՄի Պուրճ Համուտի Վեթերան արիարենոյշները (Արեւմտեան ԱՄՆ):
- Անհատ նուիրատուներ:

ՀՕՄի Հայաստանի Շրջանային վարչութիւնը, 44 օրեայ պատերազմին ընթացքին, պարբերաբար աջակցած է ազատամարտիկականաւորներուն, անոնց տրամադրելով դեղորայք, մարտկոցներ եւ լիցքաւորուող սարքեր:

6 փետրուար 2023ի Սուրիոյ աւերիչ երկրաշարժին, ՀՕՄի Հայաստանի շրջանը շուրջ 5 թոն պարէնամթերք տրամադրեց Սուրիոյ դեսպանատան, Սուրիոյ ժողովուրդին փոխանցելու համար:

ՀԵՄի երիտասարդութիւնը մեծապէս օգտակար հանդիսացաւ արցախահայութեան աջակցութեան բարեսիրական աշխատանքներուն: ՀՕՄի Շրջանային Վարչութիւնը սիրով հովանաւորեց Ջերմուկի մէջ 1-4 Մարտ 2024ին, վերջինիս կազմակերպած եռօրեայ սեմինարը, որուն մասնակցեցան աւելի քան հարիւր երիտասարդներ՝ Արցախէն եւ Հայաստանէն: Շահեկան այս սեմինարի ընթացքին (2 Մարտ), ՀՕՄի Շրջանային վարչութեան

ատենապետ Մարո Քեչիշեան, power point-ի ընկերակցութեամբ, ներկայացուց ՀՕՄի լայնածաւալ գործունէութիւնը, որ մեծապէս հետաքրքրեց մասնակիցները:

2024ի ամրան, ՀՕՄը հետեւեալ երեք ճամբարները կազմակերպեց:

- Տաուշի մարզի Կողբ գիւղի մէջ
- Սիւնիքի մարզի Կապան քաղաքի Հայ Կեդրոնէն նրա
- ՀՄԸՄ-ՀԱՍԿի Բիրականի բանակավայրէն ներս:

Այս երեք ճամբարներն ալ մեծապէս օգտակար հանդիսացան արցախահայ փոքրիկ մասնակիցներուն ներաշխարհը հարստացրնելու կարեւոր գործին:

ՀՕՄի Հայաստանի շրջանը ունեցաւ իր փոքրիկ սրահը, շնորհիւ Արեւմտեան Միացեալ Նահանգներէն ֆրեզնոյաբնակ եւ աւելի քան 60 տարիներու վաստակաշատ ՀՕՄուհի ընկի. Ալիս Կիրեղեանի սրտաբուխ նուիրատուութեան, որ կատարեց իր ամուսնոյն հանգուցեալ Կարօ Կիրեղեանի յիշատակին: Ներկայիս կեդրոնը եռուզեո՞ւ մէջ է եւ կը կոչուի «Կարօ եւ Ալիս Կիրեղեան» սրահ: Գողտրիկ այս սրահի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 6 Հոկտեմբեր 2024ին: Բացման ժապաւէնի հատումը կատարեց սիրելի բարերար ընկի. Ալիս Կիրեղեան, բազմաթիւ հիւրերու եւ ՀՕՄուհիներու մասնակցութեամբ:

Դեկտեմբեր ամսուան ընթացքին ՀՕՄի Հայաստանի շրջանի մասնաճիւղերը ամանորեայ նուէրներով միշտ կ'այցելեն Հայաստանի սահմանամերձ գիւղեր, ուր փոքրիկները կ'ուրախացնեն զեղեցիկ նուէրներով:

Ներքին կազմակերպչական իմաստով ՀՕՄի Շրջանային վարչութիւնը ամսական դրութեամբ կ'այցելէ հայրենի մարզերը եւ դաստիարակչական շահեկան հանդիպումներ կը կազմակերպէ իւրաքանչիւր մարզի մէջ գործող ՀՕՄի մասնաճիւղերու անդամներուն հետ:

ՀՕՄի Շրջանային վարչութիւնը կը կազմակերպէ տարեկան հանգանակային ձեռնարկ, որուն ընթացքին կը պարգեւատրուին ՀՕՄուհիներ:

12 ապրիլ 2025ին տեղի ունեցաւ ՀՕՄի



Opening Ceremony of the Garo & Alice Gureghian Hall, Yerevan, 2024

Շրջանային վարչութեան Դաստիարակչական յանձնախումբի կազմակերպած «Ղեկավարման Ծրագիր»-ի դասընթացքները, որոնց աւարտին մասնակիցները ստացան համապատասխան վկայագրեր:

ՀՕՄի Հայաստանի շրջանին վստահուած են 15-25 Հոկտեմբեր 2025ին հայրենիքի մէջ նախատեսուած ՀՕՄի 115-ամեակի նուիրուած ձեռնարկներու կազմակերպումը:

Վերջին տարիներուն, ՀՕՄի Հայաստանի Շրջանային վարչութիւնները մարդասիրական իրենց աշխատանքներուն առընթեր, աշխատանք կը տանին հզօրացնելու ՀՕՄի մարզային մասնաճիւղերը, անոնց մէջ դրոշմելու ՀՕՄի առաքելութիւնը, հետապնդած նպատակներն ու գործելաձևը: Այս իմաստով բաւական ճամբայ կտրած ենք, սակայն տակաին շատ սորվելիքներ ունինք:

Կեդրոնական վարչութեան ծրագիրներու մասնակցութիւն

ՀՕՄի Հայաստանի Շրջանային վարչութիւնը, իր ամենօրեայ բարեսիրական աշխատանքներուն առընթեր, միշտ իրականացուցած է ՀՕՄի Կեդրոնական վարչութեան մնայուն եւ բացառիկ բոլոր ծրագիրները: ՀՕՄի Հայաստանի շրջանը, լաւապէս կը գիտակցի հայրենիքի հզօրացման կարեւորութեան եւ այս իմաստով ամէն ջանք կը թափէ հայրենի ժողովուրդի բարօրութեան համար:

Մենք կը հաւատանք «Ժողովուրդիս հետ, ժողովուրդիս համար» իմաստալից կարգախօսին եւ այդ համոզումով կը գործենք:

Armenian Relief Society

Armenian Relief Society of Armenia

of Armenia



98 |

The ARS was re-established in Armenia in 1991. The region boasts 46 chapters and 728 members, which includes members of Artsakh, the former chapter-at-large. The region continues to implement social, educational, and health programs.

Soon after re-independence of Armenia and Artsakh, the ARS Regional Executives in Armenia have concentrated their efforts to better the living conditions of Armenians, even during occupation of Artsakh. Currently the Artsakh Chapter has its office within the ARS Armenia Regional Executive headquarters.

The ARS Regional Executive of Armenia keeps pace with ARS Central Executive Board (CEB) programs and directives.

The “ARS Art” project, preserves cultural and artistic values, focusing on educational courses to create handmade items, which provide income for the participants.

Every year, on the last Sunday of

February, special requiem services are conducted throughout churches to remember past members, benefactors and donors. A special ceremony takes place at Sosse Mayrig’s resting place at Yeraploor.

During and after every battle, 2016 and on, and until the complete displacement of the Artsakh population in September 2023, the ARS provided food, medicine, clothing, financial assistance and other daily necessities. Special programs were implemented to ease the pain of displaced families arriving in Armenia. The ARS CEB organized



PAGE SPONSORED BY UNGH SHOGHIG MANOUKIAN

special programs and fundraisers for which the global ARS and sister organizations overwhelmingly responded with donations and assistance.

During the Covid-19 pandemic, the ARS in coordination with the Health Ministry, provided assistance to the Yerevan Rehabilitation Center, as well as medical facilities in Gyumri and Akhourian.

In 2020, the ARS provided financial assistance following the explosion at the port of Beirut in Lebanon.

In the Summer of 2021, along with Homenetmen, a 5-day camp was organized at the Puragan campground for orphaned children.

The region also organized several summer camp programs in 2024, which included Tavoush, Sunik and Puragan. These programs helped refugee youth expand their educational horizons.

The ARS 73rd International Convention was held in Yerevan, from October 16 to 21, 2023. Convention delegates visited the displaced families, providing emotional and financial assistance.

Following ARS's initiatives for humanitarian assistance for displaced Artsakh families, sister organizations participated in logistic activities in distributing urgently needed food, medicine, hygiene products and clothing. In addition, over a thousand grocery gift cards were distributed. Over 10,000 displaced families had registered with the ARS for assistance.

The ARS of Armenia sent humanitarian assistance to Syria after the devastating earthquake in the region.

The ARS Regional Executive moved to new offices in Yerevan with its own reception hall, called the Garo & Alice Gureghian Hall, thanks to a donation by Fresno California resident, a 60-year member of the ARS, Ungh. Alice Gureghian. The opening ceremony was held on October 6, 2024.



In December 2024, chapter members visited border villages and communities and distributed gifts to spread New Year cheer to children.

The Regional Executive Educational Committee makes monthly visits to various regions to offer educational seminars for ARS members. On April 12, 2025, a leadership seminar was held.

On April 5, 2025, the annual fundraising banquet was held, during which all ARS members who have served since the founding of the ARS in Armenia were honored.

From October 15 to 25, 2025, the 115th anniversary celebrations were held in Armenia, which included tours and a seminar sponsored by the ARS CEB, in coordination with ARS Armenia.

During the last few years, the ARS Armenia Regional Executive, has implemented programs to strengthen remote chapters by educating them about ARS guidelines and instilling in them the ARS mission and goals. The Armenia region is steadfast in staying true to the ARS slogan, "With the people, for the people".

ՀՕՄ՝ ՄՇՏԱՎԱՌ ՎԹՈՒԹԵԱՆ ԿԱՆԹԵՂ

Ջոյա Բոչարեան

100 |

Արցախի ազատագրության համար համազգային պայքարը մեզ դարձրեց հաւաքական, վեր հանեց հայ ժողովրդի մայրերի ու քոյրերի անսահման հայրենասիրութիւնն ու նուիրուածութիւնը: 1991ին մի փոքրիկ պատուհան բացուեց դէպի լոյսը ու այդ պատուհանից մի հզօր ալիք, մի թարմ հոսանք ներխուժեց մեր կեանք, մեր սիրտն ու հոգին լցնելով վսեմ արժէքների բարոյականութեամբ: Կտրուած լինելով մայր հայրենիքից, երկար ընդմիջումից յետոյ օտար ափերից տուն եկաւ ՀՕՄը: Ակամայից օրհնում եմ այդ պահը, որ ՀՕՄը վերադարձաւ հայուն արժանապատիւ կեցուածքով, մայրական իրաւունքով, եկաւ օգնելու աւերիչ երկրաշարժից հրաշքով փրկուածներին, հայրենիքի ազտագրութեան համար մարտնչող նուիրեալ զաւակներին՝ իր հայրենակիցներին: Եկաւ ու ընդմիջտ հաստատուեց մայր հայրենիքում: Իրաքանչիւր հայ կնոջ մէջ արթնացել էր Մամիկոնեան Մեծ Տիկնոջ, Սօսէ Մայրիկի անպարտելի ոգին: Հայրենասէր ու նուիրեալ հայուհիներ անդամագրուեցին ՀՕՄի Հայաստանի միաւորին՝ իրենց ներդրումն ունենալու նրա ստեղծարար աշխատանքներում, առաջին իսկ օրերից ես եւս ընդգրկուեցի միութեան շարքերում: Մեր հոգատարութիւնն ու ուշադրութիւնը, հայրենաշունչ խօսքն անգամ առաւելագոյնն էր այդ օրերին, երբ պէտք էր օգնել մարդկանց: Քանի՛ քանի որբացած սիրտ ջերմացրինք, քանի՛ քանի որդեկորոյս մօր, երիտասարդ սեւազգեստ այրու վիշտ ամոքեցինք մեր հոգու ջերմութեամբ, թաքցնելով մեր հոգում եղած կսկիծն ու տագնապը... Ու այդ տարիներին ես տեսայ հայ կնոջ ապրելու ու ապրեցնելու կա-

նացի հանճարը, որով օժտուած են եղել մեր նախամայրերը... ՀՕՄի անցած ուղին վկայում է, որ հայ կինը շատ ազգերից տարբերում է հենց իր բացառիկ կամքով, հոգու արիութեամբ ու գթասրտութեամբ, իր հայրենակցին սատարելու ունակութեամբ, նա անմրցելի է իր ազգի ու հայրենիքի հանդէպ ունեցած սիրով: Դաշնակցութեան ակնաւոր գործիչ Ակնունու հիմնադրած կազմակերպութիւնը, որ ծնուել էր խիզախութեան, քնքշանքի ու սիրոյ ներդաշնակութիւնից, հպարտ, գլուխը բարձր, արհաւիրքներից ու կործանումներից իմաստնացած այսօր դարձել է աշխարհով մէկ սփռուած մի մեծ ընտանիք՝ պատրաստ դիմագրաւելու նոր փորձութիւններ ու դժուարութիւններ:

ՀՕՄը մեր կեանքի աղն է, որ 115 տարի իր բարեսիրութեամբ, «ժողովրդիս հետ, ժողովրդիս համար» կարգախօսով քայլում է իր ազգի տարեգրութեան կեռնաններով, փնտռում ու գտնում սիրոյ, երջանկութեան ճանապարհը: Համեստ ու նուիրեալ հայուհիների հզօր միութիւն, սիրելի ՀՕՄ, հիացմունքով այսօր քո խօսուն յոբելեանի առիթով մաղթում եմ քեզ արեւշատութիւն, յաջողութիւններ քո ազգանուէր, հայրենաշէն բարի գործերին: Թող գալիք տարիները նոր աւիւն ու շունչ պարգեւեն նորբ ու աննկուն կերպարիդ, յարատեւ երթիդ միանան նուիրեալ երիտասարդ հայուհիների նոր սերունդներ՝ դառնալով քո նոր ջահակիրները: Իսկ ես՝ քո համեստ նուիրեալը, շարունակելու եմ քայլել քո ոտնահետքերով՝ յաւիտ մնալով ծով համբերատար հայ ժողովրդի պարտապանը...

Օրհնեալ լինես, ՀՕՄ...

ՀՕՄ ՀԱՐԱՄՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆ

Պատմական ակնարկ

ՀՕՄի Հարաւային Ամերիկայի միատորը հիմնուած է 13 Օգոստոս, 1933ին Պուէնոս Այրէսի մէջ, «Արմենիա» թերթի խմբագիր՝ Ռէն Վարդանեանի ջանքերով:

Վարչական կազմակերպչական

Կը գործէ եօթը մասնաճիւղերով, 493 անդամներով, երեք երկիրներու մէջ՝ Արժանթին, Ուրուկուայ եւ Պրագիլ:

Ծրագիրներ եւ գործունէութիւն

Մնայուն Ծրագիրներ

Խնամատարական

• Պ. Այրէսի եւ Սան Փապոյի ՀՕՄի Հանգստեան Տուները կը շարունակեն իրենց բարեսիրական աշխատանքը, վարչութիւններու եւ խնամակալ յանձնախումբերու օժանդակութեամբ:

• 2012էն 2014 Պ. Այրէսի հինգ յարկանի Հանգստեան Տունը վերանորոգուեցաւ շնորհիւ բարերարներու ներդրումին:

Կրթական եւ Մշակութային

• Շրջանս կը սատարէ մշակոյթին՝ յատկապէս պարարուեստին, «Նայիրի» եւ մանկապատանեկան «Շիրակ» (Պ. Այրէս) եւ «Սասուն» (Գորտոպա) պարախումբերով:

• 2016ին ՀՕՄի «Նայիրի» եւ «Շիրակ» պարախումբերը յատուկ հրաւերով մասնակցեցան Հ.Հ. Սփիւռքի նախարարութեան կողմէ կազմակերպուած, Հայրենիքի մէջ տեղի ունեցած «Իմ Հայաստան» փառատօնին:

• Շրջանիս «Անահիտ Մարօ» եւ «Ռուբինա» մասնաճիւղերը նիւթաբարոյական օժանդակութիւն կը տրամադրեն ՀՕՄի անունը կրող Պ. Այրէսի Խրիմեան եւ Մոնթէվիտոյի Ներսէսեան Վարժարաններու երկու մանկապարտէզներուն:

• Բոլոր մասնաճիւղերը սասնէր կը պահեն գաղութի ազգային վարժարաններուն մէջ:

• 2010ին Ուրուկուայի մէջ հիմնուած է «Զապէլ եւ Նազարէթ Պարտաքճեան» հայերէն





լեզուի եւ մշակոյթի կրթաթոշակը:

- Ամէն տարի՝ քարոզչութեան նպատակով, կը հրատարակուի ՀՕՄի Օրացոյցը:

Բացառիկ Ծրագիրներ Կանանց Իրաւունքներ

- Կարեւորելով հայ կնոջ դերն ու մարտահր-րաւէրները հասարակութեան հաւաքական կեանքին մէջ, 2012ին «Տատիկիս Դաջուածք-ները» վաւերագրական ժապաւէնը ցուցադ-րուեցաւ շրջանիս զանազան քաղաքներու մէջ, ներկայութեամբ հեղինակ ու նկարահան ընկերուհի Սիւզան Խարտալեանի:

- 2013ին Շրջանային վարչութեան հրա-ւերով, «Հրայր Մարուխեան» հիմնադրա-մի տնօրէնուհի ու կանանց իրաւունքներու պաշտպան՝ ընկերուհի Մարիա Թիթիզեան շրջանիս մէջ դասախօսեց կիները յուզող նի-թերու շուրջ:

- 2013ին Պ. Այրէսի մէջ տեղի ունեցաւ լու-սանկարչութեան ցուցահանդէս, «Կիները Գործընթացի մէջ» խորագրով, լուսարձակի տակ առնելով կիներու ջանքն ու համերաշ-խութեան ոգին:

Հարաւային Ամերիկայի Միաւորի 80 ամեակ

- 24 Ապրիլ, 2013ին իրականացաւ հայ ժո-ղովուրդի զոհերու յիշատակին արինատու-չութիւն, որ տարեկան ամանդութիւն դարձաւ

շրջանիս մէջ:

- 2013ին Պ. Այրէսի քաղաքապետարանին հետ գործակցաբար, Գաղութներու Հրապա-րակին վրայ տեղի ունեցաւ ծառատնկում եւ կոթողաքարի զետեղում ի երախտագիտու-թիւն Արժանթինի պետութեան եւ ժողովուր-դին:

2023ին Արժանթինի ՀՕՄի, ՀԲԸՄի եւ Հա-յաստան հիմնադրամի գլխաւորութեամբ, ար-տաքին գործոց նախարարութեան համագոր-ծակցութեամբ եւ Ճերմակ Սաղաւարտներու օժանդակութեամբ, տեղահանուած արցա-խահայութեան 14 թոն օգնութիւն ուղարկուե-ցաւ Հայաստան:

Կեդրոնական վարչութեան Ծրագիրներու մասնակցութիւն

Շրջանս իր մասնաճիւղերով եւ յանձնախում-բերով կը մասնակցի համահայկական բոլոր ծրագիրներուն: Իր նիւթական զօրակցութիւ-նը յայտնած է սուրիահայութեան, լիբանանա-հայութեան, Արցախի եւ Ջաւախքի: Նաեւ կ'օ-ժանդակէ տեղւոյս աղէտեալներուն, կարօտ-եալներուն եւ հանրային ճաշարաններուն:



Armenian Relief Society

Armenian Relief Society South America Region

South America Region

The ARS South America Region was established on August 13, 1933, in Buenos Aires, Argentina, with the efforts of Ren Vartanian, the editor of the “Armenia” newspaper. The region has 7 chapters with 493 members in 3 countries: Argentina, Uruguay and Brazil.

Two old age homes in Buenos Aires and San Paolo operate under ARS management. During 2012-2014, the residence at Buenos Aires was renovated by funding from community benefactors.

The region encourages the preservation of the Armenian culture through its dance ensembles, the Nairy (youth) and Shirag (preteens) in Buenos Aires, and Sassoun in Cordoba.

In 2016, the Buenos Aires dance ensembles traveled to perform for the “Eem Hayasdan” festival in Armenia.

The “Anahid-Maró” and “Roubina” chapters provide financial assistance to the ARS Khrimian and Nercessian School kindergartens.

All chapters provide financial assistance for needy children attending Armenian schools.

In 2010, the Zabel and Nazareth Bardakjian Scholarship Fund in support of Armenian language and culture was established.

The region publishes the ARS annual calendar as a public relations endeavor, which is well received by the communities.

As part of the role that the ARS plays for women’s empowerment, in 2012, the film, “My Grandmother’s Tattoos” produced by Suzane Khardalian was promoted in various cities within the region.

In 2013, Maria Titizian was

invited by the Regional Executive to present topics of interest for women. During the same year, a photo exhibit of women in action was organized displaying the unified efforts and spirit of women.

On April 24, 2013, the ARS initiated a blood drive in memory of the Armenian Genocide victims, which continues annually.

The ARS participated in planting trees and a monument around the Diaspora Circle in Buenos Aires with the support of the city hall.

In 2023, following the Artsakh war, the ARS participated in sending 14 tons of supplies to Armenia.

The ARS South America region participates in global ARS initiatives financially assisting compatriots struggling in Syria, Lebanon, Artsakh and Javakhk, as well as providing local disaster relief to victims, food banks and needy families.

ARS South America proudly preserves Armenian heritage and promotes humanitarian values.



ՀՕՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ. ՀԱՅ ԿՆՈՋ ՀԶՕՐԱՑՈՒՄԸ

Խաչիկ Տէր Ղուկասեան



այութեան հանրային կարծիքին մօտ Հայ Օգնութեան Միութիւնը (ՀՕՄ) կ'ընկալուի որպէս «կնոջական» կազմակերպութիւն մը եւ անոր առաքելութիւնը կը տեղադրուի, չըսելու համար կը «սահմանափակուի», բարեսիրութեան եւ բարեխնամութեան ոլորտին մէջ: Այս ընկալումը, թէկուզ եւ ակամայ, կազմակերպութեան կու տայ պահպանողականութեան պիտակ մը՝ հասարակութեան մէջ տղամարդոց եւ կիներու տեղի եւ դերի հայրապետական իշխանակարգային (patriarchal hierarchy) հասկացողութեան համապատասխան տրամաբանութեամբ: Այս ընդհանրական ընկալումը խոտոր կը համեմատուի ՀՕՄի ծննդոցին եւ անոր սկզբնական առաքելութեան:

Արդարեւ, երբ 115 տարի առաջ Ակնունիի նման մտաւորական յեղափոխականներ, որոնք նախաձեռնեցին կազմակերպութեան ծնունդին, շատ հեռու էին հայ կնոջ դերի պահպանողական որեւէ մօտեցումէ: Բոլորին մօտ շեշտուած էր օրին ամենաազատամիտ եւ ամենայառաջդիմական գաղափարախօսութիւններու եւ քաղաքական ծրագիրներու յանձնառութիւնը: Աւելի'ն, ՀՕՄը ծնունդ չառաւ հասարակութեան մէջ հայ կնոջ ինչ որ «տեղ» եւ «դեր» որոշելու նպատակով: Այդ տեղն ու դերը հայ կինը արդէն նուաճելու սկսած էր շնորհիւ 19-րդ դարու երկրորդ կէսի Զարթօնքին եւ, մասնաւորաբար, հայ ազգային-ազատագրական շարժումին, որպէս մտաւորական եւ յեղափոխական գործի առաջնագծային մասնակից: Այսինքն՝ ՀՕՄը ծնունդ առաւ, որովհետեւ արդէն կար զարգա-

ցած, մտաւորական եւ քաղաքականացած հայ յուսիներու յառաջապահ փաղանգ մը, պատրաստ ազգային-ազատագրական պայքարի կազմակերպական կառոյցը ընդլայնելու աշխատանքային նոր դաշտի մը ստեղծումով: Եւ որքան ալ որ ՀՕՄի իտէպլական բնորոշ Միջազգային Կարմիր Խաչի ապաքաղաքական աշխատանքային դաշտն էր, ՀՕՄի ծնունդը պիտի մեկնաբանել նաեւ հայկական իրականութեան մէջ որպէս քաղաքական նախաձեռնութիւն:

Յետադարձ քննական/քննադատական մօտեցումով մը մինչեւ իսկ կրնանք ըսել, որ 19-րդ դարու աւարտին եւ 20-րդ դարու սկիզբին հայ կնոջ քաղաքականացումը շատ անելի աչքառու եւ շեշտուած էր քան անցեալ դարու յետ-Ցեղասպանութիւն եւ յետ-խորհրդայնացում տասնամեակներուն ծնունդ առած եւ զարգացած հայկական Սփիւռքի ոլորտին մէջ հայ կնոջ տեղն ու դերը, գոնէ մինչեւ 1970-ական թուականներ: Վարկածի կարգով կարելի է մինչեւ իսկ ըսել, որ Սփիւռքեան գործընթացը՝ Ցեղասպանութենէն վերապրումի եւ կազմակերպումի տասնամեակներուն, թերեւս ակամայ, պահպանողական թեքում մը բերաւ աշխարհացրիւ հայ համայնքներէն ներս: Պատճառը, դարձեալ վարկածային եւ ընդհանրական իմաստով, կրնայ ըլլալ «հայապահպանում»ի հրամայականը, ուր «աւանդականութիւնը», ընտանիքէն մինչեւ եկեղեցիի եւ կրօնի դեր ու հասարակական-բարոյական վարքագիծ, ինքզինք պարտադրեց՝ հանրային խօսոյթէն մինչեւ սփիւռքեան կազմակերպութիւններու մէջ ղեկավար դիրքերու վրայ տղա-

104 |

ՀՕՄը ծնունդ առաւ, որովհետեւ արդէն կար զարգացած, մտաւորական եւ քաղաքականացած հայուհիներու յառաջապահ փաղանգ մը, պատրաստ ազգային-ազատագրական պայքարի կազմակերպական կառոյցը ընդլայնելու աշխատանքային նոր դաշտի մը ստեղծումով:

մարդոց եւ կիներու ներկայութեան ակնբախ անհասարկութիւն: Ճիշդ է, որ Սփիւռքի Երրորդ Սերունդի քաղաքականացումը 1960-80 թուականներուն իր նշանակալից անդրադարձը ունեցաւ նաեւ սփիւռքեան համայնքներու մէջ հայ կնոջ դերակատարութեան երբեմն արմատական փոփոխութեան վրայ: Այնուամենայնիւ, միայն մօտ երկու տասնամեակ առաջ, շնորհիւ, ի մէջ այլոց, Սիւզան Խարտալեանի Մեծ Սօր Դաջուածքները վաւերագրական Ժապաւէնին (2011), երեւան ելլելու սկսաւ թէ որքա՛ն հերոսական եղած է հայ կնոջ դերը Ցեղասպանութենէն վերապրումի սփիւռքեան էպոսին համար, եւ որքա՛ն անարդար՝ անոր տառապանքին մասին լռութիւնը...

Առանց երբեք նսեմացնելու այն կենսական դերը որ ՀՕՄը ստանձնեց Սփիւռքեան գործընթացին մէջ, ի մասնաւորի պատերազմի պայմաններու մէջ հայ համայնքներու գոյութենական մարտահրաւերներուն ժամանակ (ինչպէս՝ Յունաստանի մէջ Երկրորդ Համաշխարհային Պատերազմին ժամանակ կամ Լիբանանի՝ 1975-1990 քաղաքացիական պատերազմին), թերեւս անհրաժեշտ է քննական/քննադատական մօտեցումով հարց տալ: Եթէ սփիւռքեան պահպանողական թեքումը իր ազդեցութիւնը չէ ունեցած նաեւ ՀՕՄի առաքելութեան քաղաքական բնոյթի, եթէ ոչ չէզոքացման ապա գոնէ նսեմացման վրայ: Այսինքն՝ Սփիւռքի մէջ ՀՕՄին դերակատարութիւնը դնելով բարեսիրութեան եւ բարեխրանամութեան ոլորտին մէջ եւ հոն տեղադրելով հայ կնոջ յանձնառութիւնը հայապահպանումի տիրապետող յարացոյցի տրամաբանութեամբ, անոր աշխատանքային օրակարգը անտեսած է համամարդկային մասշտապով գոնէ վերջին յիսուն տարիներուն կնոջական

շարժումներու արծարծած հարցերու մտաւորական թէ գործնական մասնակցութիւնը:

Նման նախանձախնդրութիւն, ճիշդ է, տեսնուեցաւ 1980-ական թուականներու կէսերէն սկսեալ, եւ ՀՕՄը իր տեղը փնտոեց միջազգային կառոյցներու մէջ՝ համայնքային շրջագիծէն դուրս գալու յստակ ճիգով մը: Բայց այդ մէկը չհաստատագրուեցաւ անցնող 30-35 տարիներուն այնքան մը որ տեսանելի դարձնէր նաեւ՝ ՀՕՄի քաղաքական առաքելութիւնը որպէս հայ կնոջ իրաւունքներու ամրագրման ու տարածման եւ անոր հասարակական դերակատարութեան հզօրացման յանձնառու ու յառաջապահ կազմակերպութիւն:

Ինչպէս համասփիւռքեան կառոյց ու զօրաշարժի կարողականութիւն ունեցող բոլոր այլ կազմակերպութիւններու պարագային, ՀՕՄի կազմակերպական տարածումը Հայաստան եւ իր աշխատանքային օրակարգին վրայ Հայաստանի եւ Արցախի ուղղութեամբ նախաձեռնութիւններու բնական ու անխուսափելի առաջնահերթացումը թերեւս բացատրեն անցնող երեք տասնամեակներուն իր գործունէութիւնը ամենէն աւելի բարեսիրութեան ու բարեխնամութեան մարզերուն վրայ կեդրոնացուցած ըլլալու իրողութիւնը: Երկրաշարժն ու Արցախեան առաջին ու երկրորդ պատերազմները, Արցախի հայաթափումը, տակաին Սուրիոյ եւ Լիբանանի ճգնաժամերն ու այդ երկիրներու հայ համայնքներու գոյութենական մարտահրաւերները անշուշտ որ առաջնահերթային պիտի դարձնէին մարդասիրական օժանդակութիւնը, որուն կարեւորութիւնը կարելի չէ նսեմացնել: Միեւնոյն ժամանակ, սակայն, համաշխարհային մասշտապով կնոջական հարցերը, կիներու հանդէպ բռնութեանց դատապարտումն էւ կանխար-

գիլումէն մինչեւ իրաւունքներու ամրագրում եւ հզօրացում, որոնցմէ անջատ չէին կրնար մնալ ոչ Հայաստանը ոչ ալ սփիւռքեան համայնքները, մտաւորական բանավէճի, արուեստական ստեղծագործութեան եւ ակտիւ յանձնառութեան նոր հորիզոններ բացին, իրենց բոլոր հակասութիւններով, դրական ու ժխտական երեսներով եւ վերիվայրումներով: Ահա հոն է որ ՀՕՄի աշխատանքային օրակարգի ընդլայնումը տեսանելի չէ:

Ունանք հարց պիտի տան եթէ նման ընդլայնում մը արդէ՞օք խելացի քայլ մը պիտի ըլլայ ի մասնաւորի Քառասունչորսօրեայ Պատերազմէն եւ Արցախի հայաթափումէն յետոյ հայ ժողովուրդի դիմագրաւած ճակատագրական մարտահրաւէրներու այս հանգրուանին: Պահպանողական բնագրի նման հարցադրումներ միշտ եղած են եւ նոր մարտահրաւէրներու ընդառաջումը միշտ ալ վերապահութեամբ ընդունուած է: Ճիշդ է, որ անխուսափելի է որեւէ նորութեան բերելիք յիսկը՝ մարդու ժի եւ կազմակերպական կարելիութիւններու վատնումի իմաստով: Սակայն կարելի չէ խու-

սափիլ համամարդկային մասշտապով օրակարգի բերուող հարցերէն: Աւելի՛ն, անոնց դիմագրաւման պատրաստակամութիւնն է միայն որ ե՛ւ փորձառութիւն, ե՛ւ զարգացում եւ երիտասարդացում կը բերէ ՀՕՄի նման իր կազմակերպական ցանցով համաշխարհային ներկայութիւն ունեցող համահայկական կազմակերպութեան մը:

Սխալ է նաեւ ենթադրել որ բարեսիրութեան եւ բարեխնամութեան աշխատանքային մարզերը կը նսեմացուին կամ կը տուժեն եթէ օրակարգի վրայ բերուին նաեւ կնոջ իրաւունքներու եւ հզօրացման նպատակները մտաւորական բանավէճի թէ անոնց ակտիւ մասնակցութեան նախանձախնդրութեամբ: Եւ կարելութեամբ ի մտի պիտի ունենալ, որ կնոջական իրաւունքներու եւ հզօրացման հարցերը իրենց համամարդկային բնոյթով չեն կրնար արծարծուիլ բացառապէս կնոջական շրջանակի մը մէջ: Տղամարդոց մասնակցութիւնը այդ հարցերու քննարկման ու գործնականացման ոչ միայն կարելոր է, այլ՝ անհրաժեշտ: Յատկապէս իրենց, տղամարդոց, համար:

106 |




ARS South America 56th Regional Convention 2023

PAGE SPONSORED BY ARS WESTERN USA NAIRY CHAPTER

ՀՕՍ ՄԱԿԵՂՈՆԻՈՅ ԵՒ ԹՐԱԿԻՈՅ ՀԱՅ ԳԹՈՒԹԵԱՆ ԽԱԶ (ՅՈՒՆԱՍՏԱՆ)

Պատմական ակնարկ

 ՕՍԻ Մակեդոնիոյ եւ Թրակիոյ Հայ Գթութեան Խաչը հիմնուեցաւ 1924ին Յունաստանի Թեսաղոնիկէ քաղաքին մէջ, ապա իր գործունէութիւնը ծաւալեց Հիւսիսային Յունաստանի աւելի փոքր քաղաքներու մէջ գտնուող հայկական համայնքներէն ներս:

Վարչական Կազմակերպչական

Այսօր Մակեդոնիոյ եւ Թրակիոյ Հայ Գթութեան Խաչը ունի 306 անդամներ եւ 5 մասնաճիւղեր Թեսաղոնիկէ, Բաւլա, Բսանթի, Գոմոթինի եւ Տիտիմոթիխո-Օրեսդիատա քաղաքներէն ներս:

Յարաբերական

Հիմնադրութենէն ցայսօր միութիւնս անբաժանելի մաս կը կազմէ հայ ազգային կեանքին՝ սատարելով մեր շրջանի հայապահպանման, հայակերտման եւ մարդասիրական առաքելութեան:

Ծրագիրներ եւ գործունէութիւն

Հիւսիսային Յունաստանի մէջ հայութեան ներկայութիւնը 1947ի Հայաստան ներգաղթէն ետք կը նկատուէր փոքրաթիւ, սակայն 1990ական թուականներուն համայնքներու թիւը սկսաւ բարձրանալ, որովհետեւ Յունաստան հասան բազմաթիւ հայրենակիցներ՝ Հայաստանէն եւ Վրաստանէն: Այս իրավիճակը նոր խթան մը եղաւ միատրիս համար: Շարաթօրեայ դպրոցներու սակաւաթիւ աշակերտութիւն ունեցող դպրոցները ընդունեցին նոր հաստատուած հայ-

րենակիցներու զաւակները, եւ որոնք մինչ այսօր կը գործեն: Նշենք, որ դասերը կը դասաւանդուին արեւելահայերէնով, քանի որ տեղաբնիկ հայութիւնը մեծ մասամբ կամ չտեսնողագործեց կամ ալ խառն ամուսնութիւններու հետեւանքով դժբախտաբար բաւական հեռացաւ ազգային կեանքէն:

1990էն մինչեւ 2015 գործեց նաեւ Խալքիտիքիի ամարանոցը, որ եղաւ մեր կազմակերպութեան եւ յունահայութեան հպարտանքի եւ ներշնչանքի աղբիւր մը: Ամարանոցի դրախտավայրը եղաւ համայն սփիւռքի հայակերտման եւ հայեցի դաստիարակչութեան կեդրոն եւ հայ երիտասարդի հայկականութեան բոյն ու ապաստանը: Վերջին տարիներուն յունական տնտեսական տագնապի եւ այլ չնախատեսուած պատճառներու հետեւանքով Ամարանոցը չկարողացաւ սպասարկել հայութեան: Սակայն լուրջ եւ հետեւողական աշխատանքներ կը տարուին, որպէսզի շուտով տեղի ունենայ ամարանոցին վերամուտը: Այս բոլոր աշխատանքները կը կատարուին սահմանափակ տնտեսական միջոցներով, քանի որ շրջանի եկամուտը կապուած է որոշ անշարժ գոյքի շահոյթին, նուիրատուութիւններու, անդամավճարներու եւ անշուշտ թաղային մարմիններու նիւթական աջակցութեան:

2020ի արցախեան պատերազմին ընթացքին մեր միատրիք եւ Աթէնքի Հայ Կապոյտ Խաչը Հայ Դատի յանձնախումբին ուղղութեամբ եւ Յունաց պետութեան հովանաւորութեամբ դրկեցին մարդասիրական օգնութիւն երկու բեռնատար զինուորական օդանաւերով եւ բեռնատար նաւով մը: Այդ օգնութենէն մաս մը յանձնուեցաւ Հայաստանի ՀՕՍԻն եւ միւս մասը՝ պետութեան:

Հայ Գթութեան Խաչը, ինչպէս ՀՕՍԻ ամբողջ ընտանիքը, պիտի շարունակէ իր հայրենանրւէր առաքելութիւնը ի սպաս հայ ժողովուրդին եւ հայրենիքին, ի սպաս ապագայ մեր գալիք յաղթանակներուն:

Armenian Relief Society

Armenian Relief Society Macedonia & Thrace Region in Greece

Macedonia & Thrace Region in Greece

The ARS Greece Macedonia & Thrace Region was established in Thessalonica, Greece in 1924 and quickly expanded into the smaller cities of northern Greece, wherever there were Armenian communities.

The region has 306 members in 5 chapters in the following cities: Thessalonica, Kavala, Kozani, Komotini, and Didymoteicho- Orestiada.

Since its establishment, the region participates in all Armenian community activities enhancing the region's Armenian identity, while carrying out the ARS humanitarian mission.

After the 1947 exodus to Armenia, the population decreased drastically, however, during the 1990's a large number of immigrants from Armenia and Georgia began settling in the region.

The new immigrants brought a renewed sense of purpose by establishing one-day Armenian schools in order to serve the new generation. The already established community welcomed this change.

From the 1990's to 2015, the region proudly hosted summer camps at Chalkidiki, where many youth learned their language and culture in a beautiful natural setting, along with compatriots from other countries. During the past years, due



to economic instability in Greece and new government regulations, the camp at Chalikdiki has not been in operation. The ARS is committed to taking new steps in re-establishing the camp for public use.

During the 2020 Artsakh conflict, the region participated by sending emergency supplies with the assistance of the Greek government and ARS Greece-Athens.

The Region is steadfast in continuing its humanitarian mission for the benefit of the Armenian people and homeland, and future generations.

108 |



PAGE SPONSORED BY ARS GREECE - MACEDONIA AND THRACE

ԱԳՂԱՅԻՆ ԴԱՐՔՆՈՑ ՄԵՐ ՀՕՍԸ

Յովիկ Գասապեան

Իրականությունը այն է, որ այս վերջին տարիներուն եւ յատկապէ՛ս Արցախի անկումէն ետք, երբեմն ինքզինքս ուժասպառ կը զգամ, երբեմն տխուր, երբեմն ալ, որպէս մարդ՝ դատարկուած: Թերեւս այս մէկը անհատական զգացում մըն է եւ կամ հաւաքականութեան մը զգացումներու մէկ մասնիկը, որմէ ես կամ ինձի պէս ուրիշներ ալ կը տառապինք՝ լուռ ու մունջ: Յաճախ կը մտածեմ, թէ արդեօ՞ք կ'արժէ այսքան հոգեկան ալեկոծում հայրենիքներու համար, ուր չենք ապրած, բայց անոնց հանդէպ մեր տածած սէրը կու գայ հեռաւոր երկիրներէ, ուր մեզմէ շատեր կ'ապրին, որպէս հայկական սփիւռքի գաղութներու ազգայիններ:

Անաղարտ եւ անբիծ հայրենասիրութեան ոգին ներարկուեցաւ մէջս նախ ընտանիքէս եւ անշուշտ Հայ Գթութեան Խաչի Թեսաղոնիկէի «Մալաքեան Գասապեան» շաբաթօրեայ ծաղկոցէն եւ Խալքիտիքիի Ամարանոցէն, ուր կերտուեցաւ եւ ամրապնդուեցաւ մեր հայու ինքնութիւնը, հայրենիքի հանդէպ սէրը եւ արդար պահանջատիրութեան ու պայքարի ոգին: ՀՕՍը, բարեսիրական կազմակերպութենէ անդին, կը մնայ հայակերտման ու

կեանքի դարբնոց, դպրոց եւ մեծ ու գեղեցիկ ընտանիք, ուր իմ վիշտս կը դառնայ հաւաքական, եւ իմ ուրախութիւնս՝ անանձնական:

Սա՛ է ՀՕՍը, մեր մամիկները, մեր վարժուհիները, մեր Ամարանոցի տիկիները, որոնց հոգին կը մաշեցնէինք, անշո՛ւշտ, անցեալին: ՀՕՍը, իր մայրական ամէնօրեայ ներկայութեամբ, կը գեղեցկացնէ մեր համայնքներու ազգային կեանքը, բոլոր նուիրեալ ընկերուհիներու ծառայութեան եւ հոգատարութեան շնորհիւ: 115 տարի շարունակ մեր կազմակերպութիւնը եղաւ մեր ազգային կեանքի դրօշակիրը, որ իր ուսերուն առաւ 1915ի Հայոց Ցեղասպանութենէն վերապրած հայ գաղթականի տառապանքը, յաջորդ սերունդի հայեցի դաստիարակութեան առաքելութիւնը, անկախ հայրենիքի եւ ազատ Արցախի ամրապնդման ծրագիրները եւ դժբախտաբար տարագրեալ արցախահայու վերքերու ապաքինման եւ վերականգնման գործընթացը:

Ի՞նչ է ՀՕՍը, եթէ ոչ հայ նուիրեալի տունը, հայ սրտի հաւաքական կերպարը, ուր ինձի պէս ազգային տարերքէն տառապողներ կրնան ամոքել իրենց կսկիծը վերածելով զայն ուժի, յոյսի եւ նուիրումի:



Chalkidiki Youth Camp



ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱՊՈՅՏ ԽԱԶ (ԱԹԷՆՔ)

Պատմական ակնարկ

110 |

Յունաստանի Աթենքի շրջանին մեջ ՀՕՄԻ միատրին անունն է Հայ Կապոյտ Խաչ:

Հայ Կապոյտ Խաչի հիմնադրությունը հրամայական անհրաժեշտություն մըն էր 1922էն ետք, երբ հարիւր հազարի հասնող հայութիւն եւ ութը հազարի հասնող տարագիր որբեր ապաստանեցան Յունաստան:

Հ.Կ.Խաչը հիմնուած է Աթենքի մեջ 2 Յունիս 1924ին: 1926ին պաշտօնապէս ճանչցուած է, իբրեւ բարեսիրական, մարդասիրական ուրոյն միութիւն՝ յունական նախադատ ատենանին կողմէ:

Վարչական կազմակերպչական

12 Սեպտեմբեր 1924ին կը գումարուի Յունաստանի Հ.Կ.Խաչի Առաջին Պատգամատրական ժողովը, ուր կ'ընտրուի առաջին Շրջանային վարչութիւնը: Նորընտիր Շրջա-

նային վարչութիւնը մասնաճիւղեր կը հիմնէ գաղթակայաններու մեջ: Այսպէս, 1924էն մինչեւ 1928 կը կազմուին 14 մասնաճիւղեր, որոնցմէ մեծամասնութիւնը այսօր գոյութիւն չունի, բայց ատենին կատարած է խնամատարական, բարեսիրական ու որբախնամ բեղուն գործունէութիւն:

Յունաստանի Հայ Կապոյտ Խաչը այսօր կը գործէ Շրջանային վարչութեան կազմով եւ 5 մասնաճիւղերով՝ Նէոս Գոզմոսի «Ռուպինա», Գոքինիոյ «Սօսէ», Աթենքի «Ծովինար», Գարէայի «Աղթամար» եւ Ֆալիրոյի «Նայիրի»:

Անդամներու ընդհանուր թիւը կը կազմէ՝ 408 ընկերուհիներ:

Ծրագիրներ եւ գործունէութիւն

Հ.Կ.Խաչի գործունէութիւնը կ'ընդգրկէ խնամատարական, կրթական, հայրենասիրական աշխատանք: Ան բարոյապէս եւ նիւթապէս կ'օժանդակէ կարիքաւոր հայրենակիցներուն եւ ուր որ կարիք կը զգացուի անվարանօրէն օգնութեան ձեռք կ'երկարէ:

Կը գործէ յանձնախումբերով՝ տարեկան պազարի կազմակերպման, զոհուած հերոսներու զուակներու հովանաւոր ապահովելու, արեան պահեստի ապահովման, «Աւետիք եան» կտակի, կայքէջի-դիմատետրի, կալուածային եւ երիտասարդ ընկերուհիներու յանձնախումբերով:

Միութեան նիւթականը մեծ մասով կ'ապահովուի անդամներու ցենզերով, հայրենակիցներու կողմէ կատարուած նուիրատուութիւններով, կտակներով, տարեկան պազարով, որ միութեան ամէնէն շահաբեր եւ երկար աշխատանք պահանջող ձեռնարկներէն մէկն է: Տարեկան պազարի միջոցաւ Հ.Կ.Խաչը կը կատարէ իր քարոզչութիւնը երկրէն ներս եւ մեծ ընդունելութիւն եւ համակրանք կը վայելէ բոլորին կողմէ:

Յունաստանի Հ.Կ.Խաչի հոգատարութեան տակ կը գործեն հետեւեալ դպրոցները.- Գոքինիոյ շրջանէն ներս՝ «Զաւարեան» նախակրթարան վարժարանը եւ «Հայաստան Ուշազլեան» մանկապարտէզը, իսկ Նէոս Գոզմուսի շրջանէն ներս՝ «Լ. եւ Ս. Յակոբեան» նախակրթարան վարժարանը եւ «Արթին Գալուստեան» մանկապարտէզը, նաեւ կը գործէ «Ա. եւ Ժ. Ճէնազեան» միջնակարգ վարժարանը:

Հ.Կ.Խաչը հայեցի կրթութեան նպատակը իրագործելու առաջադրանքով հաստատած է մրցանակ մը՝

1- Հ. Կ. Խաչի վարժարանները յաճախող եւ



հայերէնը սորվելու յատուկ ճիգ թափող աշակերտներուն համար: Մրցանակը՝ Հ.Յ.Դ. Պատանեկան միութեան ամառնային բանակումի մասնակցութեան սակն է. այս ձեւով կը քաջալերենք մեր աշակերտները մասնակցելու հայրենաշունչ եւ դաստիարակիչ այս բանակումներուն:

2- Հաստատած է «Թագուհի Փաշայեան» մրցանակը՝ Հայ Կապոյտ Խաչի վարժարանները աւարտող աշակերտներուն համար, որոնք կը յաջողին յունական պետական համալսարանները մուտք գործել:

3- Նիւթապէս կ'օժանդակէ միջնակարգ վարժարանը աւարտող աշակերտներու Հայաստան ճամբորդութեան:

Կեդրոնական վարչութեան ծրագիրներու մասնակցութիւն

Միաւորը կը մասնակցի ՀՕՄԻ Կեդրոնական վարչութեան բոլոր ծրագիրներուն:



84th Regional Convention

Armenian Blue Cross

Armenian Blue Cross of Greece - Athens of Greece - Athens

The ARS Region in Athens, Greece is called Armenian Blue Cross.

The founding of the Armenian Blue Cross was a necessity after the events of 1922, during which more than one hundred thousand refugees and eight thousand orphans found refuge in Greece.

The Armenian Blue Cross was established in 1924, however it was not until 1926 when it was officially recognized by the Greek authorities.

Historical Background:

The first Regional Convention of the Armenian Blue Cross in Greece was held on September 12, 1924, during which the first Regional Executive Board was elected. The newly elected board established 14 chapters in refugee camps, from 1924 to 1928. Those chapters played a crucial role in providing social, charitable and managed orphanages during critical times. The majority of those chapters do not exist currently.

The ARS of Greece has 5 chapters with 408 members: “Roubina” Chapter of Neos Cosmos, “Sosse” Chapter of Kokkinia, “Zovinar” Chapter of Athens, “Aghtamar” Chapter of Kareia, and “Nairy” Chapter of Faliro.

Activities of the ARS include providing medical care, educational and community service, in

addition to counseling and financial help to needy community members.

The region organizes the annual bazaar, promoting sponsorships to children of fallen heroes, organizing blood donations, administers the “Avedikian” will, social media updates, property management and young members’ committees.

Funding for most activities are allocated through membership dues, wills, donations, annual bazaar income, which is by far the most profitable source of income. The annual bazaar promotes public relations and is welcomed by Armenians and Greeks alike.

The ARS operates the following schools: Zavarian Elementary School and Hayasdan Oushakian Kindergarten in Kokkinia, Levon & Sophia Hagopian Elementary School, Artin Kaloustian Kindergarten and A & J Jenazian Middle School in Neos Cosmos.

Armenian students who excel in their studies are granted ARS scholarships:

The ARS sponsors the entrance fees to the Armenian Youth summer camp for students who attend regional schools and excel in Armenian subjects. By attending the summer camp, the youth will have opportunities to experience their heritage and culture.

The region has established the Takouhi Pashayan Fund to assist ARS school graduates accepted into public universities.

The ARS subsidizes travel expenses for the middle school graduating class trips to Armenia.

The ARS Athens Region continues to support ARS Central Executive Board programs, believing in its humanitarian mission.



ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ, ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՆՔԱԿՏԵԼԻ ՇՂԹԱՅԻ ՄԸ ՕՂԱԿՆԵՐԸ

Նորա Բիրտողլեան Գույումճեան

Այս տարի մեզի վիճակուեցաւ բախտը՝ Հայ Օգնութեան Միութեան հիմնադիր սերունդի նուիրումաժողովինն ու զոհաբերութեան ոգին յիշատակելու, պատուելու եւ փառաւորելու իրարայաջորդ սերունդներու վաստակը, պանծացնելով մեր միութեան 115 տարիներու յարատեւ գործունէութիւնը:

Հպարտութեան եւ ուրախութեան զգացումներու զուգահեռ՝ պատասխանատուութեան լրջագոյն գիտակցութեամբ ու յանձնառութեամբ է, որ կ'ընկալենք 115-ամեայ այս տարեդարձը:

Յանձնառութիւն՝ գործելու վերանորոգ ու անկոտրում կամքով, ժամանակին հետ քայլ պահելու, մշտատեւ գործելով ժողովուրդին հետ եւ ժողովուրդին համար՝ 115 տարեկանի իմաստութեամբ, բայց նաեւ ու մանաւանդ՝ երիտասարդական երազանքով, մտասէտեռումով ու ոգեւորութեամբ, բարեսիրական գործադաշտին առջեւ նոր հորիզոններ բանալու կամքով:

115 տարեկան ըլլալը փաստ է՝ ժողովրդային սիրոյ, ամուր կազմակերպութեան, ինչպէս նաեւ լայնածաւալ ու արդիւնաւոր աշխատանքի եւ կուտակուած հսկայ փորձառութեան:

Այսուհանդերձ, 115 տարեկան ըլլալը նոյն ատեն կրնայ վտանգ դառնալ մաշումի կամ ժամանակավրէպ ըլլալու հաւանականութեան:

Բարդ ու կնճռոտ ժամանակներ են ամբողջ մարդկութեան համար. դժուար ժամանակներ կ'ապրինք նաեւ ազգովին:

Գաղափարներու արժեզրկման ենթակայ ներկայ յարափոփոխ մարդկային ընկերութեան մէջ, իսկական ու գաղափարապաշտ ղեկավարներու անգոյութիւնը միջազգային գետնի վրայ եւ ճարտարարուեստի ու ճարտարագիտութեան (technology) կայծակնային զարգացումը հետզհետէ աւելի դժուար կը դարձնէ կամաւոր ծառայութեան արժէքով ներշնչել ու կամաւոր աշխատանքի լծել մարդիկ: Նոյնքան դժուար է նաեւ՝ հանրութիւններու անվերապահ վստահութիւնը շահիլը:

Ազգային գետնի վրայ, հայակրթութեան եւ հայախօսութեան նահանջը, սերունդներու հայապահպանութեան դժուարութիւնը սփիւռքի մէջ, Հայաստանի ներքաղաքական կեանքի տագնապը, հայ հանրութեան կարեւոր մասի մը հիասթափութեան կամ անտարբերութեան դրսեւորումը լրջագոյն խնդիրներ են, որոնց մարտահրաւէրին առջեւ կը գտնուին հայկական միութիւնները եւ կազմակերպութիւնները:

Առաջին օրէն մինչեւ հիմա, հաւատարիմ իր կոչումին, ՀՕՄը անշեղ առաջնորդուած է կամաւոր ու անշահախնդիր ծառայութեան մղումէն եւ շահած է հայ մարդոց համակրութիւնն ու աջակցութիւնը, առանց որոնց հնարաւոր ալ պիտի չըլլար, որ այսօր հանրութեան ներկայանար ան 115 տարուան վաստակով:

115-ամեայ տարեդարձին իսկական փայլը ներկայէն պիտի արտացոլայ ու տարածուի ապագային վրայ, երկու նախապայմաններով:

Առաջին. նորագիրներու մուտքերով, նոր

մտքերով եւ աշխատող ձեռքերով պիտի թարմանայ ՀՕՄի համահայկական մեծ ընտանիքը:

Կարելոր է տեսնել ու գնահատել դժուարութիւնները այս դաշտին վրայ:

Ներկայիս, մարդոց եւ ի մասնաւորի երիտասարդներու առօրեան կլանուած է իրենց մասնագիտութեան, գործին, ընտանեկան պարտականութեանց ու բազմաթիւ այլ զբաղումներով: Անոնք ընդհանրապէս տարբեր հասկացողութեամբ կ'ըմբռնեն կամաւոր աշխատանքի համար տրամադրուածութիւնը, տարբեր քան ա'յն պատասխանատուութեան պահանջքը, որ կ'ընկալուի միութեանկան մեր գործունէութեան մէջ:

Սերունդները իրարու մօտեցնելու ճիգին մէջ չի բաւեր հրաւեր ուղղել նորերուն: Կարելոր է, որ երիտասարդները աւելիով ներգրաւուին մարտահրաւերի դաշտ, անհրաժեշտ է լսել անոնց կարծիքներն ու մտածումները, հաւաստիացնել, թէ իրենց հայեացքով ե'ւ ընդունելի է ե'ւ կարելի է փոխել մեր «աւանդական» գործելաոճը: Նախաձեռնելու առիթներ տալ անոնց:

Այս մարզին մէջ կարելի է փորձել զանազան ձեւեր, ի հարկին ունենալ «ՀՕՄ Youth» միաւորներ՝ Շրջանային Վարչութեանց հովանաւորութեան տակ, ուր իսկութեան մէջ պիտի համախմբուին ու ժամանակաւոր գործեն մասնաճիւղերու միջին-երիտասարդ տարիքի անդամուհիները:

Շարքերը երիտասարդականացնելու յաջողութեան մէջ ամէնէն կենսական արդիւնքը պիտի կազմէ այն, որ բնական ուղիով պիտի սերնդափոխուի նոյնպէս միութեան հետեւող ու աջակցող համակիր զանգուածը:

Երկրորդ. կասկածէ վեր է, հայրենիքի գաղափարով եւ տենչով ծնած-մեծցած ՀՕՄի եւ անոր նպատակներու թափանցումին անհրաժեշտութիւնը Հայաստանի ժողովրդային խաւերու մէջ:



Ատիկա ՀՕՄին պիտի ապահովէ Հայաստանի քաղաքացիներու, մանաւանդ երկրի հարուստ խաւին գործնական օժանդակութիւնը բարեսիրական ծրագիրներու իրագործման, ապա նաեւ պիտի նպաստէ, որ հայրենի բնակչութեան մօտ զարգանայ կամաւոր աշխատանքի մշակոյթը:

Ծանօթ է, թէ հանրային համակրանք կամ հակակրանք ստեղծելու քարոզչութեան մէջ, զանգուածային լրատուական միջոցներու դերը մեծ է: Մեծ է նաեւ արուեստի աշխարհի անուանի մարդկանց դերը: Պիտի չվարանիլ դիմելու, դարձեալ ու անդադրում դիմելու այդ ուժին: Ծանօթացնել բոլորին ու ամէնուրեք տարածել ՀՕՄի պատմութեան մէկ դարու փաստը, կուսակցական պատկանելիութենէ անդին ու վեր՝ անոր բարեսիրական ու հայակրթական ծրագիրները եւ անշահախնդիր նուիրումը՝ հայ կեանքին:

Ամէն պարագայի եւ հակառակ այն իրողութեան, որ ՀՕՄը ունի կնոջական կազմակերպ գործունէութիւն եւ ուժականութիւն, պէտք է արձանագրել եւ համոզել բոլորը, թէ սովորական, միա'յն հայ կիներու կազմակերպութիւն մը չէ ան: Անպայման համոզել ու զգացնել ամէ'ն հայ անհատի, անկախ ենթակայի սէռէն ու տարիքէն, բնակութեան վայրէն ու քաղաքական արեւելումէն, թէ ՀՕՄի միաւորի մը թեւ ու թիկունք տալով, ան կը դառնայ բարեսիրական, համահայկական հզօր ու մեծ ընտանիքի մը անքակտելի ու երկար շղթայի մը արժէքաւոր մէկ օղակը:

ՀՕՄ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՇՐՋԱՆ

Պատմական ակնարկ

ՀՕՄ Պուլկարիան ունի իր տեղը կազմակերպության 115 ամեայ պատմության մեջ: Այն հիմնուել է 1919թ., ապա վերականգնուել է 1990թ. իր մասնաճիւղերով քաղաքներում, որտեղ բնակուում են մեծ քանակութեամբ հայեր: 1993 թուից ունի իր շրջանային վարչութիւնը (ՇՎ):

Վարչական կազմակերպչական

Պուլկարիոյ շրջանի անդամների թիւն է 300: Ունի 5 մասնաճիւղ՝ Փլովտիվում, Սոֆիայում, Պրրկասում, Վառնայում եւ Ռուսիում:

Շրջանային վարչութիւնը ունի իր ներկայացուցիչները եւ ղեկավարները, որով իրականացնում է ղեկավարական քաղաքականութիւնը, համաձայն կազմակերպութեան կանոնագրի:

Քաղաքներում տեղւոյն համայնքը ստացաւ հնարատրութիւն աւելի մօտիկից ճանաչել ՀՕՄի գործունէութիւնը, աշխատանք տարուեցաւ աւելի շատ անդամներ ներգրաւելով: Նախատեսուեցան նոր միջոցներ նաեւ հաւաքելու նիւթական օգնութիւն ՀՕՄի Կեդրոնական վարչութեան ծրագրերին ու մեր հարեանակիցներին:

Ծրագրեր եւ գործունէութիւն

ՀՕՄի Պուլկարիոյ շրջանին նպատակն է օգնել կարիքաւոր ընտանիքներին, բաժանել մթերքներ եւ դեղանիւթեր անվճար: Շրջանը իր կարելիութիւններուն սահմաններուն մէջ մասնակցում է Կեդրոնական վարչութեան ընկերային նախագծերին՝ օգնել կարիքաւորներին բնական աղէտների, պատերազմների, ընկերային ճգնաժամների պայմաններում (Հայաստան, Արցախ, Սուրիա, Լիբանան):

Մասնաճիւղերի գործունէութեան անբաժան

115



մասն են հաւաքոյթները: Հաճելի զրոյցներ, սուրճ կամ մի գաւաթ զինի, հայկական համեղ ուտելիքներ, ուրախ կամ տխուր առիթով, ազգային կամ մշակութային տօներին: Կարելորը, որ հաւաքոյթի մասնակիցները համակրանքով կիսում են ՀՕՄի նպատակները:

Աւանդական գործունէութիւններ, որը կազմակերպում են ամէն տարի մասնաճիւղերում, Վարդելառի տօնը եւ բարեգործական տօնավաճառներն են:

2019ին սկսեց աշխատանքը խոհարարական ցուցահանդէս-վաճառքով, որպէս բարեգործութեան տօն եւ խոհանոցային երեւակայութիւն: Մասնակցեցին բոլոր մասնաճիւղերը, իսկ Շրջանային վարչութիւնը ապահովեց նաեւ խորհրդանշական պարգէներ եւ խրախուսական պատուոգրեր՝ մասնակիցների համար:

2021ին հիմնուել է «Մայրիկ, միասին գնանք գրադարան» նախագիծը, որտեղ ծանօթացան հայ գրող Յովհանէս Թումանեանի «Խօսող ձուկը» հեքիաթին: Մասնակիցներին առաջարկուեց խաղեր դերերով, թեմատիկ նկարներ, քննարկում երեխաների եւ ծնողների հետ հեքիաթի թեմայով «Լաւութիւն արա, գցի ջուրը»: Հանդէսը իրականացուեց Շրջանային վարչութեան կողմից՝ մասնակցութեամբ երկու մասնաճիւղերի: Նախագծի երկրորդ թեման էր «Հանդիպում պատմութեան հետ», որտեղ ծանօթացան Վարդան Մամիկոնեանի եւ

նրա զինուորների հերոսութեանը: Տատիկները, մայրիկները երեխաների հետ մասնակցեցին ծրագրին՝ պաստառներով, նախագծերով, լուսանկարներով: Մասնակիցները ներկայացրեցին իրենց աշխատանքները:

2022ին իրականացուեց «Վարդելառի հեքիաթը» նախագիծը: Մասնակիցները երկու շրջանային ռատիոկայաններով պատմեցին Վարդելառի տօնը դիմաւորելու աւանդոյթը: Մասնաճիւղերի եւ հայ եկեղեցւոյ ներկայացուցիչը պատրաստի ձայնագրութիւններով մասնակցեցին հաղորդմանը: Սոնա Խնկիկեանը, որպէս նախագահ, նոյնպէս մասնակցեց ուղիղ եթերում:

2022ին մասնակցեցինք նաեւ Փլովտիվը Եւրոպական մշակութային մայրաքաղաք Plovdiv European capital of culture նախագծին: Ծագումով հայ ջութակահար երեխաներ ներկայացրեցին Վարդելառի տօնը Փլովտիվում բնակուող հայերի, պուլկարների եւ այլ փոքրամասնութիւն կազմող ազգերի համար:

Յաջորդ տարի կազմակերպուեց գրական ընթերցումներ՝ Դերենիկ Դեմիրճեանի» Վարդանանք» վեպից: ՀՕՄի երկու մասնաճիւղերու անդամներ ներկայ գտնուեցան մայրաքաղաքի օպերետային համերգի:

2023ի «Բարեգործութեան ուղիով» ցուցահանդէսը Փլովտիվում տեղ գտաւ քաղաքի կեդրոնական այգում: Կտաների վրայ ցուցադրուեցին նկարներ եւ նիւթեր Պուլկարիա-

116 |



PAGE SPONSORED BY ARS WESTERN USA ANAHID CHAPTER

յում ՀՕՄԻ գործունեության թեմայով:

Փլովտիցիները եւ քաղաքի հիւրերը հնարարութիւն ունէին երկու շաբաթ ծանօթանալու միութեան գործունեութեան հետ: Այս նախագիծը մեծ լրագրային արձագանք ստացաւ, նոյնպէս Հայաստանում, շնորհիւ Պուլկարիայում Հայկական Հանրապետութեան դեսպանին: Ծնորհակալագրեր ստացան մասնաճիւղերի ներկայացուցիչները, որոնք ներկայացրել էին նիւթերը, նախագահը, որպէս ցուցահանդէսի գլխաւոր կազմակերպիչ: Ղեկավարը նաեւ ապահովել էր ֆինանսական բարերարներ:

Անցած շրջանում, աշխատել ենք հաւաքել նիւթական օգնութիւն ՀՕՄԻ գործունեութեան համար: Զանազան լուսանկարներ Հայաստան այցելած մեր անդամի կողմից, դարձան գեղեցիկ յուշանուէրներ մագնիտով:

Ծնորհիւ սրտցաւ մարդկանց, որոնք մտահոգուած են աղէտի մէջ գտնուող կանանց ու երեխաների համար, կազմակերպուեց բարեգործական գործունեութիւն եւ վաճառուեցին այդ յուշանուէրները: Արցախում պատերազմ էր: Հաւաքուած գումարը յանձնուեց ՀՕՄԻ Կեդրոնական վարչութեան, որպէս օգնութիւն Արցախին:

Սուրբ ծննդեան բարեգործական գործունեութիւնը նուիրուած էր յատուկ օգնութեան կարիք ունեցող մեծահասակներին օժանդակութեան: Այս անգամ փայտից արձանիկները, երկլեզու գրառումներով իրականացրին նախագծի նպատակը:

Կեդրոնական վարչութեան ծրագրերի մասնակցութիւն

ՀՕՄ Պուլկարիան մասնակցում է ԿՎ ծրագրերին՝ «Սօսէ մանկապարտէզներ», «Ամանոր», «ՀՕՄԻ կրթաթոշակ» (2 կրթաթոշակներ): ՀՕՄ Պուլկարիան ֆինանսաւորում եւ օգնում է մանկապարտէզների գործունեութեանը (ԿՎ, ԾՎ եւ մասնաճիւղերու միջոցաւ):



Նոյնպէս նպաստում է մայրենի լեզուի, գրականութեան եւ պատմութեան ուսուցմանը: Մանկապարտէզներ գործում են ՀՕՄԻ բոլոր մասնաճիւղերում:

Առաջին մանկապարտէզը սկիզբ առած է 2006ին Փլովտիվ քաղաքում: Երեխաների թիւը այժմ 60-70 երեխայ է: Մանկապարտէզների նպատակն է՝ ներշնչել սէր դէպի մայրենի լեզուն: Երեխաները սովորում են, խաղում, երգում: Իրենց սովորածը ցոյց են տալիս բոլոր տօներին: Համաճարակի ժամանակ ձայնագրուած են կարճ տեսահոլովակներ երեխաների մասնակցութեամբ «Ծնորհաւոր նոր տարի եւ Սուրբ ծնունդ» եւ «Ողջոյն գարուն», որոնք հրապարակուած են մասնաճիւղերի, Երջանային վարչութեան դիմատետրերի էջերում: Դրանք ուրախութիւն էին երեխաների, ծնողների եւ հասարակութեան համար:

ՀՕՄը համախմբում է վեհանձն հոգիները, որոնք մոռանալով իրենց սեփական հոգսերը, յօգուտ ազգին ու բարի գործերով, հասնում են այնտեղ, ուր ազգը օգնութեան կարիք ունի:

Հպարտ ենք, որ ունենք հնարարութիւն, սովորել մեզնից աւելի փորձառու ընկերուհիներից, որ այս հզօր կազմակերպութեան մի փոքրիկ մասնիկն ենք, բաղկացած վսեմ ու հայի սրտերով անձերից:

Armenian Relief Society

Armenian Relief Society Bulgaria Region

Bulgaria Region

ARS Bulgaria was first established in 1919 and then re-established in 1990, with 300 members in five chapters in Plovdiv, Sofia, Bourgaz, Varna, and Ruse. Starting in 1993, the region has elected its Regional Executive.

Since 2006, the region operates a kindergarten in Plovdiv with 60-70 children teaching the Armenian language, history and culture. During the Covid pandemic, Christmas carols and other children's entertainment were distributed on DVDs and social media.

The Regional Executive carries out the ARS mission in accordance with the ARS bylaws, as well as the guidance from the ARS Central Executive Board to provide direction to the chapters. The Regional Executive also conducts activities to promote the ARS, attract new members and organize fundraisers.

The chapters distribute free food and medicine to needy families, as well as the elderly, along with providing humanitarian assistance to victims of natural disasters and war-torn communities in Armenia, Artsakh, Syria and Lebanon.

The chapters organize social events over traditional holidays bringing community members together over wine and cheese, and coffee receptions; these include Vartavar and annual bazaars. Since 2019, the region brings members together for culinary competitions, creating comradie amongst participants.

The "Mother and Child Book Reading" sessions were established to encourage elders to bring to life Armenian stories as they read to their children and grandchildren, such as Hovaness Toumanian's "The Talking Fish" and historical enactments such as Vartanants. The region utilized radio services to broadcast the Vartavar story.



In 2022, the region participated in the Plovdiv European capital cultural festival for ethnic minorities, with musical performances about Vartavar.

In 2023, a visual arts exhibition was held in Plovdiv showcasing global ARS activities. The region promoted ARS programs with photo magnets of picturesque Armenia as mementos, while raising funds for Artsakh.

ARS Bulgaria disperses ARS Amanor funds to brighten the Christmas season for needy children and the elderly.

The ARS brings together devoted members who sacrifice their time and energy for the betterment of people, with kindness and compassion. The members are proud to have the opportunity to learn from more experienced members. As a small part of this powerful organization, the members continue to progressively realize the ARS objectives with their hearts and souls. ARS Bulgaria proudly believes in the slogan: "With the people, for the people".

Looking Forward to the Future

Sona Hangikian

In 2025, we mark the 115th anniversary of the Armenian Relief Society (ARS) – one of the most significant Armenian women’s organizations, founded on the values of charity, human care, and devotion to the Armenian community and homeland. Throughout this long journey, filled with challenges and hope, ARS has established itself as a symbol of perseverance, solidarity, and unconditional support in over 20 countries around the world.

Today, the question before us is: “How do we move forward?” The answer is clear, by the involvement of young people.

It is time for a new generation to step up with their energy, ideas, willingness and leadership. ARS needs the youth, just as the youth needs the ARS – as a space for fulfillment, purpose, belonging, and connection to their roots.

The Central Executive Board is making active efforts in this direction – through scholarships, training programs, and youth-focused projects. All of them aim to bring the new generation closer to the organization’s mission and values.

The doors of this organization have always been open to those who believe that change begins with small but heartfelt actions.

115 years of ARS. This is more than a jubilee. It is a celebration of trust, humanity, dedication, and gratitude. Today, we remember all those who have laid this path – day by day, year after



|119

year, with hard work, care, love, and faith in good deeds.

It is a moment to say thank you – to every mother, every daughter, every volunteer who has stood “With the People, For the People” We proudly declare that we are part of this great global family, and we will continue to thrive, because kindness has no expiration date, no borders, and no age. We simply carry on upward and onward.





Մ.Օ.Խաչի Ա. Պատգամաւորական Ժողովը, 7 Ապրիլ 1931ին

ՍՈՒՐԻԱՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱԶ

Պատմական ակնարկ

ՍՕԽաչը իր հիմնադրութեան օրէն՝ 2 Սեպտեմբեր 1919էն, իբրև ՀՕՄԻ մէկ շառաիղ, դարձրւմ ամբողջ շարունակ հայ ժողովուրդի սիրտը ներկայացնող, Սուրիոյ հայ իրականութեան մէջ տեսարար եւ մայրաբար գործող, չի սահմանափակուիր ծառայելու իբրև լոկ մարդասիրական եւ բարեսիրական միութիւն, այլ՝ հաստատ համոզումով կը շարունակէ ազգապահպանման ծանր, սակայն սրբազան առաքելութիւնը: Ան եղած է ու կը մնայ հայ կնոջ նկարագրի, բարոյական կազմաւորման, հայունիի արժանիքները ի յայտ բերող հոգեմտաւոր զարգացման դարբնոցը, ուր հայ կինը շատ բան ունի սորվելիք, ապա իբրև խաչունի շատ բան ունի տալիք:

Վարչական կազմակերպչական

ՍՕԽաչը Սուրիոյ տարածքին ունի 10 մասնաճիւղեր՝ 1307 անդամունիներով եւ 14 շրջանային յանձնախումբեր, որոնք համագործակցութեամբ ու նուիրումով կը կազմակերպեն տոհմիկ երեկոներ, դաստիարակչա-

կան դասախօսութիւններ, դասընթացքներ, հաւաքոյթներ, պտոյտներ, բարեսիրական, կրթական, առողջապահական եւ խնամատարական աշխատանքներու կողքին: Ունի երեք վաճառատուններ՝ «Նախշատուն», «Նարօտ» եւ «Շիրակ», որոնք տպածոյի, ասեղնագործութեան եւ պահածոյի վաճառքներով հասութաբեր աղբիւրներ են եւ նիւթական ներդում կ'ունենան Շրջանային վարչութեան:

Յարաբերական

ՍՕԽաչը հայկական մշակոյթի պահպանման, առողջապահական եւ բարեսիրական ծառայութիւններուն համար պատուոյ գիրերով գնահատուած է թէ՛ հայ եւ թէ՛ արաբ բարեսիրական միութիւններու կողմէ: Նաեւ զանազան լրատուամիջոցներ հարցազրոյցներ վարած են յատկապէս Սուրիոյ պատերազմի, Պսակաձեւ ժահրի եւ անլի ուշ երկրաշարժի օրերուն:

Ծրագիրներ եւ գործունէութիւն

Դաստիարակչական գետնի վրայ, 2010-2024 տարեշրջաններուն, ՍՕԽԻ շարքերուն



թէ հանրութեան ներկայացուած են ՀՕՄԻ եւ ՍՕԽաչի գործունէութիւնները, ազգային, եկեղեցական, միջազգային, պատմական, մանկավարժական, կնոջական, առողջապահական, համացանցի, լրատուական, արուեստի, գրականութեան, դիւանային, Հայաստանի, Արցախի, Ջաւախքի, պսակաձեւ ժահրի մասին դասախօսութիւններ, զրոյցներ եւ հարց-պատասխանի մրցումներ: Իսկ համաճարակի օրերուն դասախօսութիւնները համացանցի միջոցաւ հանրութեան ներկայացուած են :

Խորհրդածողովներ

- «**Լրագրական**» հետեւեալ նիւթերով՝ «Հալթպահայ Մամուլի Պատմութիւն», «Օրաթերթ եւ Շաբաթաթերթ Հասկացողութիւն», «Լրագրութեան Առարկայականութիւն», «Լրագրութեան Պատերազմ», ինչպէս նաեւ համակարգչային հմտութեան գործնական աշխատանքներ եւ ՍՕԽաչի ընթացիկ ծրագիրներ:

- **ՍՕԽաչի տեղեկագրեր եւ կանոնագրային հարցեր:** ՀՕՄԻ 100 տարիներու գործունէութեան տեսերիզի ցուցադրութիւն, որ կ'ընդգրկէր նաեւ ՀՕՄԻ հիմնադրութեան 100 ամեակի առթիւ ուխտատրներու Սուրիա այցը:

- Դիւանային աշխատանքներ եւ ժողովավարական օրէնքներ

- «**ՍՕԽաչը ի սպաս սուրիահայութեան**» հետեւեալ նիւթերով՝ ՀՕՄը եւ ՄԱԿի ոչ կառավարական կազմակերպութիւններ, ECOSOC «Ազգային Սահմանադրութիւն, Ազ-

գային Վարչութիւն եւ Խորհուրդներ», ՀՕՄԻ նորօրեայ գործունէութեան զեկոյցներ, Պատգամաւորական ընդհանուր ժողովներու ընթացք եւ խօսքի տեսակներ:

- «**Հայ Կնոջ Դերը Գաղութի Զարգացման Մէջ**» կ'ընդգրկէ «Դարմանատան պատմական», «Քրիստոնէայ Կրօնը եւ Հայ Կինը Ազգեկեղեցի Երջագիծէն ներս», «Հայ Կնոջ Դերը Գաղութի Զարգացման Մէջ», «Իրական Մտածողութեան Զարգացման Մեթոտաբանութիւն»ը:

- «Ակնարկ Մը Հայ Մանրանկարչութեան» եւ «Նկարագիրներու տեսակներ ու Հաղորդակցութեան Ձեւեր»

- «Հօր Սփիւռք՝ ՍՕԽաչի Տեսլականով» կ'ընդգրկէ՝ «Հայ Օգնութեան Միութեան Գաղափարախօսութիւնն ու Ծրագիրները», «Սփիւռքահայ Կին Գրողներ եւ երկու հրապարակագիրներ», «Ազգ եւ Պետութիւն», «Շուկայավարում», «Հաղորդակցութեան Հմտութիւններ»:

- ՀՕՄԻ Համահայկական Պատգամաւորական Ժողովներ՝ 70-73-րդ, ՍՕԽաչի 35-41-րդ Երջանային Պատգամաւորական Ժողովներու գումարում, ՍՕԽԻ ծաւալած գործունէութիւնը՝ Սուրիոյ երկրաշարժի ընթացքին, ՍՕԽաչի Երջանային վարչութեան գործունէութիւններ:

Դասընթացներ՝

Շտապ օգնութեան, բջիջային հեռաձայնի գործածութեան, համակարգիչի (ICDL), անգլերէն, ֆրանսերէն եւ ռուսերէն լեզուներու, գրաշարութեան, արաբախօս մայրերու յատուկ հայերէն լեզուի դասընթացք, հայկական գաւառներու ասեղնագործութիւն, ՍՕԽաչի նորագիրներու, հաշուապահական, Մոզայիքի :

Տրատարակչական - Քարոզչական

Պատրաստած է ֆիլմաշարեր՝ «Անցեալէն Այսօր 100 Ամեակի Շեմին», «Հայ Մօր Տարուան» առթիւ գրքոյկ մը՝ «Հայ Կնոջ Դերը Պատմութեան Ընթացքին» նիւթով, «ՍՕԽա-

չը Պատնէշի վրայ», « Ընկերաբժշկական Կեդրոնի վերաբացում» : Հրապարակած է Ս.Օ.Խաչի թիւ 2 տեղեկատուն, որ ընդգրկած է 2007-2011 տարեշրջաններու գործունէութիւնները, իսկ թիւ 3 տեղեկատուի տպագրութիւնը ընթացքի մէջ է 2011-2024: «Գանձասար» պաշտօնաթերթին յղած է թղթակցութիւններ ՍՕԽաչի ծրագիրներուն եւ նախաձեռնութիւններուն մասին:

ՍՕԽաչի հիմնադրութեան 95 ամեակին առթիւ, «Գանձասար» շաբաթաթերթին մէջ յատուկ էջով մը ներկայացուցած է պատմական ակնարկներ, առաւել յօդուածներ՝ դարմանատան, պատուարանի, արծուիկներու եւ նըւիրեալ անձերու թեմաներով: Նաեւ օրացոյցի հրատարակութիւն:

Հանդիսութիւններ եւ մայրերու օր

«Մայրերու Օր»ուան տօնակատարութիւններ՝ ՆՍՕՏՏ Արամ Վեհափառ հայրապետի հռչակագրերու թեմաներով, ՍՕԽաչի հիմնադրութեան 95 եւ 100 ամեակներ, Հայոց Ցեղասպանութեան 100 ամեակ, Հայ Գիրքի 80 ամեակ եւ «Հայ Կին Խմբագիրներ» 1880էն սկսեալ, Հայ Մօր տարուան նուիրուած հանդիսութիւն, Համերգ՝ նուիրուած ՍՕԽաչի 100 ամեակին:

ՍՕԽաչը իրականացուցած է նաեւ. –

- Ցուցահանդէս-վաճառքներ՝ ներքին թէ արաբ բարեսիրական միութիւններու ցուցահանդէսներու մասնակցութեամբ եւ յատուկ ցուցահանդէս մը՝ առ ի զօրակցութիւն Արցախի Հանրապետութեան:
- Օժանդակած է Սուրիոյ ծովեզերեայ շրջանի հրդեհներէն տուժած ժողովուրդին :
- Պատերազմին պատճառով վնասուած Ընկերաբժշկական շէնքը վերանորոգած է:
- «Գերազանց ուսանողներու ծրագիր»: Նիւթական պարգեւներով գնահատած է Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանի Միջնակարգի եւ Երկրորդականի պետական քննութեանց առաջին



երեք դիրքերը գրաստանայ աշակերտները, իսկ շրջանները՝ իրենց ազգային վարժարաններուն: Ներդրում բերած է «Դպրոց Հիմնադրում»ին:

- Ազգ Քարէն Եփփէ Ճեմարանի եւ Միացեալ նախակրթարանի ու մանկապարտէզի աշակերտութեան նուիրած է հայերէն լեզուի եւ կրօնի դասագիրքեր, Միացեալի արաբերէն դասագիրքեր հայթայթած է, Ճեմարանի աշակերտութեանց ամառնային եւ ձմեռնային համազգեստ նուիրած է, ՀՕՄի ներդրումով Հայ Ծերանոցի մամիկներուն եւ պապիկներուն հեռատեսիլ տրամադրած է, 9-րդ եւ 12-րդ կարգերու «ԼՈՅՍ ՄԸ» ծրագիրը կատարած է՝ փոքր արեգակնային սարք, նուիրատութեամբ ՀՕՄի Միացեալ Նահանգներու Արեւելեան շրջանին, անբարենպաստ պայմաններու մէջ ապրող տարեց կամ հիւանդ անձերու battery եւ charger-ով հովհարներ նուիրած է, 1948 եւ վեր ծնունդ տարեցներու «Տաքուկ ներքնազգեստներ»ու բաշխում կատարած է, Ամանորի ծրագիրով խաղալիք նուիրած է Ազգ. Միացեալ վարժարանի աշակերտութեան, ինչպէս նաեւ կարիքաւոր ընտանիքներու եւ անհատներու սննդակողովներ բաշխած է: ՀՕՄի նուիրատութեամբ գնուած տասը համակարգիչներ բաշխած է կարիքաւոր ուսանողներու:

- Խնամատարական, առողջապահական եւ այլ ծիրերէն ներս բարոյապէս եւ նիւթապէս օժանդակած է առողջական զանազան խնդիրներ ունեցող հայորդիներու, պետական բարեսիրական միութիւններու, մարզական,

երիտասարդական, ուսանողական, պատանեկան միութիւններու տարեկան բանակումներուն, Համազգայինի հայագիտական հիմնարկին, Հայ Ծերանոցին, ազգային հաստատութիւններու եւ այլ կարիքներու:

- Ծոմապահութեան հանգանակութիւն կազմակերպած է Մեծ Պահքի շրջանին, ՀՕՄԻ եւ ՍՕԽճի ննջեցեալներու յիշատակին նուիրուած հոգեհանգստեան պաշտօններ կատարուած են, պարգեատրուած են 50 նաեւ 30 եւ անլի տարիներու ծառայութիւն ունեցող անդամուհիներ՝ ՍՕԽճի «Կանթեղ» շքանշանով, կազմակերպած է նորագիրներու երդման արարողութիւնն ՍՕԽԻ 100 ամեակին նուիրուած եւ այլ առիթներով:

- Հալէպի Պետական համալսարանի երիկամներու եւ տարրալուծարանի պիտոյքներու ապահովում, նաեւ՝ «Covid 19»ի համաճարակին դէմ պայքարելու նպատակով հանգանակութիւն:

Առողջապահական - Դարմանատուն

Ընկերաբժշկական կեդրոնէն ներս տեղակայուած դարմանատունը տարուէ տարի իր մասնագիտութիւններու բաժինները ընդարձակելով, ունեցաւ նաեւ մարձումի կեդրոն: Անհրաժեշտութենէ մղուած վերջերս Ընկերաբժշկական կեդրոնը օժտուեցաւ արեգակնային համակարգով, նուիրատուութեամբ՝ ՀՕՄԻ Միացեալ Նահանգներու Արեւելեան շրջանին:

Դարմանատան կից գտնուող բնակարանին գնումը մեծապէս նպաստեց դարմանատան



ՍՕԽճի Ազգ. Պատսպարան

ընդարձակման, շնորհիւ ՀՕՄԻ Գանատայի միաւորի նիւթական օժանդակութեան:

Դարմանատունը 20է անլի մասնագիտական բաժիններով իր ծառայութիւնը կը մատուցէ շրջանի բնակչութեան՝ յարմարագոյն սակերով: Միաժամանակ տրամադրելով տնային հիւանդներու անհրաժեշտ սարքեր եւ դեղորայք, օժանդակութիւնը կրկնապատկուեցաւ պատերազմի եւ երկրաշարժի օրերուն: Յատկանշական է նաեւ Հոկտեմբեր ամսուան ընթացքին կուրծքի քաղցկեղի կանխարգիլման արշալին ծիրին մէջ mamographic անվճար քննութիւնը՝ պետական կեդրոններէն ներս: Աչքի կապոյտ ջուրի Միջազգային Օրուան առիթով, աչքի ճնշման անվճար քննութիւն մէկ ամսուան տեւողութեամբ: Ծնչառական անհանգստութիւններ ստուգող յատուկ սարքի մը միջոցով անվճար քննութիւն՝ տրամադրուած DORCAS կազմակերպութեան կողմէ:

Բերիոյ թեմի Նպաստից յանձնախումբի ջանքերով, ատամնաբուժարանը օժտուեցաւ ատամնաբուժական արդիական նոր աթոռով եւ իր յարակից գործիքներով, նաեւ panoramic ատամնաբուժական նկարչական սարքով, տրամադրուած SALT կազմակերպութեան կողմէ:

Անլի քան հարիւրամեայ կեանք ունեցող ՍՕԽճ-Ազգ. Պատսպարանը արժանացած է ՀՕՄԻ եւ ՍՕԽճի մեծ ընտանիքներուն, նաեւ Առաջնորդ Սրբազան հօր հոգատարութեան



Եւ ուշադրութեան: Այժմ՝ պատսպարանը ունի հինգ մնայուն սան եւ 26 այցելու սաներ: Իսկ մանկամտուրը իր հոգատար վերաբերմունքով կը խնամէ շուրջ 15 երեխաներ:

Կեդրոնական վարչութեան ծրագիրներու մասնակցութիւն

ՍՕԽաչը բարեսիրական եւ դաստիարակչական աշխատանքներու կողքին, ընկերային կեանքը բարելաւելու հեռանկարով, յատուկ բժականորոշեամբ հետամուտ եղած է Սուրիոյ մէջ ՀՕՄԻ ծրագիրներու եւ բարեսիրական օժանդակութիւններու անխափան շարունակականութեան, իրականացնելով ՀՕՄԻ «Պնակ մը Տաք Ճաշ», Գանատայի Միատրիի ներդրումով՝ «Տաքուկ Զգեստներ», Ազգ. Միացեալ աշակերտութեանց: Կրթաթոշակի համար դիմող ուսանողներու դիմումնագրերը փոխանցած է Կեդրոնական վարչութեան համապատասխան յանձնախումբին: Ամերիկայի արեւելեան շրջանի ներդրումով՝ «Տաքուկ Բնակարան» եւ «Ամանոր Ծրագիր» նախաձեռնութիւնները յաջողութեամբ պսակած է: Նաեւ ՀՕՄԻ «Զինուորի Տուն» վերականգնողական ծրագրին արժէքաւոր եւ հնազանդական արժէք ունեցող ձեռագործ մը նուիրած է: Շրջանային վարչութիւնը կ'ողջունէ ՀՕՄԻ

աշխարհացրիւ ընկերուհիները եւ իր անդամուհիներու բերած կարեւոր ներդրումը գաղութս ներս, յատկապէս՝ ազգային արժէքներու պահպանման, գաղութը կենսունակ ու առողջ պահելու եւ մեր ասանդութիւններու իւրայատուկ յատկանիշները արժեւորելու նպատակով:



«Տաքուկ Զգեստներ» Ծրագիր

Armenian Relief Society

Armenian Relief Society of Syria

The ARS Syria Region (“Sooryahay Oknootchian Khach”), since its establishment on September 2, 1919, has served more than a century, not just as a humanitarian organization, but has played a vital role in the preservation of the Armenian diaspora. It has and will continue to be the crucible where character and virtues of Armenian women develop and flourish.

The region has 10 chapters, 14 regional committees and 1,307 members, who organize cultural events, educational lectures and courses, gatherings, excursions, in addition to humanitarian, health and well-being and caregiving services. The organization has 3 income-producing outlets – ‘Nakhshadoun’, ‘Narod’ and ‘Shirag’, where stamped fabrics, needlework and preserved foods are sold, ensuring revenue for regional programs.

The region was recognized by Armenian and non-Armenian humanitarian organizations, and media, for its active role in providing health and humanitarian assistance during the civil war, Covid-19 pandemic, and the earthquake.

Seminars & Workshops

Since 2010, the Regional Educational Committee organized lectures on ARS in Syria and its activities, chapter executive duties, national, educational, international, historical, early childhood and women’s issues. Topics such as health, social media, informational, art, literature, Armenia, Artsakh, Javakhk, Covid-19, and quiz bowls. During the Covid-19 pandemic, all lectures were conducted online.

Seminars covering media subjects such as ‘The history of the Syrian Armenian newspaper’, ‘Daily and Weekly Publications’, ‘Objectivity of the Media’, ‘Media War’, and computer literacy classes were held.

A video presentation was produced on the



centenary of the ARS, including the history of the ARS in Syria. This included footage from the 2010 pilgrimage to Syria.

Lectures were presented regarding the ARS activities at the United Nations, as a Non-Governmental Organization (NGO), Armenian national constitution, National Assembly of the church, the ARS and its activities around the world, and ARS conventions.

Lectures also included the role of Armenian women in development of the Diaspora—history of the health clinic, the role of women in religious circles, developments in the betterment of mental health, review of Armenian miniature paintings, as well as personality types and respective communication methods.

“Strong Diaspora Vision” of the ARS Syria contains “ARS ideology and programs”, “Diaspora women authors”, “Peoples and Nations”, “Marketing strategy”, and “Intelligent communication”.

ARS Syria participated in the ARS 70th through 73rd international conventions, ARS Syrian Regional conventions 35 through 41, and informational meetings regarding regional executive activities, including relief efforts following the earthquake in Syria.

The following educational workshops and seminars were held: first aid; use of mobile phones and computers including typing and data entry; Armenian, English, French and Russian language classes; Armenian needlework and mosaics; how to prepare financial records; and introductory lectures for new ARS members.

Public Relations

Several videos regarding ARS history, motherhood and Armenian women were produced. Regional activity reports were compiled for publication (2007-2024). 'Kantsasar' continues to be the official publication of the Region.

The Kantsasar weekly had a special section dedicated to celebrating the 95th anniversary of the founding of ARS in Syria, containing a historical timeline, articles about the medical centers, shelters, scouts, and many dedicated individuals. ARS Syria publishes yearly calendars.

Events

Various events and concerts were organized such as Mothers' Day, ARS Syria 95th and 100th anniversaries, 100th anniversary of the Armenian genocide commemoration, 80th anniversary of Armenian books and "Armenian women authors since 1880".

Various art exhibits were organized with art works by Armenian and non-Armenian artists, fundraisers, sales, bazaars, in solidarity with the people of Artsakh, to provide financial assistance to victims of the seaside fires, and to repair the medical center damaged during the civil war.

Scholarships and financial aid were provided to the top three scoring Armenian students to graduate Karen Yeppe middle and high schools.

Activities

ARS Syria Regional Executive provided Armenian and Arabic language, and religion textbooks to kindergarten through elementary grades, summer and winter uniforms, television sets for rest home residents, fans with batteries and solar chargers and thermal underclothing were distributed to the elderly and 10 personal computers to needy higher education students. Other donations included toy drives and nutritional food baskets to distribute to needy children.

ARS Syria provided financial assistance for caregivers for the elderly, health care and medical assistance for individuals with chronic ailments, governmental charity organizations, athletic, youth, college students, camp jamborees, Hamazkayin Armenian forum, home for the aged, and other Armenian institutions.



Departed members and benefactors were honored during annual requiem services in February. The Regional Executive bestows 30 and 50 years-of-service pins for dedicated members.

ARS Syria coordinated supplies and equipment donation for the laboratory and the dialysis center of the local Aleppo College.

The ARS health and medical center are evolving and expanding. The center received physical therapy equipment. Following the earthquake, the center gained energy independence with 48 solar roof panels and a battery backup system with a donation from the ARS of Eastern USA. The purchase of the property adjacent to the medical center, through the donation of the ARS Region of Canada, helped in the expansion process.

The health center has more than 20 specialty departments and provides medical services, prescription and over-the-counter medications, and home care equipment at affordable prices. The need for the medical center increased after the civil war and earthquake. Every October, the ARS encourages breast cancer prevention screening services. Free cataract and eye pressure screening were also provided. The DORCAS organization provided specialized equipment to screen for lung ailments. Through the efforts of the Armenian Prelacy of Aleppo, the SALT organization donated a dental chair with all the attachments and an x-ray machine.

Following years of tradition and directives of the ARS CEB, along all humanitarian and social programs, the "hot meals" program continues. With financial assistance from ARS Canada, the 'warm uniform' program for the students continues as well. Scholarships are provided for students attending higher education. ARS Eastern Region sponsors the "Warm Home" and "Amanor" programs.

In conclusion, ARS Syria salutes worldwide members, past and present, for all their input into the organization, especially for preserving Armenian identity and heritage, and being leaders in their respective communities.

ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ ԿՈՒՏԱԿԵԼՈՎ ՆՈՐՈԳՈՒՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Զարմիկ Պողիկեան

Քսաներորդ դարու սկիզբը բարեփոխական եւ մարդկային առաջադրանքներէ յառաջ եկած «Դաշնակցութեան Կարմիր Խաչը», հետագային՝ Հայ Օգնութեան Միութիւնը, բարերար դեր ունեցաւ հայ ժողովուրդի կեանքէն ներս: Իր այս առաքելութեան կողքին, ան հայ կնոջ կերպարին տուաւ նոր երանգ՝ մօր կողքին, որպէս կամաւոր, ազգին թեւ ու թիկունք կանգնելու եւ հասարակութեան մէջ գործուն դերակատարութիւն ունենալու: ՀՕՄը նուիրագործեց կամաւոր ծառայութիւն հասկացութիւնը, որ ինքնին բարուք դեր ունեցաւ մեր համայնքներու եւ հայրենիքի ընկերային կեանքի զարգացման մէջ:

Հայ Օգնութեան Միութեան ճամբով հայ կինը դարձաւ յանդուգն մտքի ու խօսքի տէր ժողովական, կրթական, մշակութային, առողջապահական եւ ընկերային կեանքին մէջ աւանդականն ու արդիականը զուգորդող ու հայ կեանքին համար լաւագոյնին ձգտող նորարար տարր:

Աշխատանքի իր պարագիծը տարածուեցաւ ողջ հայ ազգին վրայ՝ Հայաստանէն Արցախ ու Սփիւռք: ՀՕՄի գործունէութեան ընդամէջէն հայ կինը ոչ միայն բարեսիրական աշխատանքի ընդունակ է, այլեւ զարգացուցած հասարակութեան եւ տարբեր կազմակերպութիւններու հետ իր յարաբերութեան տարողութիւնը՝ կապեր հաստատելով տարբեր միութիւններու եւ կազմակերպութիւններու հետ, հայկական թէ միջազգային:

ՀՕՄի ճամբով հայուհիները ջանացին նոր որակի բարձրացնել յատկապէս հայ մօր ու կնոջ կենսամակադակը՝ աշխատանք հայթայթելով անոր եւ հասարակութեան մէջ գործունէայ տարրի վերածելով զայն:

ՀՕՄը Հայ սերունդներու կրթութիւնը երաշխաւորելու համար սատար հանդիսացաւ կրթական կեանքին, նիւթական օժանդակութիւն յատկացնելով ուսանողներուն, կառուցելով մանկապարտէզներ, նեցուկ կանգնելով դպրոցներուն եւ այլն: Այս բոլորին կողքին պանծացուց հայ մշակոյթն ու հայոց լեզուն՝ հայկական ասեղնագործութեան եւ այլ մշակութային ձեռնարկներու կողքին, պանծացրնելով մեր ոսկեղենիկը՝ հայագիտական հիմնարկներու օժանդակելով, հայերէնաւանդ ուսուցիչին ու մանուկին նեցուկ կանգնելով եւ հրապարակային, կազմակերպական ու արխիւային հայալեզու իր աշխատանքով:

ՀՕՄուհին իր բարեսիրական աշխատանքին կողքին հմտացաւ շուկայավարման եւ ձեռնարկատիրութեան ոլորտներուն մէջ՝ իր ղեկավարած տարաբնոյթ ձեռնարկներուն ընդամէջէն: Ու այս բոլորը ծառայեցուց իր միութեան ու անոր ճամբով ազգին ու հայրենիքին: ՀՕՄուհին ինչպէս միութեան հիմնադրութեան, այնպէս ալ Արցախեան ազատամարտի օրերուն կանգնեցաւ հայրենի հողին համար մարտնչող զինուորին ու անոր ընտանիքին



կողքին: Իր գործունեությամբ իմաստաւորեց հայրենասիրութիւնը, որ լոկ լոզունգ չէր, այլ աշխատանք, նուիրում ու ծառայութիւն:

Երբ աշխարհը կանանց իրաւունքներու մասին տակաւ սկսած էր խօսիլ, ՀՕՄուհիները արդէն իսկ դրսեւորած էին իրենք զիրենք որպէս ժամանակակից, աշխատունակ, մարդկային իրաւունքներու եւ Հայ Դատի պաշտպաններ ու դարձած էին արդէն հայ հասարակութեան մէջ որոշում գոյացնող միութեան/միութիւններու անդամ, յանդուգն ծրագիրներով սատարելով ազգին ու հայրենիքին:

Այս բոլորին ընդմէջէն 115 տարիներու ընթացքին միութիւնը կամուրջ հանդիսացաւ աշխարհացրի հայութեան բեկորներուն միջեւ՝ հեռաւոր Ամերիկաներէն, Եւրոպա, Միջին Արեւելք, Հայաստան ու Արցախ: Հայութիւնը միացնող, անոր ցաւերը ամոքող ու ամէն ժամանակներուն մէջ՝ երկրաշարժէն, պատերազմ ու հայրենազրկում, նոր կեանքի յոյս ներշնչող ազդակ դարձաւ ան:

Այսօր, աշխարհը ականատես կ'ըլլայ դարադարձի հետեւանքով աշխարհաքաղաքական սրընթաց զարգացումներու: Արցախը խլուած է, Հայաստանի սահմանները վտանգուած, իսկ սփիւռքահայ յատկապէս Միջին-արեւելեան կարգ մը գաղութներ նօսրացած ու տկարացած: Միւս կողմէ, սակայն, այլ գաղութներ վերակազմակերպուած ու աճած են, սփիւռքահայ թէ հայրենի երիտասարդութիւնը ժամանակակից արհեստագիտութեամբ օժտուած նոր ուղիներ կ'որոնէ իր ընտանիքն ու հասարակութիւնը զարգացնելու, հայրենիքը ծաղկեցնելու, արցախահայութեան նեցուկ կանգնելու համար: Ուստի, ՀՕՄը իր համահայկական ցանցով հայ կեանքի յոյսի սերմնացանը կը մնայ: Մեծ չէ 115 տարիներու փորձառութիւն կուտակած մեր կազմակերպութիւններու կամ միութիւններու թիւը: ՀՕՄը այսպիսի փորձառութիւն կուտակած ըլլալով՝ ընդունակ է երիտասարդանալու եւ ժամանակակից աշխատելաճով, արհեստա-



գիտական նորարարութեամբ շարունակելու իր ծառայութիւնը, եթէ մանաւանդ իր շարքերուն մէջ ներգրաւէ երիտասարդ տարրը ու նորարար ոճով շարունակէ գործել՝ խնայելով ժամանակը, բազմապատկելով աշխատանքը եւ կրկնապատկելով արդիւնքը: Ժամանակակից արհեստագիտութիւնը յաջողած է այս աշխատանքի եղանակը ընդհանրացնել, ՀՕՄը անոր համահունչ աշխատանքի եղանակով կրնայ ընդլայնել գործունեութեան իր դաշտը: Օրինակ. իր յրեւեանին առիթով անդամուհիներու, բարերարներու եւ կտակարարներու մարդկային եւ տնտեսական կարելիութիւններու նոր քարտէսագրութիւն մը պատրաստելով իր ուժի աղբիւրները վերարժեւորելով ու ժամանակակից ծրագիրներ որդեգրելով՝ համաձայն մեր ժողովուրդի նոր կարիքներուն, կարելիութիւններուն եւ զարգացման հեռանկարներուն:

Որքան մեծ է ՀՕՄին տարած ազգանուէր աշխատանքը, այնքան մեծ են ակնկալութիւնները այս հսկայ կազմակերպութենէն: Ուստի բեղուն աշխատանք ու աննահանջ երթմաղթենք ՀՕՄին, որ իւրաքանչիւրիս մէջ արթուն կը պահէ հայ ըլլալու հպարտութիւնը, ազգին նուիրուելու կարեւորութիւնը ու բարեւիրական աշխատանքին խանդը:

Յարգանք ՀՕՄի հիմնադիրներուն ու անոր շարքերուն մէջ կամաւորաբար ծառայողներուն:

ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅ ԿԱՊՈՅՏ ԽԱԳ



Paris Convention, 1933

Պատմական ակնարկ

Տրանսայի շրջանի ՀՕՄԻ Հայ Կապոյտ Խաչը հիմնուած է Հայաստանի Ա. Հանրապետութեան հաղորդակցութեան նախարար Արշակ Զամալեանի նախաձեռնութեամբ, 1929ին: Այդ թուականէն ի վեր, կանայք որոնք միացած էին Հայ Կապոյտ Խաչ կազմակերպութեան, շարունակաբար զանազան ծառայութիւններ կը մատուցէին հայ գաղթականներուն, որոնք բնակութիւն կը հաստատէին Ֆրանսայի մէջ՝ ինչպէս ուսումնական, մարդասիրական կամ ընկերային: ՀՕՄԻ ընկերուհիները՝ շարունակելով հիմնադիր ընկերուհիներու գործը, ներկայիս զանազան օգնութիւններ կը տրամադրեն կարիքաւոր ընտանիքներու:

Վարչական կազմակերպչական

Ներկայիս Ֆրանսայի ՀՕՄը ունի 14 մասնաճիւղ, 400էն անելի անդամներ եւ 7 միօրեայ վարժարաններ:

Ծրագիրներ եւ գործունէութիւն

Այս կազմակերպութիւնը մատակարարման կեդրոններ հաստատած էր՝ օգնելու Ֆրանսա հասնող նոր գաղթականներուն, նոյնիսկ երբ տակաւին Ֆրանսայի մէջ գոյութիւն չունէր ընկերային ապահովութիւն սպասարկութեան պետական ցանցը:

ՀՕՄԻ տարբեր շրջաններուն նման, հաստատած է միօրեայ վարժարաններ՝ նորահաս սերունդին ուսուցանելու հայ լեզու, պատմութիւն եւ մշակոյթ:



Bellefontaine Summer Camp, 2023

1980 թուականին ի վեր, Ֆրանսայի ՀՕՄը կրթաթոշակ տրամադրած է համալսարանական ուսանողներու:

ՀՕՄի Ֆրանսայի Կապոյտ Խաչը 1928ին հաստատած է ամառնային ճամբար մը, որ բոլորին սրտին մօտիկ ծրագիր մը եղած է: Այս ճամբարին նպատակն է օգնել մանուկներու եւ պատանիներու, որպէսզի ամառնային շրջանին հանգստանան ճամբարին մէջ:

1955ին ՀՕՄը Պելաֆոնթէնի Ժուրա շրջանին մէջ գնած է ճամբար մը, որ տարիներու ընթացքին ծաւալելով կրցած է կեցութիւն տրամադրել շուրջ 200 մանուկներու, 2 հանգրուանով: Ընթացքին մասնակցողներէն շատերու ծախսերը ՀՕՄի տարբեր մանաճիւղեր կը հովանաւորեն: Շատերու կողմէ փոքրիկ Հայաստան համարուող այս ճամբարը առիթ կ'ընծայէ թէ՛ պատանիներուն եւ թէ՛ երիտասարդներուն, իրարու ծանօթանալու եւ երկարատեւ բարեկամական կապեր հաստատելու: Անոնցմէ շատեր իրենց կեանքի ընկերներուն ճամբարին մէջ հանդիպած են: 2025 տարեշրջանին Պելաֆոնթէնի ճամբարի հիմնադրութեան 70 ամեակը նշուեցաւ:

Ընկերային ցանցերու շնորհիւ, Ֆրանսայի մէջ կը սփռուի ժրջան ՀՕՄուհիներու աշխատանքներն ու իրագործումները՝ Գանատայի, Լիբանանի, Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Զաւախքի եւ Հայաստանի մէջ եւ

այլուր: Այսպիսով, ցոյց կը տրուի տարբեր կրկիրներու մէջ անոնց ծաւալած գործի կարելութիւնը ընտանեկան, ընկերային եւ բարեսիրական բնագաւառներուն մէջ:

Վերջին տարիներուն, մասնաւորաբար դաժան դէպքերէն ետք, ինչպէս՝ Լիբանանի նահանգապետի պայթումը եւ ներքին քաղաքացիական լարուածութիւնը, Արցախի պատերազմը եւ տարածքին հայաթափութիւնն ու տեղահանութիւնը, Սուրիոյ երկրաշարժը, Ֆրանսայի շրջանը միշտ աչալուրջ եւ արթուն մնաց՝ օգնելու մեր հայրենակիցներուն: Շրջանի անդամներն ու իրենց բարեկամները դրամահաւաքներ կազմակերպեցին եւ տարբեր տեսակի օգնութիւն տրամադրեցին աղէտալի բոլոր շրջաններուն:

Այս փոփոխական պայմաններուն մէջ մեր խաչուհիները հանրութեան կը ներկայանան առաջնորդուելով «ժողովուրդիս հետ ժողովուրդիս համար» նշանաբանով: Կը փափաքինք, որ ուրիշներ ալ մեզի միանան, օրինակ ունենալով իրենց մայրերն եւ մեծ մայրերը, որոնք կ'աշխատին թէ՛ բարեսիրական եւ թէ՛ ընկերային օգնութիւն տրամադրելու, նաեւ սատարելու հայրենաբնակ մեր ժողովուրդին, բարելաւելու անոնց առողջութիւնը, ուսման պայմանները եւ պաշտպանելու կանանց իրաւունքները:

The Armenian Blue Cross

The Armenian Blue Cross of France

of France

The French region of the ARS, Armenian Blue Cross of France (Croix Bleue des Armeniens de France), was established upon Archak Djamalian's initiative in 1929 (formerly Minister of Communications during the first independent Republic of Armenia). Since its establishment, ARS France members have several waves of Armenian refugees who arrived in France from Genocide survivors to those who escaped war torn regions.

The ARS France region has 400 members in 14 chapters, and 7 one-day schools.

ARS France members continue to uphold the volunteer spirit of past members by serving educational, humanitarian and social needs of the community and providing relief and support to needy families.

In the beginning clinics were established to treat the newly arrived refugees before social security services were available in France. One-day Armenian schools were also established to teach Armenian language, history and culture to the new generation. Since the 1980's, ARS scholarships have allowed many college students to pursue promising careers.

The well-being of children has been a priority of

the region. Since the establishment of the region in 1928, summer camps were held for children. In 1955, the Blue Cross of Armenians of France acquired a campsite in Bellefontaine, in the Jura region, which over the years has expanded to accommodate nearly 200 children. Some campers are sponsored by different chapters. The camp, which acts as little Armenia in Jura, allowing these children to create bonds for a few weeks and friendships that last over a lifetime. Some campers who have met at Bellefontaine, years later have married! During the summer of 2025, the 70th anniversary of the Bellefontaine summer camp was celebrated.

The region utilizes social media to broadcast informational programming in France about the "enguérouhies" of the diaspora, from Canada to Lebanon, USA, Javakhk and Armenia. Hence, the social and humanitarian services of different ARS regions are shared with the French public.

After the difficult events of recent years, from the explosion of the harbor in Beirut, to the war of Artsakh and the ethnic cleansing that followed, to the crisis in Lebanon and the earthquake in Syria, ARS France has remained mobilized to help our compatriots. Our members as well as our supporters have donated to our charitable causes.

It is in this dynamic of humanitarian and social actions that the "khatchouies" of France project themselves, "With the people, for the people" and only ask to be joined by all those who, like their mothers and grandmothers, want to volunteer in the service of others providing assistance through various ARS programs serving children of fallen heroes, improving health and educational conditions in Armenia and empowering women.



Bellefontaine Summer Camp, 1958

Mon hommage à HOM

Mon respect à l'ARS

Béatrice Ananian

15 ans ! Le HOM fête cette année ses 115 ans d'existence et de nombreux événements et festivités seront organisés en 2025, notamment en octobre en Arménie, pour honorer l'organisation si chère à nos cœurs et célébrer cet anniversaire. Dans tous les pays où le HOM est présent, les HOMouhies se feront un plaisir de participer à cette célébration, d'une façon ou d'une autre, en réunissant leurs forces pour lui donner l'éclat qu'elle mérite.

Pour ma part, c'est par le témoignage qui suit que je contribue à lui rendre hommage.

Le hasard des déplacements des Arméniens survivants après 1915 ont fait que je suis née en France de parents rescapés du génocide, et j'y réside toujours. Mes parents y ont fondé leur foyer et notre famille a vécu et prospéré dans cette double culture arméno-française. Ils ont pu transmettre à leurs enfants l'âme arménienne qui nous habite encore aujourd'hui, malgré les difficultés et les risques d'assimilation qui nous menaçaient et menacent toujours les nouvelles générations.

Grâce à la grande famille de la FRA Tachnagstoutioun à laquelle mes parents étaient attachés, et malgré l'éloignement géographique de nos racines et du « yerguir », mon enfance a été baignée dans la connaissance et l'amour de notre Histoire, et c'est tout naturellement que j'ai adhéré, dès l'adolescence, à l'association FRA Nor Seround. J'y ai appris la notion d'engagement et de lutte pour la défense de la cause arménienne, toutes ces valeurs qui sont les miennes encore aujourd'hui.

Puis, à l'âge adulte, j'ai rejoint les rangs de la Croix Bleue des Arméniens de France (Fransahay Gabouyd Khatch), dont ma mère et mes sœurs étaient déjà membres. Je me suis investie et, plus de 40 ans après, je m'investis encore pour faire vivre cette grande association et contribuer à toutes ses actions locales et nationales. La Croix Bleue m'a permis de me réaliser, en tant que femme arménienne de diaspora, dans l'action volontaire et bénévole, en agissant dans le domaine de l'humanitaire, culturel et social en France.

Au fil des années, j'ai découvert et apprécié l'appartenance du Gabouyd Khatch à la famille du HOM et l'immense travail de cette organisation et de toutes ses filiales dans le monde entier.

Je crois que la grande puissance du HOM, ce sont ses membres qui œuvrent dans chaque pays avec une communauté de pensée et d'action qui les rendent fortes et quasi invincibles, malgré toutes les difficultés de tous ordres. « L'union fait la force » dit-on, et c'est particulièrement vrai pour les HOMouhies qui ne cèdent jamais au découragement car elles savent qu'elles ne sont pas seules à œuvrer pour la réalisation des objectifs du HOM. Des rencontres internationales sont régulièrement organisées pour réunir ces membres et leur insuffler, s'il en est besoin, la force et la détermination nécessaires pour mettre en place localement les actions humanitaires, culturelles et sociales du HOM.

De l'Arménie à l'Uruguay, de la France à l'Australie, de la Suède à l'Égypte, dans l'urgence ou dans la durée, partout où le besoin s'en fait

PAGE SPONSORED BY ARS FRANCE



sentir, le HOM apporte aide et soutien aux populations. Depuis plus d'un siècle, il n'a pas failli à son devoir et à sa devise « Avec le peuple, pour le peuple ». Il s'appuie pour ce faire sur les entités du monde entier qui s'unissent pour répondre à ses sollicitations.

Le HOM est également garant des traditions, de la transmission de la culture et en particulier de la langue arménienne aux jeunes générations par ses différentes actions éducatives (écoles, séminaires, rencontres culturelles). Contre les effets de la dissémination des Arméniens de par le monde, et l'assimilation qui guette chacun d'entre nous, il joue le rôle de lien entre les membres des communautés locales et de la communauté arménienne mondiale.

Ses entités sont composées de femmes et d'hommes de toutes générations, ce qui l'honore mais l'oblige aussi à vivre avec son temps.

Les jeunes générations ont de nouvelles attentes et pour les attirer et les garder en son sein, le HOM doit réfléchir et imaginer de nouvelles perspectives, en tenant compte de l'évolution des mentalités et des technologies. Si les fondamentaux du HOM sont toujours d'actualité, il est impérieux de les moderniser si l'on veut œuvrer encore 125 ans et plus.

Avec toutes ses associations sœurs, le HOM vit des moments de transition dans un monde bouleversé qui met en avant l'individualisme au détriment du collectif.

A nous, ses membres, de lutter pour le rendre plus fort et plus attrayant. Faisons-le avec la foi et la passion qui ont animé nos admirables pionnières qui, sans état d'âme, ont uni leurs forces pour agir dans l'espoir d'un monde meilleur pour les Arméniens du monde entier.

ՊԱՏԻ ՈՒ ՅԱՐԳԱՆՔ ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Պիաթրիս Անանեան

15 Տարի...Այս տարի՝ 2025ին, ՀՕՄը կը նշէ իր 115-ամեակը եւ բազմաթիւ ձեռնարկներ ու սոնակատարութիւններ կազմակերպուած են ի պատիւ այս սրտամօտ կազմակերպութեան տարեդարձին, յատկապէս Հոկտեմբեր ամսուն՝ Հայաստանի մէջ: Աշխարհի բոլոր այն երկիրներուն մէջ, ուր ՀՕՄը ներկայ է, ՀՕՄուհիները պատրաստակամութեամբ պիտի մասնակցին այս սոնակատարութեանց իւրաքանչիւրը իր ձեռով, պատմական այս իրադարձութեան արժանի փայլ հաղորդելու համար:

Ես ալ ստորեւ գրուած իմ վկայութեամբ փորձիկ ներդրումս կը բերեմ այս մեծ գործին մէջ:

1915էն ետք, Հայոց Յեղասպանութեան հետեանքով ծնողքս գաղթեցին Ֆրանսա եւ փորձեցին վերականգնել իրենց կեանքը ու ստեղծել ընտանիք: Ես ծնած եմ Ֆրանսա եւ մինչեւ այսօր ալ կը բնակիմ հոն: Ծնողքս հոն

կազմեցին իրենց ընտանիքը եւ մենք մեծցանք ու ծաղկեցանք այս երկնաշէջային՝ հայֆրանսական միջավայրին մէջ: Անոնք մեզի փոխանցեցին հայ հոգին՝ որ մինչեւ այսօր ալ կը մնայ մեր մէջ, հակառակ այն բոլոր դրժարութիւններուն ու ձուլման վտանգներուն՝ որոնք մեզի կը սպառնային եւ այսօր ալ կը սպառնան նոր սերունդներուն:

Շնորհիւ մեր ընտանիքի Հայ Յեղափոխական Դաշնակցակցութեան անդամակցութեան, եւ հակառակ մեր արմատներէն ու «երկիր»էն հեռու գտնուելուն, մանկութիւնս լեցուն էր մեր պատմութեան մասին գիտելիքներով եւ սէրով: Ուստի ինքնաբերաբար միացայ «ՀՅԴՆոր Սերունդ» միութեան երիտասարդութեան տարիներուս: Հոն սորվեցայ նուիրուիլ եւ պայքարիլ ի պաշտպանութիւն հայ դատին: Այդ արժէքները մինչեւ այսօր ալ իմ էութեանս մաս կը կազմեն:

134 |



PAGE SPONSORED BY ARS FRANCE

Յետոյ, երբ չափահաս էի, միացայ Ֆրանսահայ Կապոյտ Խաչին, ուր մայրս եւ քոյրս արդէն անդամ էին: Նուիրուեցայ այդ գործին, եւ 40 տարիէ ի վեր կը շարունակեմ նուիրեալ մնալ, կեանք տալով այս մեծ միութեան եւ մասնակցելով անոր տեղական եւ ազգային բոլոր նախաձեռնութիւններուն: Կապոյտ Խաչը կարելիութիւն տուաւ, որ դրսեւորուիմ որպէս սփիւռքահայ կին, կամաւորութեամբ եւ բարեսիրական աշխատանքով օժանդակեմ մարդասիրական, մշակութային եւ ընկերային ոլորտներուն Ֆրանսայի մէջ:

Տարիներու ընթացքին, ճանչցայ եւ գնահատեցի Կապոյտ Խաչի կապը ՀՕՄի ընտանիքին հետ եւ նաեւ այն հսկայ աշխատանքը, որ այս կազմակերպութիւնը եւ անոր բոլոր մասնաճիւղերը կը տանին աշխարհով մէկ:

Կը հաւատամ, թէ ՀՕՄի մեծ ուժը անոր անդամներն են, որոնք իրաքանչիւր երկիրի մէջ միեւնոյն գաղափարով եւ գործելաձեւով կ'աշխատին, զայն դարձնելով ուժեղ եւ գրեթէ անյաղթ բոլոր տեսակ դժուարութիւններուն դիմաց: Կ'ըսուի թէ «Միութիւնը ուժ է», եւ այս յատկապէս ճշմարիտ է հօմուհիներուն համար, որոնք երբեք չեն յուսահատիր, քանի որ գիտեն թէ մինակ չեն՝ ՀՕՄի նպատակներուն իրագործման ճամբուն վրայ: Միջազգային համաժողովներ յաճախ կը կազմակերպուին ՀՕՄի անդամները միատեղելու եւ իրենց անհրաժեշտ ուժն ու վճռակամութիւնը փոխանցելու տեղական մարդասիրական, մշակութային եւ ընկերային գործունէութիւնները ի կատար իրագործելու:

Հայաստանէն մինչեւ Ուրուկուէյ, Ֆրանսայէն մինչեւ Աւստրալիա, Շուէտէն մինչեւ Եգիպտոս, ուր որ պէտքը զգացուի՝ ՀՕՄը անյապաղ կը բերէ իր օգնութիւնն ու աշակցութիւնը: Մէկ դարէ ի վեր, ՀՕՄը երբեք չէ սխալած իր պարտականութեան եւ նշանաբանին մէջ՝ «Ժողովուրդիս հետ, ժողովուրդիս համար»: Այս բոլորը կրցած է իրականացնել՝ ապաւինելով աշխարհով մէկ իր միատրոններուն, որոնք

միասնական ուժով կը պատասխանեն անոր կոչերուն:

ՀՕՄը նաեւ երաշխաւորն է մեր աւանդութիւններուն, մշակոյթի փոխանցման, եւ մասնաւորաբար՝ հայ լեզուին, զորս այն կը փոխանցէ երիտասարդ սերունդներուն իր կրթական բազմազան նախաձեռնութիւններով (դպրոցներ, սեմինարներ, մշակութային հանդիպումներ): Հայութիւնը ցիրուցան ըլլալու եւ ձուլուելու սպառնալիքներուն դէմ ՀՕՄը այն կապն է, որ կը միացնէ տեղական համայնքներու անդամները համահայկական համայնքին:

Անոր կառոյցները բաղկացած են բոլոր սերունդի պատկանող կիներէ եւ այրերէ, ինչ որ մեծ պատիւ մըն է, բայց միեւնոյն ժամանակ պարտաւորեցնող: Երիտասարդ սերունդները նոր սպասելիքներ ունին, եւ զանոնք ներգրաւելու եւ պահելու համար, ՀՕՄը պէտք է մտածէ նոր հեռանկարներ, նկատի առնելով անոնց մտածելակերպն ու արհեստագիտութիւններու զարգացումը: ՀՕՄի հիմնական արժէքները միշտ արդիական են, բայց հարկաւոր է զանոնք արդիականացնել, եթէ կ'ուզենք շարունակել գործել մինչեւ 125 տարի եւ աւելի:

Իր բոլոր քոյր միութիւններով միասին, ՀՕՄը այժմ կ'ապրի անցումային պահեր աշխարհի մը մէջ, ուր անհատապաշտութիւնը աւելի առաջնահերթ է քան հաւաքականութիւնը:

Մենք՝ ՀՕՄի անդամներս, պարտինք պայքարիլ զայն աւելի ուժեղ եւ աւելի գրաւիչ դարձնելու համար: Պէտք է այս ընենք նոյն այն հաւատքով եւ կրքոտ նուիրումով, որոնք ներշնչած էին մեր հիասքանչ նախկին հօմուհիները, որոնք առանց տատանուելու, միացուցին իրենց ուժերը գործելու համար ի սէր աւելի լաւ ապագայի մը աշխարհի հայութեան համար:

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԵԿՈՒՄԻ ՄԱՍՆԱԾԻՂԵՐ



ARS CHAPTERS-AT-LARGE

ՀՕՄ ԱՐԶԱԽԻ ՄԵԿՈՒՄԻ ՄԱՍՆԱԾԻՂ



| 137

Պատմական ակնարկ

Կառավարիմ «Ժողովրդիս հետ, ժողովրդիս համար» կարգախօսին՝ Հայ Օգնության Միությունը Արցախ մուտք գործեց արցախեան ազգային ազատագրական շարժման հետ միասին:

ՀՕՄի սկզբնական գործունէութիւնն արտայայտուում էր մարդասիրական օգնութեան ձեւով, հագուստեղէն, սննդամթերք: Այդ օրերին անհրաժեշտութիւն յառաջացաւ Արցախում ստեղծել մի կառոյց, որը պէտք է համակարգէր եւ ճիշդ բաշխէր ստացուած օգնութիւնը, ինչպէս նաեւ ժողովրդին ցոյց տար բարոյական աջակցութիւն:

Այդ նպատակով 1992 թուականին Արցախում ստեղծուեց Արցախի Օգնութեան Միու-

թիւնը՝ ԱՕՄը, համախմբելով կամաւոր հայ կանանց:

1993 թուականին ԱՕՄը լուծարուեց եւ այդ հիմքի վրայ 1993-1994 թուականներին ստեղծուեց «Հայ Կին» միութիւնը, իսկ 1998 թուականին «Հայ կին» միութեան հիմքի վրայ ստեղծուեց ՀՕՄի Արցախի մեկուսի մասնաճիւղը:

2001 թուականի մարտի 10ին ՀՕՄի Արցախի մեկուսի մասնաճիւղը գրանցուեց ԼՂՀ արդարադատութեան պետական գրանցման վարչութիւնում՝ որպէս հասարակական կազմակերպութիւն:

2013 թուականի հոկտեմբերի 17ին «ՀՕՄի Արցախի մեկուսի մասնաճիւղ» հասարակական կազմակերպութեան հիմնադիր փաստաթղթերը գործող օրէնսդրութեանը համապատասխանեցնելու նպատակով, այն վերան-



ուանուեց «Հայ Օգնութեան Միութեան Արցախի Միաւոր» հասարակական կազմակերպութիւն: Հաստատուեց կազմակերպութեան կանոնադրութիւնը՝ նոր խմբագրութեամբ:

Ծրագրեր եւ գործունէութիւն

ՀՕՄի Կեդրոնական վարչութիւնն Արցախում սկսեց իրականացնել իր ազգանպաստ ծրագրերը:

1998 թուականին Ստեփանակերտում բացուեց ՀՕՄի առաջին «Սօսէ» մանկապարտէզը, որի կարեւոր առաքելութիւնը եղաւ սատարել զոհուած ազատամարտիկների ընտանիքներին:

Հետագայ տարիներին եւս 12 մանկապարտէզներ բացուեցին Արցախի վերաբնակեցուած ու սահմանամերձ գիւղերում:

2009 թուականին մանկապարտէզներից 4ը դադարեցին լինել ՀՕՄի կազմում եւ շարունակեցին գործել Արցախի Հանրապետութեան կառավարութեան հովանու ներքոյ: Ցա-

ւով պէտք է նշել, որ 2020 թուականին Արցախի դէմ սանձազերծուած 44 օրեայ պատերազմի հետեւանքով Արցախում գործող ՀՕՄի 8 «Սօսէ» մանկապարտէզներից 4ը յայտնուեց թշնամու կողմից գրաւուած տարածքներում: Մինչեւ 2023 թուականի Արցախի բռնի տեղահանումը ՀՕՄի 4 «Սօսէ» մանկապարտէզներ էին գործում Ստեփանակերտում, Աշանում, Խնձրիստանում եւ Ակնաբերդում:

Կեդրոնական վարչութեան ծրագրերի մասնակցութիւն

ՀՕՄի Արցախի միաւորը 30 տարիների ընթացքում իրականացրել է բազմաթիւ ծրագրեր, որոնց մէջ առանձնապատուկ տեղ ունին ՀՕՄի Կեդրոնական վարչութեան «Սօսէ» մանկապարտէզներ, «Զոհուած հերոսների զաւակներ», «ՀՕՄի կրթաթոշակ», «Լաւագոյն ուսանող», «Ամանոր», «Արեւային Արցախ» ծրագրերը, ինչպէս նաեւ Արցախի Միաւորի մնայուն ծրագրերը՝ «Այցելութիւն դիրքապահ զինուորին», «Ապահով մանկութիւն սահմանամերձ գիւղերում», «Պատանեկան ճամբարներ»:

Արցախի բռնի տեղահանումից յետոյ Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական վարչութեան որոշմամբ Արցախի Մեկուսի միաւորը՝ շուրջ հարիւր անդամներով, որպէս Արցախի մասնաճիւղ, իր գործունէութիւնն է շարունակում Հայաստանում՝ ՀՕՄի Հայաստանի Շրջանային վարչութեան հովանու ներքոյ:



Armenian Relief Society

Armenian Relief Society Artsakh Chapter

Artsakh Chapter

Staying faithful to the motto “With the people, for the People”, the ARS blossomed during the Artsakh liberation movement.

In the beginning, the scope of ARS Artsakh activities included humanitarian assistance such as clothing, food and medical supplies.

In 1992 the Artsakh Relief Society was created, bringing a group of Armenian women to volunteerism. During 1993-94, the Artsakh Relief Society was dissolved, and “Hye Gin” was established based on the same principles. In 1998 the Hye Gin organization gave way to the Armenian Relief Society Artsakh Chapter-at-Large.

In March 2001, the ARS was registered with Mountainous Karabakh Republic Justice Department as a public charitable organization. In October 2013, in order for the ARS Artsakh Chapter-at-Large to conform as an established public charitable organization, it was renamed as ARS Artsakh Chapter, and its bylaws were established.

In 1988, the ARS CEB established the “Soseh” kindergarten program to provide a safe and nurturing environment to children of fallen heroes. During the following years, starting with Stepanakert, 12

additional kindergartens were established in border villages with enrollment of over 400 children.

In 2009, 4 kindergartens were transferred to the Republic of Artsakh public school system. During the 44-day war, 4 out of the 8 ARS kindergartens ended up in the newly occupied regions. Until the forced mass exodus of Armenians from Artsakh in late 2023, the four functioning “Soseh” kindergartens were Stepanakert, Ashan, Khentserisdan and Agnapert. Sadly, all kindergartens are now in occupied territories.

The ARS Artsakh Chapter has implemented numerous ARS CEB projects during the last 30 years including “Sponsorship of Children of Fallen Heroes”, Scholarships, “Best Student”, “Amanor”, “Safe Kids in Border Villages”, and youth summer camps.

After the forced displacement of Armenians from Artsakh in 2023, following the 73rd ARS International Convention in Yerevan, Armenia, the then ARS Artsakh chapter-at-large participated for the last time with its own delegate. Today with its 100-members, it continues to function as a chapter within the Armenia Region.

139



ՀՕՄ ՓԵՐՄԱՆԻՈՅ ՄԵԿՈՒՄԻ

Պատմական ակնարկ

9 Մայիս, 1998ին Շուշիի ազատագրության 6րդ տարեդարձին օրը, Գերմանիոյ Մայնց քաղաքին մէջ տեղի ունեցաւ Հայ Օգնութեան Միութեան Գերմանիոյ մասնաճիւղին նոր շրջանի հիմնադիր ժողովը, ներկայութեամբ ՀՕՄի Կեդրոնական Վարչութեան ատենապետուհիին՝ հանգուցեալ ընկերուհի Վանուհի Իսաջանեանին: Տեղոյն վրայ ընտրուեցաւ վարչական կազմը ընկերուհի տոքթ. Մարգարիտ Ասոյեանի-Լինքի ղեկավարութեամբ:

Յարաբերական

Գերմանիոյ ՀՕՄի Մասնաճիւղը 22 Յունիս, 1999ին պաշտօնապէս ընդունուեցաւ կառավարութեան կողմէ՝ իբրեւ մարդասիրական հանրօգուտ միութիւն:

Վարչական - Կազմակերպչական

Սկզբնական տարիներէն ետք ընկերուհի Մարգարիտ Ասոյեան-Լինքի ատենապետութեան պաշտօնը ստանձնեց ընկերուհի Անի-Անայիս Պըլտեան-Ֆայլը եւ շարունակեց վարել զայն մինչեւ իր վաղաժամ մահը 21 Մարտ, 2019ին:

7 Մարտ 2020ին մասնաճիւղի ընդհանուր ժողովին ատենապետուհի ընտրուեցաւ ընկերուհի Լիլիթ Նազարեանը: Միութեան հիմնադիր անդամներէն դժբախտաբար մահացած են Տէր եւ Տիկին Դաւիթեաններ եւ Տէր եւ Տիկին Շողիկեանները:

Առաջի օրէն միութեան միշտ նեցուկ կանգնած են տոքթ. Շաւարշ Յովասափեան իր

տիկնոջ հետ, ընկեր տոքթ. Նազարէթ Աղէկեանը եւ ընկերուհի Մարսեհ Մինասը:

Ծրագիրներ եւ Կեդրոնական վարչութեան ծրագիրներու մասնակցութիւն

Գերմանիոյ ՀՕՄի մասնաճիւղը իրականացուցած է բոլոր այն ծրագիրները, որոնք որոշուած են ՀՕՄի Կեդրոնական Վարչութեան կողմէ, ինչպիսին են՝ 1999էն սկսեալ որբերու խնամակալութիւն, աջակցութիւն «Սօսէ» մանկապարտէզի եւ Սօր ու Մանկան կեդրոն: Մասնաճիւղը նաեւ յաջողութեամբ շրջանին մէջ կազմակերպած է հայերէն լեզուի դասաւանդութիւն: Ներկայիս ունինք նահատակուած զինուորի երկու սաներ:

Հակառակ անդամներու թիւի սակաւութեան՝ այժմ 16 անդամ, միութիւնը կը շարունակէ իր բարեսիրական անխոնջ գործունէութիւնը:



Armenian Relief Society

Armenian Relief Society Germany Chapter-at-Large

Germany Chapter-at-Large

ARS Germany Chapter-at-Large was established in the City of Mainz, Germany, on May 9, 1998, on the 6th anniversary of the liberation of the City of Shoushi. The CEB Chairperson Vanouhi Isajanian was present for the inauguration of the new chapter.

The chapter executive was first headed by Dr. Margaret Asoyan-Link, then Ani-Anayis Beledian-Fial (until 2019), followed by Lilit Nazarian. The Tavitians, the Shoghigians, Hovasapians, Aghegians and Minas' were the founding and supporting members.

The chapter was officially registered as a charitable organization on June 22, 1999.

The chapter holds Armenian language classes, and has supported CEB programs including "Sponsor a Child", Sosse Kindergartens, and Mother and Child Health and Birthing Center.

Despite the chapter being relatively small with only 16 members, it continues to be inspired by the ARS mission, plans community events and participates in CEB programs.



ՀՕՄ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԵԿՈՒՄԻ

Պատմական ակնարկ

Երուսաղեմի ՀՕՄը հիմնուած է 1932ին:

Ներկայիս մասնաճիւղը ունի 55 անդամուհի: Անցեալ տարեշրջանին 10 նոր անդամներ միացան մեկուսիին՝ նպաստելով նոր սերունդի մասնակցութեան եւ ՀՕՄի առաքելութիւնը գործադրելու կարողականութեան:

Ծրագիրներ եւ գործունէութիւն

ՀՕՄի Երուսաղեմի մեկուսին կ'իրագործէ հետեւեալ ծրագիրները.-

Հովանաւորել աշակերտներ՝ անոնց կրթաթոշակը հոգալով: Այլ աշխատանք մըն է տարեկան ճաշկերոյթի մը կազմակերպումը՝ ի պատիւ Ս. Թարգմանչաց վարժարանէն, տեղական երկրորդական վարժարաններէն եւ համալսարաններէ աւարտական հայ աշակերտներուն եւ ուսանողներուն: Այցելութիւններ՝ տարեցներու, անոնց բնակարաններուն կամ ծերանոցներու մէջ, տրամադրելով անհրաժեշտ օգնութիւններ եւ սննդամթերքի ծրարներ: ՀՄԸՄի բանակումներու ընթացքին սկաուտներու ճաշերը պատրաստել եւ նիւթապէս օժանդակել ՀՄԸՄին:

Ապրիլ 24ին այլ միութիւններու հետ համատեղ կազմակերպել Հայոց Ցեղասպանութեան յիշատակի միջոցառումներ: Բաշխել Կաղանդի նուէրներ՝ կարիքաւոր փոքրիկներուն: Հոգեհանգստեան արարողութիւն՝ հանգուցեալ ՀՕՄականներու յիշատակին: Կազմակերպել ամսական հաւաքներ, որոնք կ'ընդգրկեն նախաճաշ կամ ընթրիք, խաղեր կամ վիճակահանութիւն: Անդամներուն կը կարդացուին Կեդրոնական վարչութենէն ստացուած շրջա-



բերականներ: Հանդիպումներու կը հրաւիրուին մասնագէտներ դասախօսութիւններ տալու բժշկական, ընկերային, կրօնական եւ այլ նիւթերու շուրջ: Կազմակերպել տարեկան ձեռնարկներ, ինչպէս՝ Բարեկենդանի խրախճանք, Միջինք՝ Մեծ Պահքի համեղ ճաշերով, Համբարձման եւ Մայրերու օրուան տօնակատարութիւն:

Իսկ մեկուսիին մեծագոյն ձեռնարկը տարեկան Ս. Ծննդեան պազար-տօնավաճառն է: Անիկա նաեւ կը հրաւիրուի եւ կը մասնակցի տեղական պազարներուն:

Վերջին 8 տարիներուն ընթացքին ՀՕՄի Երուսաղեմի մեկուսին իր մասնակցութիւնը բերաւ Լիբանանի, Սուրիոյ եւ Արցախի մեր հայրենակիցներուն օժանդակութեան, երբ անոնք դիմագրաւեցին բնական աղէտներ եւ պատերազմ: Եղեռնի Միացեալ յանձնախումբերուն հետ գործակցաբար՝ Երուսաղեմի համայնքէն հանգանակեց մօտ 150,000 տոլար օգնութիւն Լիբանանի, Սուրիոյ եւ առաւելաբար Արցախին համար:

Մասնաճիւղի անդամները հպարտ են, որ մեկուսին կըրցած է յարատեւել այսքան տարի եւ կը ձգտի շարունակել ՀՕՄի առաքելութիւնը, ներգրաւելով նոր սերունդը:

142 |

Armenian Relief Society of *Armenian Relief Society Jerusalem Chapter-at-Large* Jerusalem Chapter-at-Large

The ARS Jerusalem Chapter-at-Large was established in 1932. The chapter has 55 members, including 10 new younger members, who joined in 2023. This accomplishment emphasizes the ARS mission and passing of the torch.

Chapter activities include the following:

Annually providing tuition assistance to Armenian students along with organizing a dinner celebration for all Armenian graduates from the Tarkmanchats Armenian High School, and private schools and universities.



Regularly visiting the elderly in hospices or homes and providing them with food parcels and other assistance.

Supporting the Homenetmen Camping Committee during their annual summer camp for scouts.

Participating in local Christmas Bazaars with food, arts and crafts booths.

Organizing the Armenian Genocide commemorations with other community associations on April 24th.

Distributing Christmas gifts for needy children and sponsoring Requiem Services for deceased members.

The chapter also holds annual events such as Mother's Day, Eve of Great Lent (Paregentan) carnival, Mid Lent, and Ascension (Hampartsum) luncheons.

Monthly meetings are organized with games and lunches, as well as the inclusion of special guest lecturers, who are invited to enlighten members on topics such as health, social challenges and religion.

The chapter is proud of its leadership in the community, as well as global contributions, and has the will to remain steadfast by ensuring that the younger generation's participation is ensured for the future.



ՀՕՄ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ՄԵԿՈՒՄԻ

Պատմական ակնարկ

Զուիցերիոյ Հայ Օգնութեան Միութիւնը հիմնուած է 2006 թուականին Էվիլարտ քաղաքին մէջ, ընկերուհի Արմիկ Երումեանի կողմէ: Մասնաճիւղը կը գործէ Զուիցերիոյ թէ՛ գերմանախօս եւ թէ՛ ֆրանսախօս բաժիններուն մէջ:

Յարաբերական

Մասնաճիւղը ՀՕՄը կը ներկայացնէ իբրեւ ՄԱԿի ECOSOCի (United Nations Economic and Social Council) անդամ Ժընեւի մէջ: Յաջողութեամբ երեք համագումարներ կազմակերպած է «Ժընեւի Խաղաղութեան Շաբաթ»ուան ընթացքին, յառաջ տանելով երկխօսութիւն եւ մարդասիրական նպատակներ:

Վարչական կազմակերպչական

Ներկայիս Զուիցերիոյ ՀՕՄի մասնաճիւղը ունի մօտ 50 գործունէայ անդամներ, եւ նոյնքան ալ օժանդակներ:

Ծրագիրներ եւ գործունէութիւն

Մասնաճիւղը կը սատարէ հայ մշակոյթի տարածման եւ պահպանման՝ մշակութային եւ ընկերային ձեռնարկներով: Հիմնադրութենէն ի վեր, լծուած է պահպանելու հայ մշակոյթը, օգնելով տեղւոյն հայ գաղութին եւ համաշխարհային ՀՕՄի աշխատանքներուն: Զուիցերիոյ մասնաճիւղը կը տօնախմբէ ՀՕՄի Օրը, կը կազմակերպէ Սուրբ Ծննդեան յատուկ երեկոյ մը՝ մանուկներու համար: Մասնաճիւղը ամէն տարի կ'ոգեկոչէ Հայոց Ցեղասպանութեան յիշատակը թէ՛ Ժընեւի հայկական եկեղեցոյ մէջ եւ թէ՛ զանազան ձեռնարկներով՝ Զուիցերիոյ տարածքին:

144



Կեդրոնական վարչութեան ծրագիրներու մասնակցութիւն

Ժողովները կը գումարուին Զուիցերիոյ տարբեր շրջաններու մէջ, ուր կը կատարուին հանգանակութիւններ, որոնք կը տրամադրուին ՀՕՄի համաշխարհային տարբեր ծրագիրներու, ինչպէս Հայաստան, Լիբանան եւ Սուրիա:



Armenian Relief Society of *Armenian Relief Society Switzerland Chapter-at-large* Switzerland chapter-at-large

The ARS Switzerland chapter-at-large was founded in 2006 in Evilard, Bern, Switzerland headed by Armik Yeromian. Operating in both German-speaking and French-speaking Switzerland, ARS Switzerland promotes Armenian culture in the Swiss Armenian community through cultural and social activities.

The chapter has 50 active members and many supporting community members.

Since its inception, it has been committed to preserving Armenian heritage, supporting the Armenian diaspora in Switzerland, and contributing to the global efforts of the ARS. The Swiss Chapter celebrates “ARS Day” and dedicates an afternoon to children during the Christmas

holidays. Annually, the chapter commemorates the anniversary of the Armenian Genocide, both at the Armenian Church in Geneva and through activities in local communities.

The meetings and activities are held in different parts of Switzerland for raisings funds for ARS programs, particularly in Armenia, Lebanon and Syria.

ARS in Switzerland represents ARS, as a member of the United Nations Economic and Social Council (ECOSOC), at the United Nations in Geneva. It has organized three successful conferences during the “Geneva Peace Week” in Geneva, fostering dialogue and promoting humanitarian causes in support of the Armenian cause.



ՀՕՍ ԿԻՊՐՈՍԻ «ՍՕՍԷ» ՄԵԿՈՒՄԻ



146 |

Պատմական ակնարկ

Հայ Օգնության Միության Կիպրոսի «Սոսէ» մասնաճիւղը հիմնադրուած է 1988ին: Վերջին տասնհինգ տարիներուն մասնաճիւղը շարունակած է իր մարդասիրական եւ հասարակական աշխատանքները համագաղութային եւ համահայկական մակարդակներու վրայ: Մասնաճիւղին զխաւոր նպատակը միշտ եղած է տարբեր ձեռնարկներու միջոցով նիւթական հասոյթ ապահովել՝ աջակցելու Կեղրոնական վարչութեան բոլոր ծրագիրներուն:

Վարչական կազմակերպչական

Այժմ մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւը 95 է:

Յարաբերական

Միութիւնը սերտ յարաբերութիւններ ունեցած է ակումբին մէջ գործող միութիւններուն եւ կազմակերպութիւններուն, ինչպէս նաեւ Կիպրոսի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանին եւ կաթողիկոսական փոխանորդին հետ եւ միշտ աջակցած է անոնց աշխատանքներուն: Մասնաճիւղը միշտ իր մասնակցութիւնը բերած է Կիպրոսի Հայ Դատի յանձնախումբին կազմակերպած ցոյցերուն:

Մասնաճիւղը մեծ ուշադրութիւն դարձուցած է նաեւ յոյն տեղական կազմակերպութիւններու հետ գործակցութեան եւ Կիպրոսի հասարակական կեանքին մէջ իր գործունէութեան, յատկապէս իր մասնակցութիւնը բերելով Կանանց Միջազգային օրուան առիթով կազմակերպուած ձեռնարկներուն եւ Կիպրոսի կիներու միութիւններու գործունէութիւններուն:



Ծրագիրներ եւ գործունէութիւն

Քովիտ համաճարակի դժուար օրերուն մասնաճիւղը օժանդակած է կիպրահայ կարիքաւոր ընտանիքներուն՝ սննդեղէն տրամադրելով:

Ուսումն ու կրթութիւնը կարելոր համարելով, մասնաճիւղը կրթանպաստ յատկացուցած է կիպրահայ ուսանողներուն իրենց համալսարանական ուսումը շարունակելու Կիպրոսի եւ այլ երկիրներու մէջ:

Մասնաճիւղը քաջալերած է նաեւ հայոց լեզուի զարգացումը՝ մրցանակ տրամադրելով Կիպրահայ Նարեկ վարժարաններու շրջանաւարտներէն հայոց լեզուի մէջ լաւագոյն միջին ապահովող աշակերտներուն:

Մասնաճիւղը օգնութիւն տրամադրած է տարբեր աղէտներէ տուժած հայորդիներու, յատկապէս Ճափոնի, Սուրիոյ եւ Լիբանանի մէջ: Մասնաճիւղը առաջին արձագանգողն ու օժանդակողը եղաւ Սուրիոյ մէջ պատա-

հած աղէտալի երկրաշարժին, շնորհիւ Սուրիոյ մէջ Կիպրոսի դեսպանին հետ միութեան ունեցած սերտ կապերուն:

Կեդրոնական վարչութեան ծրագիրներու մասնակցութիւն

Տեղական աշխատանքներու կողքին, մասնաճիւղը ներդրում ունեցած է համահայկական մարդասիրական նախաձեռնութիւններուն եւ նիւթապէս օժանդակած է Արցախի եւ Պուկարիոյ ՀՕՄի «Սօսէ» մանկապարտէզներուն, «Զոհուած Հերոսներու Զաւակներ»-ուն, «Մօր ու Մանկան» կեդրոնին եւ «Զինուորի Տուն» ծրագիրին:

Այս տարուան ծրագիրներէն է Հայ Օգնութեան Միութեան 115-ամեակի նշումը, ինչպէս նաեւ Մայիս 2025ին Կիպրոսի մէջ Երոպա-Միջին Արեւելք-Հայաստան ցամաքամասային խորհրդաժողովի կազմակերպումը:

Armenian Relief Society

Armenian Relief Society Cyprus "Gosse" Chapter-at-Large

Cyprus "Sosse" Chapter-at-Large

The ARS Sosse Chapter of Cyprus was established in 1988. During the last 15 years, the chapter has continued its humanitarian and charitable activities on the island. The main purpose of the chapter has been to provide financial support for local community needs, as well as ARS Central Executive Board (CEB) programs. Currently, the Sosse Chapter has 95 members.

Interorganizational: The chapter has good working relationships with sister organizations within the Cyprus community, including the Prelacy and the representative of the Catholicosate of the See of Cilicia.

The chapter pays special attention to the Greek non-governmental organizations working in Cyprus, especially by participating in local International Women's Day events.

Activities: The Sosse Chapter played a vital role in supporting families during the COVID 19 pandemic.

The chapter actively promotes higher education by providing scholarships to university students continuing their education in Cyprus or abroad, and also promotes the Armenian culture by rewarding students who excel in Armenian language at the Nareg Schools.

During global disaster and war relief efforts in Japan, Syria and Lebanon, the chapter participated in providing much needed aid.

CEB Programs: The chapter has contributed to the Artsakh and Bulgaria "Soseh" Kindergartens, the Akhourian Mother and Child Health and Birthing Center, and other Armenia-Artsakh programs.

The Sosse Chapter hosted the CEB ARS Inter-Regional Seminar for Europe and the Middle East during May 2025 commemorating the ARS 115th Anniversary.



PAGE SPONSORED BY ARS CYPRUS



ՀԱՅ ԿԱՐԻՔԻ ԽԱՉ-ԳԱՀԻՐԷ (ԵԳԻՊՏՈՍ)

Պատմական ակնարկ

Գահիրեի Հայ Կարիքի Խաչը հիմնուած է 1 Մարտ, 1930ին՝ կորիզ ունենալով Եգիպտոսի մէջ աւելի քան տասնամեակ մը գործած Գահիրեի Հայուհեաց Միութեան գործօն անդամները:

Հայ Կարիքի Խաչը (նախապէս Հայ Կարմիր Խաչ) իր առաքելութիւնը հիմնած է «Ազգէս ծնաւ ազգիս համար» կամ «Ժողովուրդէս Ժողովուրդիս Համար» բնաբանին վրայ:

Հայ Կ. Խաչը վաւերացուած է Տեղական Ընկերային Գործոց Նախարարութեան կողմէ՝ իբրեւ օգնութեան եւ բարեգործութեան կազմակերպութիւն:

Ծրագիրներ եւ գործունէութիւն

Իր կազմութեան առաջին տարիէն Հայ Կ. Խաչի գործունէութեան նպատակը եղած է

դաստիարակչական հաւաքներով, ընկերային, մշակութային եւ առողջապահական գիտելիքները վառ պահել հայ կանանց մօտ: Երիտասարդ կանանց ապրուստի միջոց ապահովելու համար հաստատած է «կար ու ձեւի» դպրոցներ: Տկարակազմ մանուկներուն սնունդ ապահոված է «Պուտ մը Կաթ»ի ֆոնտը հիմնելով: Աղէտներու ժամանակ աղէտեալ շրջաններուն դէղորայք, սնունդ եւ զգեստապահոված է, նիւթական օժանդակութեան կողքին:

Աղէքսանդրիոյ մասնաճիւղին հետ գործակցելով՝ հիմնած է ծովափնեայ կացարան մը «Կազդուրման Կայան»ը, ուր ամէն տարի հերթով կարօտեալ պատանիներ ամառնային օղափոխութեան կը մեկնին:

Ներկայիս, Հայ Կ. Խաչը կը շարունակէ իր նախնիներուն ազգօգուտ գործը: Գաղութէն ներս, բոլոր հայուհիներուն համար կը կազմակերպէ դաստիարակչական դասախօսութիւններ: Գործակցելով Եգիպտական Կար-

միր Մահիկ կազմակերպութեան հետ, հնուս դասախօսներ կը հրաւիրէ առողջապահական գիտելիքներ փոխանցելու համար: Հայկական ճաշերն ու ձեռարուեստը կը ներկայացնէ ցուցադրական դասախօսութիւններու ձեով, անոնց փոխանցելով նաեւ հայկական բարքերն ու սովորութիւնները: Արշաներ կը կազմակերպէ դէպի թանգարաններ ու տեսարժան վայրեր, պատմական գիտելիքները զարգացնելու համար: Պարմանուհիներուն համար ձեռային աշխատանքի ու հայկական ձեռագործի հաւաքներու ընդմէջէն մեր մշակութային արժէքները կը փոխանցէ: Պատանհիներուն, 5-15 տարեկան տղոց եւ աղջկանց համար ճատրակի դասեր կը կազմակերպէ քայլ պահելու համար հայրենիքի իրենց հասակակիցներուն հետ:



Վերոնական վարչութեան ծրագիրներու մասնակցութիւն

150 |

Վերջին տարիներուն, Հայ Կ. Խաչը սաստար կը հանդիսանայ նաեւ հայրենիքին, անոր քաջարի զոհուած մարտիկներուն ընտանիքներուն եւ անոնց ուսումնաստեճ զաւակներուն

նիւթական օժանդակութեամբ՝ ՀՕՄի ծրագիրներու միջոցով:

Հայ Կ. Խաչը կը շարունակէ գործել «Ժողովուրդիս հետ, Ժողովուրդիս համար» իր նշանաբանով բարոյական եւ նիւթական աջակցութիւն բերելով բոլոր դիմողներուն, անխտիր:



PAGE SPONSORED BY RAFI AND ANNIE KECHICHIAN

Armenian Relief Society

Armenian Relief Society Chapter-at-Large Egypt

Chapter-at-Large Egypt



| 151

The ARS Egypt Chapter was established in 1930 in the City of Cairo as “Cairo Armenian Women’s Society”. It was ratified by the Egyptian Administration for Social Welfare as a charitable and relief organization.

Programs

The chapter aims to educate and inform its members regarding educational, health, social and cultural topics. In the past, the chapter established workshops to teach younger members the essential techniques to sewing and needlework, ensuring them a means to make a living.

The chapter has provided a food program (“Bood meh gat” AKA milk fund) for undernourished children. Following natural disasters, the chapter has provided medicine, nutrition, clothing and financial assistance.

In cooperation with the then Alexandria chapter,

a coastal youth camp for needy children was established for annual summer recreation.

The ARS Egypt Chapter works in conjunction with the local Red Cross to hold educational events related to health, women’s issues, Armenian cuisine, needlework and culture. The chapter organizes excursions to museums and historic locations. The chapter also organizes chess lessons for 5 to 15-year-olds, providing them the opportunity to compete with their counterparts in Armenia.

CEB Programs

The chapter provides financial aid through the CEB programs to children of fallen heroes, providing opportunities to pursue their education.

The chapter also strives to provide humanitarian assistance to all those who seek help, fulfilling the ARS global slogan, “With the People, For the People”.

ՀՕՍ ՀՈԼԱՆԾԱՅԻ «ՇՈՒՇԻ» ՄԵԿՈՒՄԻ

Պատմական ակնարկ



ՀՕՄԻ Հոլանտայի Շուշի մեկուսի մասնաճիղը հիմնադրուեց 29 Յունիս, 2018ին: 2020 տարուան ընթացքին կատարուեցաւ ՀՕՄԻ կանոնագիրը մասնաճիղի պատշաճեցնելու աշխատանքով: Կազմուեցաւ յատուկ կանոնագիր Հոլանտայի ՀՕՄԻ մեկուսի մասնաճիղի համար եւ անիկա հաստատուեցաւ մասնաճիղի անդամներուն, ինչպէս նաեւ Կեդրոնական վարչութեան կողմէ:

2021ի սկիզբը մասնաճիղին համար անդամները քուէարկութեան միջոցով ընտրեցին «Շուշի» անունը:

9 մարտ, 2022ին, միութիւնը գրանցուեցաւ Հոլանտայի ձեռնարկութիւններու մատեանին մէջ՝ Armeense Stichting voor Hulpverlening անունով:

Վարչական կազմակերպչական

Մասնաճիղը ունի 29 անդամներ:

Միութիւնը նոր հաստատուած ըլլալուն պատճառով, իր աշխատանքը տակաւին քարոզչական սահմանի մէջ է եւ կը փորձէ Հոլանտայի տարբեր քաղաքներու մէջ ընդարձակել իր գործունէութիւնը աւելի մօտէն ծանօթացնելու համար ՀՕՄը հոլանտահայութեան:

Յարաբերական

Մասնաճիղը սերտ կապեր հաստատած է այլ կազմակերպութիւններու հետ, որոնցմէ կրնանք յիշել՝ ՀՅԴ Արամ Մանուկեան Կոմիտէ, Հայ Առաքելական եկեղեցի (Ալմելոյի Ս.Գ. Լուսորիչ եկեղեցոյ խորհուրդ եւ Ասսըն քաղաքի մէջ գտնուող հայկական եկեղեցոյ խորհուրդ), Արնեհեմ քաղաքի կանանց միութիւն եւ ՀՄԸՄ Ալմելո:

Ծրագիրներ եւ գործունէութիւն

Մասնաճիղս կազմակերպեց զանազան միջոցառումներ, ինչպէս՝ Տօնավաճառ, Թէյասեղան Կանանց Միջազգային օր-

152 |



PAGE SPONSORED BY ARS NETHERLANDS

ուան առթիւ, Կանանց երեկոյթ Մայրերու օրուան առթիւ, Ընտանեկան նախաճաշ, դասախօսութիւններ:

Տեղի ունեցան դրամահաւարներ եւ աշխատանքներ՝ յատկապէս Արցախեան քառասուն չորսօրեայ պատերազմին պատճառով, անհրաժեշտ պարագաներու գնումներ կատարելու նպատակով, ամանորեայ նուէրներ արցախցի մանուկներուն, Թիկունք կանգնիք Արցախին ծրագրի համար, ինչպէս նաեւ՝ Արցախեան պատերազմէն եւ արցախահայութեան բռնագաղթէն ետք արցախցի ընտանիքներուն օգնելու նպատակով:

Սուրիոյ երկրաշարժէն տուժած մեր հայրենակիցներուն:

Նուիրատուութիւն կատարեցինք՝ Մայր Աթոռի վերանորոգման համար:

Շրջանը հայկական դպրոց չունի: Միութիւնս ծրագրած է կազմակերպել հայերէն լեզուի դասընթացք մը՝ 14 տարեկանէն եւ վեր պատանիներու եւ անձերու համար: Դասընթացքը պիտի ըլլայ արեւմտահայերէնով:



Կեդրոնական վարչութեան ծրագիրներու մասնակցութիւն

Մասնաճիւղս մասնակցեցաւ Կեդրոնական Վարչութեան կողմէ կազմակերպուած ՀՕՄԻ 110ամեակին նուիրուած առցանց տօնակատարութեան, յայտնելով իր շնորհաւորական խօսքը եւ պատգամը:

Մասնաճիւղս յաջողեցաւ «Որբախնամ Ծրագիր»-ին 10 որբերու խնամակալ գտնել, ինչպէս նաեւ կը շարունակէ իր աշխատանքը այս ծրագրին համար:

Մասնաճիւղս իր ներդրումը ունեցաւ ՀՕՄԻ Կեդրոնական վարչութեան հետեւեալ համահայկական ծրագիրներուն՝

- Համահայկական հիմնադրամ
- Նոր տարուան նուէրներ
- Սօսէ Մայրիկ մանկապարտէզներու ծրագրին
- Համաշխարհային շտապ օժանդակութիւն քորոնա ժահրի օրերուն
- Օգնութիւն լիբանանահայութեան քորոնա ժահրի եւ Պէյրութի նաւահանգիստին պայթումին օրերուն:



Armenian Relief Society

Armenian Relief Society Netherlands Shoushi Chapter-at-Large

Netherlands Shoushi Chapter-at-Large

The ARS Netherlands (Holland) Shoushi Chapter was established on June 29, 2018. The chapter has 29 members.

The chapter's first initiative was to assign a committee to create bylaws for the newly formed chapter in accordance with ARS bylaws for chapters at large.

In 2021, the name "Shoushi" was adopted by the chapter.

On March 9, 2022 the chapter was recognized by the government of Netherlands as "Armeense Stichting voor Hulpverlening".

The chapter is still expanding and reaching out to Armenians throughout Holland in order to introduce the ARS mission and its programs to the local communities and fostering community relations including local churches and sister organizations.

During the last few years, the chapter organized events such as International Women's Day, Mother's



Պաշար Նոր Տարուայ ստեփի 10/12/2022

Day, seminars, bazaar and family gatherings. The chapter is planning on establishing a Western Armenian language program for children.

The chapter supports ARS CEB programs by raising funds for displaced Artsakh families, Christmas gifts for children of Artsakh, sponsorship of children of fallen heroes, victims of the Syrian earthquake, and the explosion in Lebanon, and the ARS Endowment Fund.

<https://armeensestichting.org/>

154|



Ծանօթացման Հանդիպում (Արմինե) 02/06/2024

PAGE SPONSORED BY ARS NETHERLANDS

ՀՕՍ ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՄԵԿՈՒՄԻ

Պատմական ակնարկ

Հայ Օգնութեան Միութեան Մեծն Բրիտանիոյ մեկուսի մասնաճիւղը հիմնադրուել է 2 Ապրիլ, 1982ին, հետեւեալ անդամուհիներու կողմէ՝ Յասմիկ Գասպարեան, Զապէլ Մալաս, Սիրան Յակոբեան, Փէրուզ Վարդանեան, Էմմա Մարգարեան, Մանուշակ Տիգրանեան, Սոնիա Պապլանեան, Էլսիկ Ազիզեան, Անի Չլպակեան:

Վարչական կազմակերպչական

Մասնաճիւղս ներկայիս ունի 79 անդամ եւ իր յատուկ Կանոնագիրը. աշխատանքները ծրագրում եւ վարում է վարչութիւնը, որը ներկայիս բաղկացած է 5 անդամներից, որոնք ընտրուում են երկամեայ Ընտրական Ընդհանուր Ժողովին՝ անդամների քուէարկութեամբ: ՀՕՄԻ բոլոր աշխատանքները տարւում են Կեդրոնական վարչութեան հայեցողութեամբ:

Յարաբերական

Մեծն Բրիտանիոյ ՀՕՄը նաեւ աջակցում է օտար բարեսիրական կազմակերպութիւններին, օրինակ՝ «Բրիտանիայի Կարմիր Խաչ»ին:

Ծրագրեր եւ գործունէութիւն

Մասնաճիւղիս վարչութիւնը յանձնառու է Կեդրոնական վարչութեան կողմից իրեն յանձնարարուած բոլոր աշխատանքներին, օգնութիւն է հասցնում՝ արցախահայերին, որբանոցներին, դպրոցներին, մանկապարտէզներին եւ ծերանոցներին, թէ Հայաստանում, Զաւախքում եւ թէ Սփիւռքում:

ՀՕՄԻ Մեծն Բրիտանիայի մասնաճիւղը

նաեւ իր անվերապահ աջակցութիւնն է բերում՝ բնական աղէտների ժամանակ, երկրաշարժի, սովի եւ նման պարագաներում, ուր որ կարիքը կայ:

Մասնաճիւղիս ձեռնարկներն են՝ հերթական անդամական ժողովներ, Ամանորի խրախճանք, հանգուցեալ ՀՕՄուհիների հոգեհանգիստ, Սուրբ Սարգիսի ճաշկերոյթ, Ծաղկազարդի ճաշկերոյթ եւ տօնավաճառ, Մայրերի օր, Ամառային զբօսանք, մասնաճիւղիս տարեդարձի տօնակատարութիւն, Ս. Ծննդեան ճաշկերոյթ, Ամանորի պարահանդէս՝ ՀՄՀՄԻ եւ Համազգայինի հետ գործակցաբար:

Կեդրոնական վարչութեան ծրագրերի մասնակցութիւն

Մասնաճիւղս ունի նաեւ «Զոհուած Հերոսներու Զաւակներ» յանձնախումբ, որը բանակցելով ՀՕՄԻ Հայաստանի եւ Կեդրոնական վարչութեան գրասենեակների հետ, երեխաների եւ ուսանողների համար գտնում է խնամակալներ եւ հաշուետու է վարչութեանը:

155



Armenian Relief Society

Armenian Relief Society Great Britain Chapter-at-Large

Great Britain Chapter-at-Large

The ARS of Great Britain Chapter-at-Large was established on April 2, 1982, and has 79 members. The chapter executive consists of 5 elected members for 2-year terms, which conducts and organizes the chapter's activities in coordination with the Central Executive Board (CEB). The chapter is actively involved in CEB programs, including sponsorships, Amanor programs, kindergartens, as well as Javakhk and Armenia projects.

The Children of Fallen Heroes Committee promotes the program for children who have lost

their parents.

The chapter works in partnership with the British Red Cross, as well as supports victims of natural disasters.

The membership actively organizes several events throughout the year such as Mother's Day, St. Sarkis and Palm Sunday celebrations, bazaars, Requiem services for ARS members, and ARS Day. The chapter jointly celebrates New Year's festivities in conjunction with Hamazkayin and Homenetmen.

Great Britain is a robust chapter supporting many ARS initiatives in Europe.

156 |



PAGE SPONSORED BY ANITA MIKAELIAN

ՀՕՍ ՅՈՐՂԱՆԱՆԻ ՄԵԿՈՒՄԻ

Պատմական ակնարկ

Յորդանանի Հայ Օգնութեան Միութիւնը, 1946էն մինչեւ օրս, հայ համայնքին ծառայելու երկար ու հպարտ պատմութիւն ունի:

Վարչական կազմակերպչական

Անցնող 15 տարիներու ընթացքին ՀՕՍը ընդարձակեց իր գործունէութիւնը, մնալով Յորդանանի հայ գաղութին կենսական մէկ մասնիկը: Նաեւ նպաստեց ՀՕՄի մեծ ընտանիքին որդեգրած հայութիւնը եւ Հայաստանը յուզող հարցերու լուծման:

Յորդանանի մէջ ՀՕՍը ունի 82 անդամներ, որոնք գործնականօրէն կը սատարեն մասնաճիւղիս վերելքին:

Յարաբերական

Իբրեւ անդամ Յորդանանի Օգնութեան Միութիւններու Լիկային, ՀՕՄի Ամմանի «Արազ» մասնաճիւղը կ'աջակցի թէ՛ հայ, եւ թէ՛ յորդանանցի հասարակութեան, բարեսիրական, մշակութային եւ ընկերային բնոյթ ունեցող նախաձեռնութիւններով:

Յորդանանի ՀՕՍը կը գործէ ընկերային հարցերու նախարարութեան հովանիին ներքեւ: Մասնաճիւղս կը մասնակցի տեղւոյն հայկական եւ յորդանանեան կազմակերպութիւններու կողմէ կազմակերպուող տարբեր միջոցառումներու: Մեր անդամները նաեւ կը ներկայացնեն ՀՕՍը յորդանանեան ազգային միջոցառումներու եւ Արքայական դիւանի կազմակերպած տօնակատարութիւններուն ընթացքին:



Ծրագիրներ եւ գործունէութիւն

Մասնաճիւղիս ընթացիկ գործունէութիւնը կը վարէ 7 անդամներէ կազմուած վարչութիւնը, որ կը կազմակերպէ տարեկան 4-5 անդամական ժողովներ: Այս հաւաքները հնարարութիւն կու տան անդամներուն՝ տեղեկանալու ՀՕՄի գործունէութեան մասին միաժամանակ կը ներկայացուին դաստիարակչական բնոյթ ունեցող դասախօսութիւններ կամ քննարկումներ:

Միութեանս առաքելութիւնը կը շարունակէ կեդրոնացած մնալ հայկական մշակոյթի եւ ժառանգութեան տարածման վրայ՝ տարբեր նախաձեռնութիւններու միջոցով, պահպանելու համար հայկական հարուստ աւանդութիւնները: Հայ Օգնութեան Միութիւնը տարուան ընթացքին կը կազմակերպէ քանի մը հայկական եւ միջազգային տօնակատարութիւններու առնչուող միջոցառումներ, ինչպէս Համբարձում, Ս. Մարիամ Աստուածածնի Վերափոխում, Ամանոր, Մայրերու եւ Կանանց տօն: Այս տօնակատարութիւններէն իրաքանչիւրը հարթակ կը ստեղծէ հայ համայնքին համախմբուելու եւ տօնելու հայոց մշակոյթը:

ՀՕՄի կազմակերպած ամենակարեւոր ձեռ-

նարկը տարեկան սոճավաճառն է, ուր կը ցուցադրուին եւ կը վաճառուին հայկական ուտելիքներ ու ձեռագործներ, որոնք պատրաստուած կ'ըլլան անդամներու կողմէ: Այս միջոցառումը հասութեամբ ձեռնարկ ըլլալու կողքին, կը ծառայէ իբրեւ հայկական մշակոյթի եւ ժառանգութեան ցուցադրութիւն եւ տարածում, ինչպէս հայ այնպէս ալ Յորդանանի ժողովուրդը կազմող տարբեր համայնքներու մօտ:

2006էն մինչեւ 2018 թուականը ՀՕՄի պարախումբը հայկական ասանդական պարերու կատարումով մասնակցեցաւ տեղական մշակութային միջոցառումներու: Պարախումբը մեծ դեր ունեցաւ պարի եւ երաժշտութեան միջոցով հայկական հարուստ մշակոյթը տեսանելի դարձնելու եւ տարածելու գործին մէջ:

Մասնաճիւղիս կարեւորագոյն պարտականութիւններէն մէկն է հայ ընտանիքներու ասանդական պարէնային փաթեթներու կամ նիթական օգնութեան բաշխումը, մեղմացնելու համար ծանր նիթական ճնշումներու տակ յայտնուած մեր հայրենակիցներու վիճակը: Աւելին, ՀՕՄը կը տրամադրէ կրթաթոշակներ հայ ուսանողներու, հնարատրութիւն տալով

անոնց ուսումը շարունակելով ունենալու ինքնաբաւ իրավիճակ:

Մասնաճիւղս նաեւ աջակցութիւն կը ցուցաբերէ հայ գաղութի անդամներուն, որոնք բժշկական խնամքի կարիք ունին: ՀՕՄի վարչութիւնը նաեւ տնային այցելութիւններով կ'օժանդակէ հայ ընտանիքներու, որոնք դժուար կացութիւններու մատնուած են:

ՀՕՄը նիթապէս կ'աջակցէր Ամմանի Հայկական վարժարանին՝ առանցքային դեր ունենալով անոր գործունէութեան մէջ մինչեւ անոր փակումը 2019ին:

«Արագ» մասնաճիւղս կը մասնակցի Հայոց Ցեղասպանութեան ռզեկոզման տարեկան միջոցառումներուն, Ապրիլ 24ի պատմական նշանակութիւնը պարզելու եւ ընդմիշտ վառ պահելու թէ՛ հայերու եւ թէ՛ արաբներու զիտակցութեան մէջ:

ՀՕՄը, համագործակցելով տեղական այլ հայկական կազմակերպութիւններու հետ, ամէն տարի կը կազմակերպէ ընդունելութիւն՝ պատուելու համար երկրորդական դպրոցներու եւ համալսարաններու շրջանաւարտները՝ նշելով անոնց ակադեմական նուաճումները:

Կեդրոնական վարչութեան ծրագիրներու մասնակցութիւն

Միջազգային մակարդակի վրայ, Յորդանանի ՀՕՄի «Արագ» մասնաճիւղը մեր միութեան մեծ ընտանիքի անբաժանելի մաս է, որ կը գործէ ի նպաստ միութեան առաքելութեան: «Արագ» մասնաճիւղի պատուիրակները կանոնաւորապէս կը մասնակցին ՀՕՄի Պատգամաւորական ժողովին, Յորդանանի հայ համայնքի ձայնը լսելի դարձնելու համար: Մասնաճիւղը կը նպաստէ նաեւ ՀՕՄի Կեդրոնական վարչութեան կողմէ կազմակերպուած դրամահաւաքի ձեռնարկներուն, օժանդակելով անոր մարդասիրական ծրագիրներուն:



Armenian Relief Society of *Armenian Relief Society Amman-Jordan Chapter-At-Large* Amman-Jordan Chapter-At-Large

The “Araz” Amman, Jordan chapter-at-large was established in 1946 and has proudly served the community since then.

Organizational: During the last 15 years, the chapter has expanded its activities becoming an important and active organization within the community by participating in ARS global initiatives, including programs for Armenia.

A total of 82 active members continue to support chapter activities and initiatives in Jordan.

The chapter has been approved by the Secretary of Social Services of Jordan. As a member of the league of service organizations in Jordan, the “Araz” Chapter of Amman supports Armenian and local charitable, cultural and social initiatives. Chapter members participate in Jordanian events representing the Armenian culture within the Kingdom.

The chapter executive consisting of 7 members organizes activities and events throughout the year. Members are given the opportunity to learn about ARS programs, as well as participate in educational seminars and discussions of current events.

The chapter is cognizant of its special role in promoting the Armenian culture and preserving the heritage, such as organizing Ascension (Hampartsum), blessing of the grapes, New Year’s Day, Mothers’ Day and International Women’s Day.

The annual bazaar is the primary means of supporting the chapter’s activities. The members participate by preparing handmade gifts and homemade Armenian specialty foods. This annual event is well received by the local community.

The chapter’s “Araz” Dance ensemble brings the Armenian culture to life by participating with Armenian music and dance programs in local Jordanian cultural events.

One of the priorities of the chapter is organizing home visits and supporting needy families by



Dance group



The annual bazaar

distributing monthly pantry supplies to ease their daily financial burdens and providing financial assistance to those who need medical care.

The chapter provided financial support to the Armenian School in Amman, until its closure in 2019. Another initiative is supporting students with annual scholarships. The chapter annually holds a special reception in honor of new graduates.

The Araz Chapter participates in annual Armenian Genocide commemorative events during April to ensure its historical significance to the local community.

ARS CEB Programs: The chapter delegates are always present when International conventions are held, to make sure that the voice of the Jordanian membership is heard.

The chapter financially supports the global programs implemented by the ARS Central Executive Board. The chapter proudly serves the humanitarian mission of the ARS.

ՀՕՍ ՊԵԼՃԻՔԱՅԻ «ԱՐԱԳ» ՄԵԿՈՒՄԻ

Պատմական ակնարկ

ՀՕՍի Պելճիքայի Արագ մասնաճիղը հիմնադրուած է հոկտեմբեր, 2014 թուականին, Հայ Դատի Եւրոպայի գրասենեակի նախագահ Գասպար Կարապետեանի ջանքերով: Նշուած է Պելճիքայի Արագ մասնաճիղի հիմնադրման 10-րդ ամեակը: Մասնաճիղս համայնքին մէջ աշխոյժ գործունէութիւն կը ծաւալէ:

Վարչական կազմակերպչական

Կազմակերպութեան անդամներուն թիւը 25 է: Ունի ընկերային յանձնախումբ՝ բաղկացած 3 ընկերուհիներէ:



Յարաբերական

Մասնաճիղս համագործակցած է Եկեղեցւոյ եւ քանի մը այլ կազմակերպութիւններու ու անհատներու հետ՝ դրամահաւաքներ կազմակերպելու Հայաստան եւ Սուրիա ուղարկելու նպատակով:

Պելճիքայի ՀՕՍը աշխոյժ գործունէութիւն կը ծաւալէ համայնքի տարբեր կազմակերպութիւններուն հետ, որոնք ծանրակշիռ դեր ունին համայնքէն ներս:

Վերջերս սկսած է համատեղ աշխատանքներ վերստեղծուած ՀՄԸՄԻ Երիտասարդական Միութեան հետ, եւ իրագործած Սուրբ Սարգիս տօնը, որ մեծ արձագանգ ձգեց գաղութին մէջ:

Ծրագիրներ եւ գործունէութիւն

Մասնաճիղս կազմակերպեց հետեւեալ միջոցառումները.

2022ին մասնաճիղս մասնակցեցաւ Պրիքստելի մէջ կազմակերպուած միջազգային տարբեր երկիրներու մշակոյթներու փառատօնին՝ հայկական յուշանուէրներու եւ քարոզարտանայինքներու վաճառք կազմակերպելով:

2022ին մասնաճիղս կազմակերպեց «Իմ Յուշերի Մեղեդին» բարեգործական երեկոն՝ նուիրուած Պրիքստելի Հայ Առաքելական Եկեղեցւոյ երգեհոնահար, երգչախմբի խմբավար՝ Զուարթ Գալստեանին: Մասնաճիղս մասնակցեցաւ Զաւեմտեմ քաղաքին մէջ կազմակերպուած տօնավաճառին:

Մասնաճիղս վաճառքի հանեց ընկերուհիներուն կողմէ պատրաստուած «Տօնական զամբիւղներ» եւ գլխաւոր հովանաւոր Լիւմիլա Աբրահամեանի եւ Նորիկ Գաբրիէլեանի



կողմէ նուիրուած գինիներ եւ զովացուցիչ ըմպելիքներ:

2022ին կայացաւ դրամահաւաք «Արեւային Արցախ» ծրագրի համար: 2023ին կազմակերպուեցաւ «Արցախն է կանչում» բարեգործական միջոցառումը՝ Հայ Դատի, ՀՅԴԻ եւ գաղութին մէջ գործող շարք մը կազմակերպութիւններու աջակցութեամբ: 2023ին կազմակերպուեցաւ «Սիրոյ ժպիտներ Գիւմրիից» բարեգործական երեկոն :

Մասնաճիւղը ստեղծած է «Պահենք եւ պահպանենք մեր մշակոյթը» շարքը որուն ծիրէն ներս կազմակերպած է բարեգործական շարք մը ձեռնարկներ՝ Բարեկենդան, Ջան Կիլում, Էրեբունի -Երեւան, Հարիսայի տօնը (Մուսա լերան 40 օրուան նուիրուած), Ծաղկազարդ, Միջինք եւ այլն:

Մասնաճիւղս յատկապէս մեծ աշխատանք

տարած է արցախահայութեան համար՝ մասնակցելով ՀՕՄԻ արցախահայութեան համար ստեղծուած շարք մը ծրագիրներուն: Այս աշխատանքին իր մասնակցութեան համար՝ ՀՕՄԻ Պելճիքայի մասնաճիւղը Պելճիքայի համայնքի Կոմիտէի կողմէ արժանացաւ շնորհակալագրի :

Կեդրոնական վարչութեան ծրագիրներու մասնակցութիւն

Մասնաճիւղս իր ներդրումն ունեցած է նաեւ ՀՕՄԻ հետեւեալ համահայկական ծրագիրներուն՝ «Զոհուած ազատամարտիկներու զաւակներ», «Անմիջական օգնութիւն Արցախին», «Արեւային Արցախ», Սուրիոյ երկրաշարժին պատճառով Սուրիահայութեան Օժանդակութեան ծրագիր:

Armenian Relief Society

Armenian Relief Society Belgium Araz Chapter-At-Large

Belgium Araz Chapter-At-Large

The ARS Belgium Araz Chapter-At-Large was established in Brussels, Belgium in October 2014. Kasbar Karabetian was instrumental in initiating the chapter. The chapter celebrated its 10th anniversary in 2024 and continues to be active in the community with a 25 members.

The chapter coordinates fundraising events with local churches and charitable organizations in support of programs in Armenia/Artsakh and Syria following the earthquake. In addition, the chapter co-organizes events with the Homenetmen youth.

Activities: In 2022, the chapter participated in the Brussels International Festival by displaying Armenian handcrafts and homemade delicacies. The chapter also participated in the Zaventem Christmas Market, selling gift baskets with bottles of wine and refreshments. A fundraiser was also held in support of the Artsakh Solar Panel project.

The chapter organized a concert, “Eem

hoosheree megheteen” in honor of conductor Zvart Kalousdian.

The Araz chapter was recognized by the local Gomideh for raising funds for ARS CEB programs for the people of Artsakh, and in 2023, participated, in the “Artsakh is calling us” fundraiser in conjunction with community organizations.

In addition, a fundraiser was held in support of the Gyumri “Love Smiles from Gyumri” project.

In support of Armenian culture, the chapter organized a series of holiday events such as Paregentan (Mardi Gras), Mid Lent, Palm Sunday, St. Sarkis Day and Kachverats commemorating the 40 Days of Musa Dagh.

The chapter has also contributed to other ARS international programs such as sponsorships for Children of Fallen Heroes and immediate assistance for displaced Artsakh families.

The Araz Chapter-at-large, although small in numbers, strives to reach those most in need.



PAGE SPONSORED BY ARS BELGIUM

ՀՕՄ ԶԱՒԱԽՔԻ ՄԵԿՈՒՄԻ

Պատմական ակնարկ-

Ջառախքի մեկուսի մասնաճիւղը ստեղծուել է 2001ին, Ախալցխայում, Վրաստանում:

Միաուրր գործունէութիւն է ծաւալում Զառախքի, Ախալցխայի, Ախալքալաքի, Նինոծմինտայի եւ Ծալկայի շրջաններում, ինչպէս նաեւ Պաթումում: ՀՕՄուհիների ընդհանուր թիւր 103 է:

Ծրագրեր եւ գործունէութիւն

Զառախքի մեկուսի մասնաճիւղի ներքոյ գործում են Ախալցխայի, Ախալքալաքի եւ Նինոծմինտայի Երիտասարդական կրթամշակութային կեդրոնները, որոնք վերաբացվել են համապատասխանաբար 2006, 2007 եւ 2010 թուականներին: Այս կեդրոններ յաճախում են 8-18 տարեկանները, որոնց համար կազմակերպուող դասընթացներն ու հայրենասիրական բազմաբնոյթ միջոցառումները ուղղուած են հայորդիներին դաստիարակելու հայրենասիրական ոգով: Անցկացւում են արտադպրոցական դասընթացներ:

2021 թուականից, համազործակցութեամբ ՀՕՄի հետ Ախալքալաքի Երիտասարդական կեդրոնում գործում է Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կեդրոնը, որի ուսանողների թիւր հասնում է 240ի:

Զառախքի մեկուսի մասնաճիւղը ծրագրեր է իրականացնում երեք ուղղութիւններով.

1. Առողջապահական – տարիներ առաջ Ախալքալաքում գործել է ախտորոշիչ եւ ատամնաբուժական կեդրոն, որտեղ անվճար բուժզննում էին անցնում մեկուսիի կողմից ներկայացուող անձինք: ՀՕՄի Ախուրեանի Մօր ու մանկան առողջութեան կեդրոն բուժզննման, բուժման ու ծննդաբերութեան

նպատակով, մեկուսիի վարչութիւնը յատուկ ուղեգրով ուղարկում է ջառախքի բազմաթիւ կանանց՝ կարիքաւոր, բազմազաւակ ընտանիքներից:

2. Ընկերային - այս ոլորտում իրականացւում են.

ա. «Օժանդակութիւն բազմազաւակ ընտանիքներին» ամենամեայ ծրագիրը: Օժանդակութիւն է կազմակերպւում կարիքաւոր ընտանիքներին,

բ. «Օժանդակութիւն ծնողազուրկ հիւանդ երեխաներին» ծրագիրն իրականացւում է Ամանորի շրջանակներում: Այս ծրագրերից տարածաշրջանում օգտւում են տարեկան մօտ 500 ընտանիքներ: Նրանց յատկացւում են ընտանիքի կողմից ներկայացուած ցանկով հագուստ, առաջին անհրաժեշտութեան մաքրողական պիտոյք եւ մթերք: Ամէն տարի Ամանորին Ախալքալաքի եւ Նինոծմինտայի ծննդատան նորածիններին, մայրիկներին բաժանւում են ամանորեայ նուէրներ, իսկ հիւանդանոցների մանկական բաժանմունքում





բուժուղղներին տրուում են ամանորեայ նուէրներ ու մթերք:

գ. «Ճաշի օր» ծրագիրը կազմակերպուել է մէկ անգամ Ախալքալաքում եւ Ախալցխայում: Ծրագրում ընդգրկուած էին միայնակներ, հիւանդ մեծահասակներ, այս ծրագիրը ցանկալի է, որ դառնայ ամենամեայ:

3. Կրթամշակութային-ա) Հայոց պատմութեան եւ ստեղծագործական շարադրութեան մրցոյթներ անցկացուել են 2005 թուականից մինչեւ 2015 թուականը: Քանի որ Վրաստանի հայկական դպրոցներում Հայոց պատմութիւն չի դասաւանդուում, այս ծրագիրը պէտք է վերսկսուի: 2023 թուականի Մայիս-Յունիս ամիսներին իրականացուեց «Ճանաչիր երկիրը քո եւ ժողովուրդը քո» խորագրով մրցոյթ քանավէճը:

բ) Ասմունքի փառատօն կազմակերպուել է երեք անգամ, որը եւս, հնարաւորութեան դէպքում, կարելի է վերսկսել:

գ) Մտաւորականների մեծարման երեկոնները կազմակերպուել են մինչեւ 2015 թուականը, որի նպատակն էր մեծարել, արժեւորել Զաւախք տարածաշրջանի մտաւորականներին մանկավարժներ, բժիշկներ, մշակոյթի եւ մարզական ներկայացուցիչներ, որոնց նկատմամբ պետական մակարդակով մեծարում չէր եղել:

դ) Հաւաքական մկրտութիւններ կազմա-

կերպուել են կարիքաւոր ընտանիքների, ծնողազուրկ երեխաների համար: Զաւախքում առաջին հաւաքական մկրտութիւնը կազմակերպուել է Զաւախքի ՀՕՄԻ կողմից, 2005ի հոկտեմբերի 17ին Ախալքալաքի շրջանի Կարծախ գիւղի եկեղեցում, որի դռները փակ են եղել 35 տարի շարունակ: Մկրտուել է 103 երեխայ, ստացել ոսկեայ խաչեր ու նուէրներ: Այս ծրագիրը անցկացուել է Ախալցխայում, Նինոծմինտայում, Ախալքալաքում եւ Բաթումում երկուքական անգամ: Սա եւս պահանջուած ծրագիր է:

ե) 2012 թուականից սկսած Զաւախքի ՀՕՄԻ կողմից կազմակերպուում է ԶԱԻԱԽՔ ՃԱՄԲԱԲ ծրագիրը, որն անցկացուում է Ախալցխայում, Ախալքալաքում, Նինոծմինտայում եւ Ծալկայի շրջանի տարբեր գիւղերում: Իւրաքանչիւր տարուան ճամբարին մասնակցում է 500-550 երեխայ՝ չորս շրջաններից:

Զաւախքահայերը շարունակում են բախուել բազմաթիւ մարտահրաւերների՝ պահպանելու իրենց մշակութային ինքնութիւնը, եւ ՀՕՄը վճռականօրէն տրամադրուած է նպաստելու տարածաշրջանի բնակչութեան՝ երիտասարդների եւ տարեցների կեանքի որակի բարելամանը:

Armenian Relief Society

Armenian Relief Society Javakhk Chapter-At-Large

Javakhk Chapter-At-Large

Javakhk Chapter-At-Large was established in Akaltskha, Georgia in 2001. The ARS activities in the Javakhk (Samtskhe-Javakheti) in Georgia's southern region expanded from Akaltskha to Akhalkalak, Ninotsminda and Tsalka (Dzalga), as well as Batumi, with 103 members. Funding for all Javakhk activities are provided through the world-wide ARS regions.

Three youth centers are located in Akaltskha, Akhalkalak and Ninotsminda, where youth between the ages of 8 to 18 participate in educational and cultural programs. They were inaugurated in 2006, 2007 and 2010 respectively. The centers provide Armenian and English language, Armenian history, needlework and painting, singing, dancing and theatrical, as well as chess courses.

Since 2021, a TUMO Center was established in Akhalkalak thanks to the cooperation between TUMO and the ARS. More than 240 teenagers benefit from the TUMO computer technology and design center.

Initially, health and dental clinics were funded in Javakhk to help with the clinical needs of the impoverished population, however, the focus of the chapter has shifted to group baptismal ceremonies,



|165

youth cultural competitions and providing food assistance to families with numerous children.

The chapter organizes Christmas parties and provides other material assistance for children who have lost their parents, as well as humanitarian assistance to the Javakhk communities, with special attention to newborns and elderly.

Since 2015, history and essay writing contests, as well as poetry competitions were discontinued, as such, subject classes are not authorized to be taught in public schools.

The youth program that is currently held is the summer day camp program, where 500-550 children participate at four campsites in Akaltskha, Akhalkalak, Ninotsminda and Tsalka.

The Javakhk Armenians continue to face many challenges to uphold their cultural identity, and the ARS is determined to promote the quality of life for the region's population, young and old.

ՀՕՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Պատմական ակնարկ

ՀՕՄ Մոսկուայի մեկուսի կառույցը հիմնուել է 1994 թուականին: Քանի մը տարի աշխոյժ աշխատանքից յետոյ 2006ին պաշտօնապէս ճանաչուել է՝ որպէս «Ռուսաստանի Հայ Կանանց Միութիւն»: 2020ին ՀՕՄի Կեդրոնական վարչութեան ջանքերով դարձել է աշխարհասփիռ հայ կանանց բարեսիրական ու բարեգործական կազմակերպութեան՝ Հայ Օգնութեան միութեան մեծ ընտանիքի մի մասնիկը:

Վարչական կազմակերպչական

Մոսկուայի հոմուհիների թիւն ու գործունէութեան շրջանակը օրեցօր աւելանում է: Ներկայիս ունենք 32 անդամ:

Յարաբերական

Այս ընթացքում մեկուսին պատիւ է ունեցել Մոսկուայում հիւրընկալել ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ ընկեր Յակոբ Տէր Խաչատուրեանին, ՀՅԴ Բիւրոյի քաղաքական ներկայացուցիչ ընկեր Արմէն Ռուստամեանին եւ ՀՕՄ

Կեդրոնական վարչութեան անդամ ընկերուհի Համեստ Սասունեանին:

2021ին Մոսկուայում Հայաստանի դեսպանութեան մշակոյթի կեդրոնում՝ «Armenian Lane» կազմակերպութեան հետ համատեղ բարեգործական երեկոյ անցկացրեցինք՝ ի աջակցութիւն 2020 թուականի Արցախեան պատերազմում զոհուած զինուորների ընտանիքներին:

Ծրագրեր եւ գործունէութիւն

2020 թուականի օգոստոսին Տաուշի շրջանում հայ-ատրպէյճանական սահմանին տեղի ունեցած միջադէպի ժամանակ հերոսաբար զոհուած վեց զինուորականների ընտանիքներին յատկացրեցինք գումար:

2020 թուականի մարտ-ապրիլ Համավարակի դէմ պայքարի շրջանակներում Ռուսաստանի ողջ տարածքում գործարկուեց անցազրային ռեժիմ, որի հետեանքով արտագնայ աշխատանքի մեկնած հարիւրաւոր հայեր մնացին առանց աշխատանքի, բնակութեան վայրի եւ սնունդի:

Հայաստանի հետ ինչպէս օգային, այնպէս էլ ցամաքային ուղեւորափոխադրումների արգելումը նրանցից շատերին դարձրեց անօթեւան եւ անօգնական: Հայ օգնութեան միութեան Մոսկուայի կառույցի, ՀՅԴ Կոմիտէի, եւ Հայ Դատի Մոսկուայի գրասենեակի համատեղ ջանքերով հիմնադրուեց «Ապաւէն» բարեսիրական շարժումը, որը զբաղւում էր չորս հիմնական ուղղութիւններով. անօթեւան մնացած հայրենակիցների յայտնաբերում եւ ժամանակաւոր կացարանով ու սննդով ապահովում, ինչի արդիւնքում աւելի քան 50 քաղաքացիներ իրենց գտնուելու վայրից տեղափոխուել են հիւրանոցներ, կացարան է տրամադրուել նաեւ մեր գրասենեակում՝ ներառելով դեսպանատան ՀՀ փոխադրման համապատասխան



166 |

PAGE SPONSORED BY ARS WESTERN USA ANAHID CHAPTER

ցուցակներում, սննդի խնդիրներ ունեցող հայ ընտանիքներին առաջնային օգտագործման սննդամթերքի մատակարարում: Ծրագրի շրջանակում աւելի քան 400 ընտանիք ստացել է մարդասիրական աջակցութիւն՝ սննդի, շորերի եւ դեղորայքի տեսքով, ինչպէս Մոսկուայում, այնպէս էլ մերձնուսկովեան քաղաքներում: Մեր միջոցներով իրականացրել ենք ընկերային անապահով հայրենակիցներին անվճար տեղափոխութիւն Հայաստան:

Համավարակի ծանր օրերին՝ յունիսմէկեան անակնկալ այցով գտնուեցինք Սպիտակի մանկավարժա-հոգեբանական կեդրոնում, շնորհաւորեցինք կեդրոնի սաներին, մեր հայ երեխաներին իրենց տօնի կապակցութեամբ, փոխանցեցինք նուէրներ:

2021ին, «Ամանոր» ծրագրի շրջանակներում՝ հայազգի խնամեալներ ունեցող տարբեր ծերանոցների, մանկատների, ինչպէս նաեւ կարիքաւոր խաւի երեխաներին, ընտանիքներին փոխանցուել են Ամանորեայ նուէրներ:

2023ի դեկտեմբերին Հայաստան ենք ուղարկել 300 քիլոկրամ մարդասիրական օգնութիւն՝ իրենց պատմական հայրենիքէն բռնազաղթած արցախցիների համար:

Հօմուհիները Ռուսաստանում դարձել են մայր ու քոյր՝ պատերազմի օրերին զոհուած ու վիրաւոր զինուորների ընտանիքներին: Շատ արագ Մոսկուայի հայուհի հօմուհիներով կազմակերպեցինք չարաբաստիկ քառասունչորսօրեայ պատերազմում զոհուած, վիրաւոր տղաների ընտանիքներին օգնելու մի շարք բարեգործական, խոնարհման ու երախտիքի միջոցառումներ: Որբախնամ ծրագրերի ու ծնողազուրկ երեխաներին օգնելու նպատակով կազմակերպել ենք մի շարք բարեգործական երեկոներ:

2022ին զոհուած զինուորների երեխաներին ուրախացրեցինք ամանորեայ նուէրներով:

2024ի մայիս 28ին ՀՕՄ Մոսկուայի մեկուսին, Մոսկուայի ԺՏՆ ցուցահանդէսի «Հայաստան» տաղաւարում կազմակերպել էր Ժենգեալով հաց պատրաստելու վարպետութեան դաս եւ համտես-վաճառք: Ամէն տարի մայիսին Արցախում՝ Մարտակերտի շրջանի

Հաթերք գիւղում, մեծ շուքով նշում էին արցախեան Ժենգեալով հացի տօնը:

2024ի մայիս 22ին՝ նաեւ մեր ջանքերով, Մոսկուայի միջազգային երաժշտութեան տանը տեղի ունեցաւ յոբելենական համերգ՝ նրւիրուած մեր հայրենակից, աշխարհահռչակ երգիչ Շարլ Ազնաւուրի ծննդեան օրուան: Յոբելենական համերգը կազմակերպուել էր «Ժառանգութիւն եւ առաջընթաց» հիմնադրամի, Առնօ Բաբաջանեանի յիշատակի հիմնադրամի եւ ՀՕՄ Ռուսաստանի կառոյցի կողմից: Մասնակիցների կողմից յատուկ շեշտուեց միջոցառմանը ՀՕՄի ներկայութիւնը:

2024ի թուականի հոկտեմբերի 5ին, զուտ Հայ օգնութեան Միութեան Մոսկուայի կառոյցի նախաձեռնութեամբ, տեղի ունեցաւ մեծ համերգ, նուիրուած մեծ հայ Շարլ Ազնաւուրի ծննդեան 100 ամեակին:

Կատարում է ամէն ինչ, որպէսզի հայը, հայ մշակոյթը, հայ կենցաղը յաւուր պատշաճի ներկայացուի Ռուսաստանում:

ՀՕՄի «Հայ Սիրտ» պարբերաթերթը, որը 2024ին բոլորեց իր 85ամեակը, իր եզակի դերն է խաղացել հայ կնոջ զարգացման եւ ծաւալումի մէջ: 1939 թուականի իր առաջին համարում «Հայ Սիրտ»ը մատնանշեց Հայ օգնութեան միութեան ուղենիշները, յորդորելով պատրաստել հայ գիտակից մայրեր, զարկ տալ նոր սերունդի հայեցի դաստիարակութեանը, առողջ պահել հայ ընտանիքը, հայ կնոջը մղել հաւաքական աշխատանքի եւ նրա մէջ զարգացնել ձեռներեցութեան ոգին:

Բարեգործութիւնը եւ մարդասիրութիւնը ՀՕՄի առաջնահերթ ուղենիշերն են: Համոզուած ենք, որ մենք շարունակելու ենք 115-ամեայ նուիրումով աշխատել յանուն Հայաստանի եւ հայ ժողովրդի: ՀՕՄ Մոսկուայի մեկուսի կառոյցի անունից շնորհաւորում ենք ՀՕՄ 115 ամեակի առիթով, եւ մաղթում բոլորիս ընտանեկան ջերմութիւն ու երջանկութիւն, առողջութիւն, աշխատանքային ու անձնական յաջողութիւններ:

ARS Armenian Women's Society

ARG Armenian Women's Society of Russia

of Russia

The ARS Moscow Chapter at Large was initially established in 1994 in Russia. After only a few of years of active participation, it was revitalized in 2006 and formally recognized as the “Armenian Women’s Society of Russia”. Subsequently, with concerted efforts of the CEB, it was re-activated in 2020 with 32 members.

During the Covid pandemic, the chapter assisted 50 seasonal workers by providing food and shelter. They were provided transportation back to Armenia, after restrictions were lifted. In addition, the chapter assisted 400 families with food assistance during the pandemic.

The chapter participated in the Amanor program by providing Christmas gifts to needy children and the elderly, as well as to the children of fallen heroes. The chapter provided emergency food provisions to displaced Artsakh families.

On May 22 and October 5, 2024, the chapter participated in organizing tribute concerts in memory of the late French Armenian singer Charles Aznavour.

On May 28, 2024, the chapter participated at a local cultural festival by making traditional “Jengelov hats”, an Artsakh specialty bread.

The chapter strives to encourage new members promoting important principles such as family, women’s volunteer roles within the community, in addition to promoting Armenian education and cultural experiences for the new generation.

The chapter is cognizant of the 85th anniversary of the Hai Sird and the role it has had in empowering Armenian women. The Moscow Chapter at Large is committed to the humanitarian mission of the ARS.



ՀՕՍ ՍԹՈՔՀՈԼՄԻ ՄԵԿՈՒՄԻ (ՇՈՒԷՏ)

Պատմական Ակնարկ

Մթոքհոլմի Հայ Օգնության Միությունը հիմնուած է 1993ին: Ինքնավար ոչ կառավարական եւ ոչ դաւանական մարդասիրական կազմակերպութիւն է, որ կը ձգտի պահպանել հայութեան մշակութային ինքնությունը:

Վարչական կազմակերպչական

Շուէտի մեջ մեկուսիի ներկայիս անդամներու թիւն է 50:

Յարաբերական

Շուէտի մեջ գործող 21 հայ միութիւններու համադրող մարմինն է մեջ ՀՕՍը ունի 2 ներկայացուցիչ:

Ծրագիրներ եւ գործունէութիւն

Վարչական կազմը կը գումարէ ամսական ժողովներ: Կատարած է ձեռնարկներ ինչպէս՝ միջինք, մայրերու օր, ծննդեան եւ նոր տարուան խրախճանք, տօնավաճառ՝ ամանորի առիթով, նախաճաշ, դասախօսական շարք եւ այլն: Ձեռնարկները կը կատարուին Հայ Տուն ակումբին մեջ: ՄՀՕՄԻ աստենապետուհին կը մասնակցի ՀՕՍի Կեդրոնական Վարչութեան առցանց խորհրդակցական ժողովին:



169

Armenian Relief Society

Armenian Relief Society Stockholm Chapter Stockholm Chapter, Sweden

The ARS Stockholm Chapter-at-large was established in 1993 in Sweden. The chapter has 50 members.

The chapter executive meets regularly and organizes events such as breakfasts, Mid-Lent luncheons, Mother’s Day, Christmas and New Year’s festivities, as well as lectures and bazaars, which are

all held at the “Hai Doon” community center.

The Stockholm chapter is represented in a task force of 21 Armenian organizations in Sweden. The chapter participates in CEB-sponsored meetings and conferences.

The chapter supports ARS humanitarian service programs.

ՀՕՍ ՍՈՏԵՐԹԱԼԻՈՅ «ԱԽԹԱՍԱՐ» ՄԵԿՈՒՄԻ (ՇՈՒԷՏ)

Պատմական Ակնարկ



ՕՍ Շուշտի Սոտերթալիոյ «Ախթասար» միաւորը ստեղծուեցաւ 2018ին, ՀՅԴ Հիւսիսեան Առանձնակի կոմիտէութեան ջանքերով:

Սկզբնական շրջանին յանձնախումբի դրութիւն առաւ, շատ ժամանակ չանցած անդամներու թիւի աճին շնորհիւ մասնաճիւղի վերածուեցաւ:

Վարչական կազմակերպչական

Ապրիլ 2018ին միաւորը ունեցաւ իր նորանըջանակ վարչութիւնը՝ բաղկացած 9 անդամներէ, որ մէկ տարուան կեանք ունեցաւ, ապա ընտրուեցաւ նոր վարչութիւն:

Սեպտեմբեր 2018ին, ներկայութեամբ ՀՕՄԻ Կեդրոնական Վարչութեան լիազօր ներկայացուցիչին, խումբ մը ՀՕՄուհիներ ուխտը կատարեցին այս նուիրական Սուրբ գործին:

Միաւորս ունի 45 անդամներ եւ երկու յանձնախումբեր: Տեղին է նշել, որ 2020էն մինչեւ 2023 իր գործունէութիւնը դադարեցուց՝ քորոնայի համաճարակին պատճառով:

Ծրագիրներ եւ գործունէութիւն

Յանձնախումբեր

1. Դաստիարակչական: Յանձնախումբը կազմակերպեց ձեռնարկներ եւ դասախօսութիւններ:

- 28 Մայիս, 2018ին Հայաստանի Առաջին հանրապետութեան տօնին առիթով տօնակատարութիւն, գեղարուեստական ճոխ յայտագրով:

- 1 Դեկտեմբեր, 2019ին դասախօսութիւն

նուիրուած Հայոց Յեղասպանութեան նուիրուած Թանէր Աքչամի «Ամօթալի արարք, սպաննելու հրաման» խորագրով գիրքին: Դասախօսութիւնը արաբերէն լեզուով ներկայացուց Մելքոն Մելքոն:

- 2 Նոյեմբեր, 2020ին, դասախօսութիւն՝ «Արցախի հիմնահարցը» խորագրով, նուիրուած Արցախի քառօրեայ պատերազմին, աղբիւր ունենալով անգլիական արխիւներ, դասախօս Մելքոն Մելքոն: դասախօսութեան ներկայէին հայեր եւ շուէտացիներ:

- 5 Մայիս, 2024-»ին, դասախօսական երեկոյ՝ նուիրուած հայոց Մեծ Եղեռնի 109 ամեակին, դասախօս՝ Տէր Վաղարշ Քհն. Իսախանեան:

2. Ընկերային: Ընկերային յանձնախումբի ժրաջան անդամները մեծ աշխատանք տարին, կազմակերպեցին խրախուսանքներ՝ նոր տարուան, Մայրերու օրուան, պարահանդէս՝ Տիգրանակերտի տոհմիկ օրուան, ձեռնարկեցին նախաճաշ, նախընթրիք, դաշտապտոյտ, ճաշկերոյթ Ծաղկազարդի տօնի առթիւ եւ Հ. Հանրապետութեան վերանկախութեան 33 ամեակի առիթով:

Յաճախ պատրաստեցին ճաշեր ու քաղցրաւենիներ եւ վաճառեցին, իսկ հասոյթը ՀՅԴ Հիւսիսեան Առանձնակի կոմիտէութեան միջոցաւ ուղարկուեցաւ Արցախ, ինչպէս նաեւ նիւթական օժանդակութիւններ կատարուեցան Գամրջիի Արցախ մասնաճիւղին, Լիբանանի ԼՕԽին եւ Հայաստանի ՀՕՄին:

Սոտերթալիոյ մէջ ունինք գաղութի միակ հայկական կեդրոնը: Կեդրոնին վարձքի ապահովման համար ամսական դրութեամբ միաւորս կը մասնակցի որոշակի գումարով, ինչպէս բոլոր քոյր միութիւնները:

Armenian Relief Society

Armenian Relief Society Akhtamar Chapter-at-Large

Akhtamar Chapter-at-Large, Sodertalje, Sweden



|171

The ARS Akhtamar Chapter-at-large was established in 2018 in Sodertalje, Sweden. Initially, it was more of a committee, however, when membership grew, the establishment of a chapter became a necessity.

In April 2018, the chapter executive consisting of 9 members were appointed for one year, afterwards the executive was elected.

In September 2018, a group of newly joined ARS members took their oaths under ARS CEB liaison Liza Avakian's leadership.

The chapter has 45 members, and functions with two committees. However, from 2020 to 2023, the chapter was inactive due to the coronavirus pandemic.

The Educational Committee organizes events and lectures. On May 28, 2018, the committee organized a cultural program celebrating Armenia's first republic.

Programs dedicated to the Armenian Genocide

were held in 2019 and 2020, including a presentation of the book, "Shameful Act," by Taner Akcam.

On November 2, 2020, a lecture about the "Artsakh Question and the 4-day war" was presented to community members.

The Social Committee works diligently to put together celebratory and cultural events, such as New Year's and Mothers' Day, Dikranagerd Folkloric Cultural Day, also organizes breakfasts, lunches, picnics, and Palm Sunday lunches, and Armenia's Independence Days.

The proceeds from these events are donated to ARS programs in Artsakh, Syria, Lebanon, and Armenia.

The chapter participates in the operational costs of the Armenian center in Sodertalje, which is the only one in Sweden.

The Akhtamar Chapter upholds the Armenian culture and the humanitarian mission of the ARS.

ՀՕՍ ՔՐՈՒՅԹԻ ՄԵԿՈՒՄԻ

Պատմական ակնարկ



ամաշխարհային ներկայ թոհու-բոհին մէջ, իր մարդասիրական ու ծառայողական բազմաբնոյթ գործունէութիւնները, 115 տարի անխափան կերպով շարունակող ՀԱՅ ՕԳ-ՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ որպէս մէկ մասնիկը՝ ՀՕՍ ՔՄՄը, անցնող 15 տարուան ընթացքին, հնարաւոր բոլոր միջոցներով եւ ամենայն բժախնդրութեամբ, ջանաց կատարել իրեն վստահուած առաքելութիւնը: Լուրջ եւ հետեւողական աշխատանքով ան կարողացաւ յաղթահարել իր դէմ ցցուած բոլոր դժուարութիւնները, շնորհիւ անխնայ ու նուիրեալ ընկերուհիներու անվերապահ աջակցութեան եւ գործնական դերակատարութեան:

Վարչական կազմակերպչական

Նկատի առած Քուէյթէն ներս ծայր առած արտագաղթի հոսքը, յաճախ մեկուսիի թրւային պատկերը տատանումներ ունեցած է: Այսուհանդերձ, գործող բոլոր վարչակազմերը ձեռնածալ չեն մնացած այս տեղաշարժին նկատմամբ, այլ ամէն ջանք ի գործ դրած են ցանկերու բիրեղացում կատարելով եւ նորագիրներ ներգրաւելով, որոնք նոր աւին ներարկած են անոր շարքերուն:

ՀՕՍ ՔՄՄը հիմնուած է ապրիլ 1995ին: Ներկայ կազմը կը հաշուէ 88 ընկերուհի: Ունի 3 յանձնախումբեր՝ ձեռարուեստ, քարոզչական եւ ընկերային, որոնք մեծ ներդրում ունին, ծրագրուած բոլոր աշխատանքներու յաջողութեան, ինչպէս նաեւ հաշուեքննիչ յանձնախումբ, որ վեց ամիսը անգամ մը կը կատարէ վարչութեան հաշուեքննութիւնը:

Յարաբերական

ՀՀ Դեսպանատան հետ գործակցաբար, ՀՕՍ ՔՄՄը հայկական ասանդական ճաշերով, ուտեստներով, տոհմիկ զգեստներով ու իրերով, պարբերաբար իր մասնակցութիւնը կը բերէ օտար շրջանակներէ ներս կազմակերպուած ցուցահանդէսներու՝ ներկայացնելով հայկական մշակոյթն ու խոհանոցը իր իւրաքանչիւր ճաշատեսակներով:

Քուէյթի Ազգային Վարժարանի տարեկան Քերմէսին, ՀՕՍ ՔՄՄը ներկայացնող քարոզչական յանձնախումբը իր յատուկ տաղաւարը կ'ունենայ, ուր մտային հաճելի խաղեր կը ներկայացնէ փոքրիկներուն:

Ծրագիրներ եւ գործունէութիւն

Տեղեկագրիս ընդգրկած ժամանակաշրջանին մէջ, իրերայաջորդ վարչական կազմերը գումարած են անդամական հերթական ժողովներ, որոնց ասարտին կազմակերպած են օգտաշատ հանդիպումներ, հիւր դասախօսներու մասնակցութեամբ, ընդլայնելու հոմուհիներուն մտահորիզոնը, որպէսզի իւրաքանչիւրը կարենայ իր լուսնայ բերել քուէյթահայ գաղութի ծաղկման ու վերելքին:

Յաճախ կը կազմակերպուին ընկերուհիներու յատուկ պարտիզագնացութիւններ, Ամանորի եւ Ս. Ծննդեան խրախճանքներ եւ ընկերային հաւաքներ:

Կը կազմակերպուին շարք մը հասութաբեր ձեռնարկներ, ինչպէս՝ տուրմի եւ զատկական կարկանդակի վաճառք, Միջինքի եւ Համբարձման տօներու հաւաքոյթներ, Մայրերու Օրուան ճաշկերոյթներ, Սիրոյ Օրուան պարանցիկ երեկոներ, հանրային նախաձեռնող հաւաքոյթներ, կանանց մարմնամարզի դասընթացքներ եւ ամանորեան տօնավաճառներ: Յիշատակութեան արժանի է «Մանկական Աշ-



Ընդհանուր ժողով

խարհ» նորաստեղծ ծրագիրը, որ կեանքի կոչուած է 1 Դեկտեմբեր 2022ին: Սոյն նախաձեռնութեան հիմնադիր վարչութիւնը իր ամբողջ կարողականութիւնը ի սպաս դրաւ, որպէսզի բաւական հրապուրիչ եւ օգտաշատ ծրագիր մը մատուցէ մանուկներուն, միեւնոյն ժամանակ մնայուն նիւթական հասոյթ ապահովէ միութեան: «Մանկական Աշխարհ»ի դասապահներուն ընթացքին, փոքրիկներուն կը հրամցուին հաճելի խաղեր՝ օգտագործելով MONTESSORI ծրագիրին հմտութիւնները: Անոնց նաեւ կը ներկայացուին պատմութիւններ, տիկնիկային թատրոն, շարժանկարներ եւ այլ հետաքրքրաշարժ յայտագրեր:

Ամանորի եւ Ս. Յարութեան տօներուն առիթով, նիւթական օժանդակութիւն կը տրամադրուի շարք մը կարիքաւոր ընտանիքներու, որոնց պարագաները բժախնդրութեամբ կը սերտուին գաղութի ղեկավար մարմիններուն հետ:

Ազգ. Վարժարանի տնօրէնութեան հետ համախորհուրդ, սաներ կ'որդեգրուին, ստանձնելով անոնց կրթաթոշակի վճարումները, մինչեւ իւրաքանչիւրին շրջանաւարտ դառնալը: Միութիւնը նաեւ կը հոգայ ամավերջի հանդէսի 2 աշակերտի ընդհանուր ծախսերը:

Պարբերաբար հիւանդ պարագաներու հա-

մար նուիրահաւաք կը կազմակերպուի, անոնց հայթայթելով ծախսալի գործողութեանց եւ դեղորայքի գումարները:

Որոշ օժանդակութիւններ կը կատարուին Քուէյթի մէջ կեցութեան խնդիր ունեցող հայորդիներու:

Քորոնայի համաճարակին ընթացքին ՀՕՄ ՔՄՄը քուէյթահայութեան նեցուկ կանգնելով, սննդակողովներ տրամադրեց շարք մը ընտանիքներու:

«ՇԱՔԷ» Պարախումբ

«Շաքէ» պարախումբը իր հիմնադրութեան օրէն մինչեւ 2016 թուական, գործեց ՀՕՄ ՔՄՄի հովանաւորութեան ներքեւ, վայելելով անոր ամբողջական հոգատարութիւնը:

2017 թուականին, Համազգայինի Քուէյթի Մեկուսի կազմի ստեղծմամբ, «Շաքէ» պարախումբը յանձնուեցաւ անոր խնամքին: Պարախումբը կը շարունակէ իր գործունէութիւնը:

Կեդրոնական վարչութեան ծրագիրներու մասնակցութիւն

Անցնող 15 տարիներու ընթացքին ՀՕՄ

ՔՄՄը իր ներկայացուցիչը ունեցած է ՀՕՄի Համահայկական Պատգամատրական ժողովներուն եւ կեդրոնական յանձնախումբերուն մէջ:

Քուէյթի շրջանը ամբողջական մասնակցութիւն ունի Կեդրոնական վարչութեան նախաձեռնած բոլոր համահայկական ծրագիրներուն, Միջին Արեւելքէն մինչեւ Հայաստան, Արցախ ու Ջաւախք: Բնական աղէտներու, երկրաշարժերու եւ պատերազմներու պատճառով օգնութեան կարիքը ունեցող մեր հայրիկներուն օգնութեան ձեռք երկարելու նպատակով, ՀՕՄ ՔՄՄը միշտ ալ պատնէշի վրայ եղած է եւ ընդառաջած բոլոր կանչերուն, ջանալով մատուցել իր լաւագոյնը:

2020 թուականին, Արցախի 44օրեայ պատերազմին, ՀՕՄը, իր համահայկական կառոյցով, օժանդակութեան ձեռք երկարեց արցախահայութեան: Այս շրջագծէն ներս, ՀՕՄ ՔՄՄը նախաձեռնեց տնական պաշարի վաճառքի, որուն հասոյթը ամբողջութեամբ փոխանցեց Կեդրոնական վարչութեան:

ՀՕՄ ՔՄՄը նաեւ իր մասնակցութիւնը բերած է՝ «Ամուր Սահման Հզօր Հայրենիք» յանձնախումբի ծրագրին, «Միքայէլ» վիրաբուժական կեդրոնի հաշմանդամ զինուորներուն

րուն օժանդակութեան ծրագրին եւ սահմանամերձ 39 դպրոցներու գրեւական պիտոյք ապահովելու ծրագրին:

Վերոնշեալ օժանդակութիւններու կողքին, ՀՕՄ ՔՄՄը իր մասնակցութիւնը կը բերէ «Որբախնամ» մնայուն ծրագրին: Նշեալ ժամանակահատուածի ընթացքին, ՀՕՄ ՔՄՄի ճամբով, մեծ թիւով որբեր հովանաւորուած են ՀՕՄուհիներու եւ համակիրներու կողմէ:

2023 թուականին, Սուրիան ցնցած աղէտալի երկրաշարժէն տուժած մեր քոյրերուն ու եղբայրներուն օգնութեան ձեռք երկարելու նպատակով, կազմակերպուեցաւ կալա ընթրիք մը, որուն հասոյթին մեծ մասը նուիրուեցաւ սուրիահայութեան:

Այս տեղեկագրին մէջ անհրաժեշտ է նշել, որ ՀՕՄ ՔՄՄ նաեւ դիմագրաւեց կարգ մը խոչընդոտներ, որոնց յաղթահարումը պահանջեց լայնախոհութիւն, համագործակցութիւն ու անշահախնդիր աշխատանք: ՀՕՄ ՔՄՄի ողջ անձնակազմը քաջ կը գիտակցի, որ Հայ Օգնութեան Միութիւնը՝ կամաւորներու այն փաղանգն է, որուն ծրագիրներու բարեյաջող ընթացքը անպայմանօրէն կ'ենթադրէ՝ միասնական աշխատանք, համատեղ ճիգ ու ջանք եւ աշխոյժ մասնակցութիւն:

174 |



Մանկական Աշխարհ

Armenian Relief Society of *Armenian Relief Society Kuwait Chapter At Large* Kuwait Chapter At Large



The ARS Kuwait Chapter at Large was established in April 1995 and currently has 88 members. The chapter organization includes needlework, education/public relations, social and auditing committees.

The chapter participates in local cultural festivals and the Armenian day school annual fundraiser by organizing fun activities for children, as well as displaying Armenian costumes and wares, and serving traditional Armenian cuisine.

The chapter executive invites guest speakers to present various current topics to ARS members, organize fields trips, and Christmas and New Year's celebrations.

The chapter organizes a variety of fundraising events such as Christmas, Mid Lent, Easter, Ascension, Mother's Day, Valentines' Day, and Breakfasts, in addition to health and wellness activities for adults, and fun activities for children ("Mangagan Ashkharh" – since December 2022).

The children's programs are based on the Montessori approach of hands-on learning with puppets, videos and storytelling.

During the Covid pandemic, the chapter distributed food packages to needy families. The chapter has a tradition of providing Christmas and Easter gifts to needy families, tuition assistance for students, in addition to providing funds for medical care to needy patients.

During the past 15 years, the chapter has participated with elected delegates to ARS International Conventions. The chapter has also supported many of the ARS CEB initiatives such as Artsakh, Armenia, Javakhk, including assistance to victims of natural disasters and wars. The assistance included sponsoring children of fallen heroes and providing school supplies to students attending schools in the border regions of Armenia.

The chapter sponsored the Shakeh Dance Ensemble until 2016, after which it was sponsored by the local Hamazakayin chapter.


The Kuwait Chapter has encountered challenges and hurdles but based on the progressive and collective approach by devoted members, it has been able to continue and thrive in accomplishing the ARS humanitarian mission with compassion, leadership, perseverance and dedication.



Ի Յիշատակ Աղերոնական Վարչութեանց Դասնույեայ Ընկերակիներուն
A Tribute in Memoriam of ARS Central Executive Board Members

ՀՕՄի անցեալի ու այսօրուան փառաւոր գոյերթին ընթացքին անուրանալի եւ անմոռանալի է դերը բոլոր այն ընկերակիներուն, որոնք թէև յաւերժի ճամբորդներ են այսօր, սակայն անոնց անշահախնդիր նրկիրումը, առաքելութիւնն ու աշխատանքը, իբրև լուսաւոր փարոս, տակաւին կ'առաջնորդեն նորահաս սերունդներու քայլերը:

Ստորև կը նշենք վերջին տասնհինգ տարիներու ընթացքին ՀՕՄի Աղերոնական Վարչութեան մէջ գործած ննջեցեալ ընկերակիներու անուանացանկը:



Throughout the glorious past and present existence of the ARS, although mere mortals, the hard work, selfless dedication, and determination of ARS members is undeniable and unforgettable. Their legacy is like a shining beacon which continues to guide the footsteps of the younger generations.

Below are the names of those who served as ARS Central Executive Board members but passed away during the past fifteen years.

176 |

<i>Name</i>	<i>Region</i>	<i>CEB Service Period</i>
Alahaydoyan Zabel	Western USA	1978-1980
Amirian Elizabeth	Eastern USA	1989-1992
Charkhoudian Arppie	Eastern USA	1954-55, 60-62, 73-75, 76-79, 80-83 & 92-98
Deyirmenjian Perouz	Eastern USA	1979-1980
Gakavian Hermine	Eastern USA	1983-1986
Giragosian Penelope	Eastern USA	1978-1980
Guroyan Grace	Eastern USA	1979-1983
Issajanian Vanouhi	Canada	1978-1980 & 1992-1998
Karakashian Meline	Eastern USA	1992-1995
Keghinian-Kohler Haygoush	Western USA	1992-1998
Keshishian Ashkhen	Western USA	1980-1986
Khachikian Vart	Eastern USA	1950-1956, 1963-1965, 1966-1969, 1983-1989
Khaligian Seta	Eastern USA	1974-1976, 1978-1980 & 1989-1995
Korkikian Marie	France	1975-1977
Madenlian Alice	Western USA	1986-1992
Markarian Jeannette	Eastern USA	1989-1992
Meymarian Anahit	Western USA	2002-2005
Minassian Maro	Eastern USA	1998-2005
Minassian Shakeh	Canada	1969-1971, 1974-1976 & 1980-1986
Papazian Arpi	Eastern USA	1950-1952, 1958-1963 & 1978-1980
Pedrosyan Alvard	Armenia	1998-2005
Sabounjian Arpine	Syria	1995-1998
Toumajanian Araxi	Eastern USA	1979-1980
Varadian Anahit	Eastern USA	1983-1989
Zindarsian Annik	Western USA	1986-1992



PAGE SPONSORED BY THE ARS OF WESTERN USA ANAHID CHAPTER IN MEMORY & HONOR OF ALL ARS MEMBERS, WHO BECAME BEACONS OF HOPE & JOY DURING THEIR LIFETIMES

LIST OF ARS CENTRAL EXECUTIVE BOARDS (2010-2025)

2008-2011

Vicky Marashlian, Maro Froundjian,
Mayda Melkonian, Mimi Parseghian,
Shakeh Basmajian, Nova Hindoyan,
Rosie Bedrossian, Ani Minassian,
Vera Tavitian, Graciela Kevorkian,
Zepure E. Reisian

2011- 2015

Vicky Marashlian, Nairy Shahinian,
Pauline Getzoyan, Caroline Chamavonian,
Rosie Bedrossian, Annie Kechichian,
Sonia Akellian, Lisa Avakian,
Graciela Kevorkian, Zepure E. Reisian,
Alesya Bejanyan

2015- 2019

Caroline Chamavonian, Nyree Derderian,
Rita Hintlian, Silva Kouyoumdjian-Takvorian,
Sonia Akellian, Lisa Avakian,
Alesya Bejanyan, Varsenig Sarkissian,
Maral Matossian, Anna Der Hagopian,
Nelly Vekillian

2019- 2023

Nyree Derderian, Mayda Melkonian
Maral Matossian, Silva Takvorian
Arousyak Melkonian, Taline Mkrtschjan
Arminee Karabetian, Lisa Gillibert
Nelly Vekilian, Hamesdouhi Beugekian
Nora Sevagian

2023 - 2027

Arousyak Melkonian, Talin Daghljan,
Nayiri Balanian, Annie Kechichian,
Irma Kassabian, Zharmen Mirzakhanyan,
Arminee Karabetian, Zoya Qocharyan,
Siran Ambarjian, Lisa Gillibert,
Nora Sevagian

|177

ՀՕՄԻ ԼՈՅՍԸ

ՊՕՄԻ 115-ամեակին նուիրուած

Խօսք եւ Երաժշտութիւն՝ Ալին Մոնճեան
Գործիքաւորում՝ «Control Engineering»
Խմբաւորում, Խառնարկում եւ Վերջնականացում՝
Անի Մոնճեան-Սկրոտիչեան



178 |

Դարաւոր սէրով, նուիրեալ ոգով,
Մենք բացինք լուսաւոր ճամբայ,
Յոյսի ճրագով, հաւատքի ուժով,
Հայ ազգին պարգեւեցինք լոյս ու սէր:

115 տարի՝ լոյս ու հաւատ,
115 տարի՝ սէր ու ճիգ,
ՀՕՄԻ հոգին թող միշտ ապրի,
Սերունդէ սերունդ՝ ամուր ու վառ:

ՀՕՄԻ կանչով սիրտը թնդայ,
Օգնութեան ձեռքը հասնի,
«Ժողովուրդիս հետ, ժողովուրդիս համար»,
Ցայտուն մեր միասնութիւնով:

115 տարի՝ լոյս ու հաւատ,
115 տարի՝ սէր ու ճիգ,
ՀՕՄԻ հոգին թող միշտ ապրի,
Սերունդէ սերունդ՝ ամուր ու վառ:

Հայրենիք, Սփիւռք, Արցախ աշխարհ,
ՀՕՄԻ ճրագը անվերջ շողայ,
Մեր սրտերուն մէջ՝ հաւատ ու յոյս,
Թող միշտ լուսաւորուի մեր ճամբան:

115 տարի՝ լոյս ու հաւատ,
115 տարի՝ սէր ու ճիգ,
ՀՕՄԻ հոգին թող միշտ ապրի,
Սերունդէ սերունդ՝ ամուր ու վառ:

Edgar Agnoui Remembered

Although Armenian Relief Society (ARS) members live in different corners of the world, the ARS has passionately united us for the last 115 years, allowing us to continue to serve our dispersed peoples with utmost devotion and commitment true to our vision and mission.

It all started in New York to become a global movement, reminding us that the power of purpose transcends borders. This movement was initiated by Edgar Agnoui (Khachadour Malumian, 1865-1915) in 1910, when he made his trip to both coasts of the United States and Canada.

May the noble soul of Agnoui rest in eternal peace. We celebrate his legacy not only with solemn remembrance, but through our heartfelt commitment to carry forward the torch he so bravely ignited.

Arousyak Melkonian

Առաջ անցել է, երիտասարդ, ուսանող հայրենակից: Մարտի 15-ին ձեր ձեռքերը՝ նշանակ ուխտի տ ուխտեցել է պայքարելուսն քոնին առջև, բայց մանտանող ձեր արիւնտը ժողովուրդի առջև, միշտ հաւարալ, միշտ երապել, միշտ պայգարի մէջ մնալ:

Պարճել է, երիտասարդ բարեկամներ, խմբեր կապմեցել է, ծրագիր մշակեցել է, պորբը է երկրի աղետալ ծայրերը, քեմ է է, իննաչեցել է ձեր քարաքարախը հայրենիքը ու քու է է նրան ինչ կարող է է, ինչ հնար ունէ է:



Յարգանք Էտկար Ակնունիի Յիշատակին

Թէեւ մեզմէ իւրաքանչիւրը կը բնակի աշխարհի տարբեր ծագերուն մէջ, սակայն Հայ Օգնութեան Միութիւնը մեզի պարգեւած է միասնութեան խորհմաստ նուէրը՝ այն մեծ առիթը, որ բոլորս որպէս ՀՕՄի անդամներ մէկ սրտով եւ նոյնանպատակ առաքելութեամբ ծառայենք մեր ժողովուրդին:

Այն ինչ որ սկսաւ 1910ին մէկ անհատի տեսլականով, վերածուեցաւ համընդհանուր հայկական շարժումի՝ մեզ յիշեցնելով, որ նպատակի ոյժը սահմաններ չի ճանչնար:

Խունկ եւ մոմ Ակնունիի ազնիւ հոգիին եւ յարգանք անոր անմար յիշատակին, սրտանց շարունակելով սփռել այն լոյսը, զոր վառեց քաջութեամբ:

Արուսեակ Մելքոնեան

Քալէ, հայ ժողովուրդ, հրդեհից տնորը կարծից չի վախնար:

Մերն է վարուն օրը, այս քող ինի ձեր հաւաքը...



ԺՈՂՈՎՈՒՐՆԻՍ ՀԵՏ, ԺՈՂՈՎՈՒՐՆԻՍ ՀԱՄԱՐ
WITH THE PEOPLE • FOR THE PEOPLE

